

ՖԻԼԻՊ ՎԻԴՈՎԻՆ



ԹՈՒՐՔԱԿԱՆ ԳԻՏԵՐ

ՀՏԴ 840-3 Վիդլիե  
ԳՄԴ 84.4 Ֆր  
Վ 564

Թարգմ.  
Պարզև Շահբազյան

Վիդլիե, Ֆիլիպ  
Վ 564 Թուրքական գիշեր / Ֆիլիպ Վիդլիե. –Եր.:  
Ամարաս, 2010. – 204 էջ:

ՀՏԴ 840-3 Վիդլիե  
ԳՄԴ 84.4 Ֆր

ISBN 978-99930-1-126-2

© Ֆիլիպ Վիդլիե, 2010 թ.  
© Պարզև Շահբազյան, 2010 թ.

Այս գիրքը իրատարակվում է,  
ֆրանսահայ բարերար

«Horizon-Arménie» ընկերության տնօրեն  
ԺԵՐԱՐ ՄԻԶՐԱՆՅԱՆԻ  
հովանավորությամբ

**PHILIPPE VIDELIER**

**NUIT TURQUE**

*(Récit)*

*Traduit du français et annoté par*

**Parkev Chahbazian**

*Avec une préface du Prof. Manuel Zoulalian*

*(Historien, membre de l'Académie Nationale des Sciences d'Arménie)*

EREVAN

"AMARAS"

2010

## ԱՌԱՋԱՐԱՆ

Յայոց ցեղասպանության պատմության մասին ստեղծվել է հարուստ պատմագիտական գրականություն ոչ միայն մեզ մոտ՝ Յայաստանում, այլև աշխարհի շատ երկրներում: Յատկապես այս հարցի գիտական ուսումնասիրությունը նշանակալից ավանդ ունի ֆրանսիական պատմագրության մեջ ինչպես անցյալում, այնպես էլ այժմ: Ֆրանսիական պատմագրության մոտեցումը հայոց ցեղասպանությանը դեռևս 20-րդ դարի սկզբին բացահայտել է մեծն Անատոլ Ֆրանսը, երբ ի լուր աշխարհի հայտարարեց. «Նրանց (հայերի) գործը մարդկության գործն է» /Pro Armenia, 25 մայիս 1901/:

Դեռևս Աբդուլհամիդյան ժամանակաշրջանում հայերի նկատմամբ կատարված ցեղասպանությունն իր արտացոլումն ու դատապարտումը գտել է այնպիսի աշխատություն-

Աերում, ինչպիսիք են Ֆրանսիայի Արտաքին գործերի նախարարության հրատարակած «Դեղին գիրք» խորագիրը կրող փաստաթղթերի ժողովածուն, Ժ. Կլեմանսովի առաջարանով լույս տեսած «Դայաստանի կոտորածները» վավերագրերի հավաքածուն և բազմաթիվ այլ հեղինակների, քաղաքական ականավոր գործիչների հրատարակած գրքերը: Այդ հեղինակներից հատկապես պետք է նշել Ա. Վանդալի, Ա. Լըրուա Բոլիոյի, Կարա դը Վոյի, Ժ. Ֆինոյի, Է. Լամիի, Է. Լավիսի, Շ. Սեյնարոսի և այլոց խոշոր ներդրումը հիշյալ իրադարձության պատմության գիտական ուսումնասիրության գործում:

Օտար քաղաքական գործիչներից հայոց հարցի նվիրյալներ դարձան այնպիսի հանրածանոթ դեմքեր, ինչպիսիք են Ժ. Կլեմանսոն, Ժ. Ժորեսը և այլք: Արդուլիամիդյան ժամանակաշրջանի հայոց ցեղասպանությանն անդրադան նաև մի շարք ֆրանսիացի հոգևոր գործիչներ՝ հայ ժողովողի նվիրյալ Պիեռ Կիյարը, աբբա Պիզանին, աբբա Լ. Գոնդալը, Ժ. Ապահան և ուրիշներ:

Մեր օրերում հայոց ցեղասպանության

ուսումնասիրության գործում անգնահատելի հսկայական ավանդ է մուտքել աշխարհահռչակ Իվ Տերմոնը: Եվ վերջապես, Ֆրանսիան դարձավ այն երկիրը, որը առաջիններից մեկը պետականորեն ճանաչեց հայոց ցեղասպանությունը:

Եվ ահա այս բոլորի վրա մի նոր անակնկալ ժամանակակից ֆրանսիացի հեղինակ Ֆիլիպ Վիդրլիեի «Թուրքական գիշեր» խորագրով աշխատության հմուտ ու մեծարժեք հայերեն թարգմանությունը, որ կատարել է Պարգև Շահրազյանը: Այս թարգմանությունը, ինչպես և անցյալում ֆրանսերենից կատարած նրա մյուս թարգմանությունները վկայում են, որ թարգմանչը կատարելապես տիրապետում է ֆրանսերենին և նրա արտահայտչամիջոցների բոլոր նրբերանգներին: Նույնը կարելի է ասել թարգմանչի հայերենի գերազանց իմացության մասին:

Ֆիլիպ Վիդրլիեն իր երկասիրության մեջ անդրադարձել է ինչպես Արդուլիամիդյան շրջանի, այնպես էլ Մեծ Եղեռնի պատմության առանձին հարցերին: Ֆրանսիացի հեղինակն իր աշխատությունը շարադրելիս չի ընթացել

պատմագրության ավանդական ուղիով. պահպանելով հանդերձ ժամանակագրական հաջորդականությունը՝ չի արձանագրել իր կողմից մեջքերված որևէ փաստաթղթի թվագրությունը: Նման մերողաբանությամբ հեղինակը ծգտել է առանձին դրվագների հոգեցունց պատկերներով վեր հանել թուրքերի կողմից կատարված աննախադեպ ոճրագործության բուն էությունը, իմաստը: Ըստ Երևույթին, նման գրելառը ներկայումս տարածված երևույթ է Արևմտյան Եվրոպայի բոլոր երկրներում:

Իր աշխատության մեջ Ֆիլիպ Վիդլիեն ընթերցողի առաջ մեծ վարպետությամբ բացահայտում է հայ ժողովրդի դահիճներ սուլթան Արդուլ Յամիդի, Թալաաթի, Էնվերի, Զեմալի, Շաքիրի, Յալիմի և այլոց ոճրագործ դիմապատկերը: Այս մարդասպանների՝ հայերի նկատմամբ կատարած սարսափազու ոճրագործությունները դատապարտվում են նույնիսկ առաջին համաշխարհային պատրաստում Օսմանյան կայսրության դաշնակից Կայզերական Գերմանիայի ներկայացուցիչների և, ի մասնավորի, դեսպան Բարոն ֆոն

Վանգենհայմի կողմից: Եվ բնական էր, որ հայոց Մեծ Եղեննից մազապուրծ հայ վրիժառուները հաշվեհարդար տեսնեին մարդասպան իթրիհատականներ Թալաաթի, Յալիմի, Զեմալի, Էնվերի և այլոց հետ: Այսպիսով, ֆրանսիացի հեղիճնակի խոսքերով ասած «...ավարտվում է ամոթալի ժամանակագրությունը սուլթան Արդուլ Յամիդի և այն երեք փաշանների, որոնք, նրա հետևից, մինարեթների երկիրը գլորեցին խավարի անհատակ անդունդը»:

Իսկ ի՞նչ վերաբերմունք ունեցավ քենաւական հանրապետությունը հայերի դեմ գործադրված նախօնիքի նկատմամբ: Քենաւականները նախ փորձեցին մոռացության մատնել այն, ապա և ուրացան ու ցեղասպանության մեջ ...մեղադրեցին հայերին, որոնք, իբր, թուրքերին զանգվածորեն սպանել են: Ավելին, Աղոլֆ Յիսլերը «...Թալաաթ փաշայի ածյունը նկիրեց թուրքական պետությանը, որը ներքին գործերի նախկին նախարարի պատվին կառուցեց մի հուշադամբան Ազատության բլրի վրա», իսկ Էնվեր փաշայի մարմինը «...եսլիսրիրուային շրջանում հայրենադարձվեց Թաջիկիս-

տանից, որպեսզի մեծ պատիվներով թաղվի հարգանքով ու հիացմունքով համակված ամբողջ ժողովողի առջև՝ գլխավորությամբ հանրապետության նախագահի, նրա նախարարների ու գեներալների»: Զեմալ փաշան էլ, իր հերթին, «...մեծարանքի արժանացավ Երգումում»: Իսկ այդ բոլորից հետո, նկատի ունենալով արդի Թուրքիայի քաղաքական գործիչներին, պատմաբաններին, Ֆիլիպ Վիդլիեն այսպիսի բացականչությամբ անում է իր որոշակի եզրահանգումը՝ հենվելով հնագույն իմաստուների խոսքի վրա. «...ճակատագիրը կուրացնում է չար մարդկանց հիշողությունը, խլում նրանցից ամեն պայծառանություն և վերացնում նրանց տեսողությունն ու լսողությունը: Այնժամ, մնալով կույր, խուլ և համր, նրանք այլևս չեն կարողանա եւ իրենց տեղոր դառնալ»:

Գիրքը բնթերգվում է հափշտակությամբ:

Մանվել Զուլյալյան

## Պատմական գիտությունների դոկտոր, ակադեմիկոս

Թող հների պատմությունները դաս լինեն նորերի համար, որպեսզի մարդ տեսնի այն եղելությունները, որոնք պատահեցին ուրիշներին և ոչ թե իրեն: Այն ժամանակ նա կհարգի և ուշադրությամբ ի նկատի կունենա անցած սերունդների խոսքերն ու այն ամենը, ինչ պատահեց նրանց, և կխրատի ինքն իրեն: Ուստի վստ ոք նրան, ով կպահպանի նախորդների պատմությունները իրուս դաս գալիք սերունդների համար:

Ես երբ գիշեր եղավ, նա ասաց.

Շատ ժամանակ առաջ, այն հին օրերում,  
երբ Արևելյան կայսրության երեք վայրերում  
իշխում էր սուլթանը, ապրում էին երեք երե-  
խաներ, որոնցից մեկը կոչվում էր Սողոմոն,  
մյուսը՝ Արշավիր, և երրորդը՝ Ստեփան: Նրանք

ազգականներ չեն: Առաջինը թուլակազմ և  
մելամաղձոտ մի տղա էր. ապրում էր Արևելքի  
հեռավոր բարձունքներում գտնվող և բնական  
հարստություններից զուրկ մի քաղաքում, որ  
կոչվում էր Երգնկա, Երկրորդ՝ հորից որբա-  
ցած մարմնեղ և արթնամիտ մի պատանի, ում  
մեծացնում էր իր մայրը այն գեղածիծաղ քա-  
ղաքում, որի եզերքները ողողվում էին Բու-  
ֆորի և Ուկեղջուրի ջրերով, իսկ Երրորդը զի-  
տենք, թե ով էր: Բայց այնտեղ, ուր նրանք  
ապրում էին, մեծ հոլովանների և մեծ մտա-  
հոգությունների թատերավայր էր թե՛ իրենց և  
թե՛ իրենց հարևանների համար:

Նրբակիրթ շարժուձևերով օժտված ովք բախտավոր ընթերցող, մտաբերում եմ և ուզում եմ նաև հիշեցնել քեզ, որ հեռավոր դարերում և ժամանակներում Թուրքիան վատ համբավ ուներ Եվրոպայում: Ահա թե ինչու, երբ Վրա հասավ հեղափոխությունը, Եվրոպան ուրախացավ: Թուրքիան օժտվեց սահմանադրությամբ, խորհրդարանով, և մարդիկ սկսեցին խելահեղորդն ողջագուրվել միմյանց հետ: Աղմկոտ և ուրախ քաղաքներում հավաքվում էին ծղոտե լայնեզր գլխարկներ կրող տղամարդիկ և գլուխները ծածկած կամ մազերն արձակած կանայք: Եվրոպան բավարարված էր: Թուրքիան՝ նմանապես: Եվ դա հասկանալի է, որովհետև թուրքերն էլ մարդիկ են, ինչպես բոլորը: Նոր իշխանավորներն ու պաշտոնատարները սովորական մարդկանց

տեսք ունեին. կրում էին կոստյումներ, բաճկոններ, կապում էին փողկապ: Նրանք թեղավոր էին հաճախ, իսկ երբեմն կրում էին ֆես (որովհետև ֆեսը դեռևս գործածական էր հեղափոխության շրջանում) և ազատորեն ու շատ սահուն կարողանում էին արտահայտվել մի քանի լեզուներով: Նրանք շատ խիստ և կոպիտ բառեր չէին գործածում՝ նկարագրելու համար նախորդ վարչակարգը, երկարյա արյունալի այդ վարչակարգը, բռնակալ սուլթան Արդուլ Յամիդի վարչակարգը, այն մարդու, որի դեմքը ոչ ոք չէր կարողացել տեսնել: «Նա տգեղ էր ֆիզիկապես, առավել և տգեղ էր բարոյապես», հաստատում էր այդ օրերի մարդկանցից մեկը՝ մի զարգացած հեղափոխական, ում «փիլիսոփա» էին անվանում իր բարեկամները, որովհետև նա ծանոթ էր Պլատոնի փիլիսոփայական գործերին, Կաբբալի<sup>1</sup> մեկնություններին՝ դրանց մտքերից սկսած մինչև սոցիալիզմի մեջ գաղափարները:

<sup>1</sup> Կաբբալ – հրեական աստվածաշնչական բնագրերի և դրանց բանավոր ավանդության միստիկական խորհրդավոր մեկնաբանությունների ամբողջությունը (Ծնը. թարգմ.):

Արդ, այն մեծ հեղաշրջումից առաջ, որը սուլթան Արդուլ Յամիդին դուրս բերեց Ելիզափի իր պալատից, բռնակալը հրապարակավ երբեք չէր լուսանկարվել: Յեղափոխությունից հետո ամեն ոք գիտեր, թե նա ինչի էր նման: Այդ ժամանակաշրջանից մեզ հասած նրա մեծ լուսանկարը գործն էր Օստոն Կիել անունով մի գերմանացու: Կլիշեի վրա պատկերված տկառակազմ բռնապետը կախ ընկած ականջնեռով, տիած դեմքով, կորացած ուսերով, մենակ նստած իր կառքի մեջ, հագին՝ մոխրագույն մի վերարկու, սարսափած մի հայացք էր գցում իր տեսադաշտում գտնվող ամբոխի վրա: Լուսանկարչական ապակին դաժան էր, համենայնդեպս նվազ դաժան, քան սուլթանն ինքը, որ անլուր տաճանքներով կորսույան էր մատնել Օսմանյան կայսրության հպատակ հարյուր հազարավոր մարդկանց:

«Այլապես բաց կրողնեմ իմ մոլեռանդմերին», սովորություն ուներ հակածառելու սուլթանը ամեն անգամ, երբ Ազգերի դաշնակցությունը ձևացնում էր, թե դատապարտում է նրա գործելակերպը: Նա իր «մոլեռանդմերին» երբեմն բաց էր թողնում գավառներում, քաղաք-

ներում և դաշտավայրերում բնակվող ազգային փոքրամասնությունների վրա և հեռվից հաճուքով նայում իր այդ քաղաքականության հետևանքներին: Դա, անշուշտ, աննշմար չէր անցնում: «Քաղաքը կրակի և արյան մեջ է», հեռագրում էր Դիարբեքիրի ֆրանսիացի հյուպատոսը 1895թ. նոյեմբերի 2-ին, գիշերվա ժամը մեկին, Բարձր Շռանն առընթեր իր դեսպանին: «Ծտապ տեղեկացրեք ինձ, թե որտեղից սկիզբ առավ վերջին սադրանքը: Միայն հայե՞րն են գտնվում սպառնալիքի տակ», մտահոգված հարցնում էր դեսպանը նույն օրը, հետմիջօրեի սկզբին: Ահա մի նոր հեռագիր. «Մեծ վեգիրը անդում է, թե ընդհարումն սկիզբ է առել հայերի կողմից մզկիթների վրա կատարված մի հարձակումից: Ենի՞շտ է դա (նույն օրը ժամը 16-ին): Յյուպատոսի ծածկագիր պատասխանը. «Մզկիթների վրա հայերի հարձակումը զուտ հնարանք է: Կոտորածը տևեց ամբողջ օրը, և վերջը դեռ չի երևում»: Սպառնությունները շարունակվեցին երեք օր և երեք գիշեր: Երբ ամբոխի մոլեգնությունը հանդարտվեց, երբ դիակները հավաքեցին, և Դիարբեքիրը կրկին ընկավ իր առհավական

թմրության մեջ, ֆրանսիացի հյուպատոս Մերիեն շարադրեց հանգամանալից մի գեկուցագիր այդ քաղաքում տեղի ունեցած իրադարձությունների մասին: Նա, ինչքան կարողանում էր, տալիս էր դիակների հաշիվը և, որպես ժամանակակից մի վիճակագիր, ըստ ազգության և դավանաբի թվարկում՝ համաձայն այն չափանիշների, որոնք կիրարկվում էին բռնակալ Արդուլ Շամիդի կայսրության մեջ: Ներձվածող (= առաքելական. Ծ.թ.) հայեր՝ 1000 հոգի մեռած, 1500 տուն կողոպտված, 2000 խանութ թալանված և հրդեհված. կարուիկ հայեր՝ 10 հոգի մեռած. հերձվածող (= հակաքաղեղոնական. Ծ.թ.) ասորիներ (հակորիկյաններ)՝ 36 հոգի մեռած հայտարարված, բայց իրականում 150 հոգի մեռած, 200 խանութ թալանված. կաթոլիկ ասորիներ՝ 3 հոգի մեռած, 30 խանութ կողոպտված և թալանված. քաղդեացիներ՝ 14 հոգի մեռած և 78 խանութ թալանված. հույներ՝ 3 հոգի մեռած, 15 վաճառատուն հրդեհված. բողոքականներ՝ 11 հոգի մեռած և 51 տուն կողոպտված: Յյուպատոսը մոլեգնած խուժանին, հարձակվողներին, մարդասպաններին, ջարդերի հեղինակներին մատ-

նանշելու համար գործածում էր մերը «մահմեդականներ», մերը «քրդեր» բառերը ըստ այն բանի, թե եղելությունների հետ կապված հանգամանքներն այդ բառերից ո՞ր մեկն էին թելադրում իրեն: Սակայն մի բան, որ նա մատնանշում էր առանց վարանելու, այն փաստն էր, որ այդ եղելությունները հրահրվում էին իշխանությունների կողմից՝ սկսած տվյալ վայրի կառավարչից՝ վալիից, որը մոռայլ և խստասիրտ մի մարդ էր: «Ոստիկանությունն ու զորքը միջամտեցին միայն հարվածնելու համար զոհերին», վկայում էր ականատես հյուպատոսը: Յարյուր տասնինը գյուղեր մոխրի էին վերածվել այդ գավառում, իսկ, ըստ հյուպատոսի, մեռածների և անհետ կորածների թիվը հասնում էր երեսուն հազարի: «Անիմանալի վայրագությամբ ոճրային արարքներ են գործվում: Ականջներիս մեջ դեռ հնչում են հավա՛ր, հավա՛ր (օգնություն, օգնություն) աղաղակները, և սարսու է անցնում մարմնովս, երբ մտածում եմ այդ մասին»: Ոչ ոք չի կարող ասել, թե արդյոք կրոնի՞ց, ազգությունի՞ց, լեզվի՞ց, ընկերային դիրքի՞ց էր առաջանում այն գաղանային ատելությունը, որ ժամանակ առ

ժամանակ դուրս էր ժայթքում սուլթանի սրտից ոճրային հորդահոս ալիքներով:

«Թողե՛ք մեզ, որ գնանք իսրանքուլ. Վեհապետը թույլ է տվել, որ սպանենք հայերին», պահանջում էին վարձկանները, ստահակները, գյուղի դատարկապորտները, երբ իմացան Մեծ կոտորածի լուրը: Bir mukateleyi azıme: «Թողե՛ք, որ գնանք իսրանքուլ. Վեհապետը թույլ է տվել»: Ուրբաթը լավագույն օրն էր դրա համար: Խաս-օյուղ թաղամասի ծամածուու փողոցներում կավիճով նշված էին տների դռները, որովհետև սխալվելը հանդուրժելի չէր, սխալվելը նշանակում էր պղծել կրոնը: «Այս մեկը գյավուր (անհավատ) է: Վեհապետը թույլատրել է, որ սպանենք նրան»: Երեկոյան նրանք գալիս էին՝ նավակներով կամ մեծ կամրջի վրայով՝ լավ խմբավորված, կարգապահ, գալիս էին զինված երկարապատ գավազաններով, յաթաղաններով, խոհանոցի սրածայր, մեծ դանակներով, կացիններով, լայնաբերան դանակներով, մտնում փայտաշեն տները, դուրս հանում մարդկանց՝ քաշելով թևերից, սրունքներից, մազերից և սկսում էին գանահարել, թրատել, կացնահարել նրանց: Անշունչ մարմ-

նի անդամներ, թպտացող ձեռքեր, ոտքեր թշում էին օդում: «Ծախում ենք խոզի տոտիկներ», ծիծաղելով գոռում էին մարդասպանները: Արյունը ցայտում էր ուժգնորեն, առվակներ կազմելով՝ հոսում զարիվայր՝ բոլորելով գետնի յուրաքանչյուր անհարթություն: Մահակների ծանր և կտրուկ հարվածների տակ ջախջախվում էին գանգերը՝ սալահատակը կեղտոտելով ուղեղի խուսերով: *Սովազիներն*<sup>2</sup> իրենց ամրող ուժով հարվածում էին մեծերին, փոքրերին, վառ գույներով շորեր հագած կանանց, ալեխանն մորուքներով տղամարդկանց, կոշկակարներին, նպարավաճառներին, դերձակներին, կարդալ և հաշվել իմացող բոլոր մարդկանց: Նրանք գրիերի գլուխները ջախջախելով՝ խմորի էին վերածում, ապա մեկնում իրենց հափշտակած ավարով: Նրանք վերցնում էին ամեն ինչ՝ փող, կահկարասի, գրիարելեն, պղնձե ծորակներ, հնամաշ հագուստներ, կաշվե հողաքափեր և այլն: Դա նրանց իրավունքն էր: «Վեհապետը թույլ է տվել»: Այնուհետև, մի

<sup>2</sup> *Սովազի* – թուրքերն սովազ բարից = հաստ զավաճան, ճահակ, թիր: *Սովազի* = ճահակներով հարվածող:

նշանի վրա, ամեն ինչ վերստին մտնում էր կարգուկանոնի մեջ:

Նահանգների թուրք զինվորականներն իրենց ընտանիքներին տեղեկացնում էին, որ կատարված վերջացած է իրենց պարտականությունը: Նրանք լուրեր էին հաղորդում նրանց՝ գրելով. «Սիրելի Եղբայրս, մենք սպանեցինք հայերին: Բոլորն եւ կեր դարձան շներին... Եթե հարցնեք, թե ինչպես են մեր զինվորներն ու բաշիբոզուկները, ապա նրանցից ոչ մեկի քիթը չարյունութվեց»: Զինվորները լավ էին գում իրենց: Առաջադրանքը կատարվել էր հեշտ և անվտանգ: Կոտորածը խզում էր զորանոցային կյանքի միապաղապությունը, հատուցում իրենց կրած ստորացումները, այն խստությունները, որոնց ենթարկվում էին նրանք օրերով, շաբաթներով և ամիսներով: Մոլորված մի ֆրանսուիի, որ հյուպատոսարանի մի պաշտոնյայի կինն էր, պահում էր տեղի ունեցող իրադարձությունների օրագիրը. «Շուկայում սպանեցին բոլորին: Ոչ մեկ հայ չվերապետեց... Ավարներով բեռնավորված զինվորներ գնում-զալիս են փողոցների ծայրերին արյունլվա ձեռքերով... Բոլոր հացագործները

Խողխողված լինելով՝ քաղաքում այլև հաց չկա. հարկավոր է հաց պատրաստել... Զոհերի գիշահոտը բռնել է ամբողջ քաղաքը: Ստիպված ենք փակել պատուհանները... Միսը մեզ զզվանք կպատճառի երկար ժամանակ... Փողոցում երևում են շներ, որոնց երախից կախված են մարդկային մարմնի կտորներ...»: Բանինաց մի ազգագրագետի համար, առավել ևս մի բրիտանացու, որը դաստիարակվել էր Օքսֆորդում, և որին չէին զարմացնում բարբարոսական բարքերի ամենաանսպասելի դրսնորումները, կրոնասեր այդ մարդու համար, որը պարզեատրվել էր Լևոն 13-րդ պապի ոսկյա շքանշանով, զանգվածային այս սպանդը թվում էր անըմբռնելի, անբացատրելի, նույնիսկ ցնցող: Վիլյամ Միթչել Ռեմսին, որն ուսումնասիրել էր սանսկրիտ լեզուն և օսմաներնը, հետազոտել Անատոլիայի լեռկ լեռները, մեկնաբանել տարսոնացի Պողոս առաքյալի թղթերը և խորապես ծանոթ էր Հայտնության գրքում Ասիայի յոթ Եկեղեցիների նամակներին, այս մարդն անգամ, որ կոչվում էր Վիլյամ Միթչել Ռեմսի, անորակելի այս սպանդի առջև մնացել էր ծայր աստիճան ապշած:

Ահա թե ինչ էր գրում նա այդ մասին. «Մի գոռոլ, որ օժտված է Ալեքսանդր Դյումային հատուկ աշխույժ երևակայությամբ և ունի եմիլ Զոլային հատուկ չափի ճանաչողությունը, իր ամենաճարտար նկարագրությամբ իսկ չի կարող գործել այն ազդեցությունը, որ թողնում է կոտորածի այս տեսարանը ականատեսի վրա»: Ցավի աղաղակները, ողբերը, լացուկոծը եղերական դառնությամբ լցրին Դիարբեքիրի, Տրապիզոնի, Երզնկայի, Երգրումի, Սեբատիայի, Մուշի, Խարբերդի, Մալաթիայի, Բիթլիսի, Վանի, Կեսարիայի, Աղանայի, Ուրֆայի, Ալեքսանդրետի ցերեկներն ու գիշերները... Զարհուրելի լուրեր էին գալիս այդ շրջաններից. գալիս էր նաև մահվան ստվերը:

ուսման վերականգնությանը ու պատրաստությանը շահագործությանը ու առջևությանը լուսաբարձրացնելու համար առաջարկություն է առաջարկությունը պարզաբանելու համար և առաջարկությունը պարզաբանելու համար առաջարկությունը պարզաբանելու համար

## 4

Այդ ժամանակ Եվրոպայում հաստուկենտ, բայց ուժեղ ձայներ էին բարձրանում Սկանդինավիայից, Գերմանիայից, Անգլիայից, Իտալիայից և նույնիսկ Ֆրանսիայից, որտեղ արտաքին գործոց նախարարը, Յանրապետության նախագահի հավանությամբ, քաղցր հայացքով էր նայում սուլթանի աչքերին: Սոցիալիստ ժամ ժորեսը, որով հիանում էր ժողովուրդը և որին ընտրել էր Ազգային ժողովի անդամ, բարձրացավ բեմ և իր մեղադրող ցուցամատն ուղղելով նշանակետի վրա՝ ասաց. «Յենց նա է, նա՛, որ իշխում է ամեն ինչի վրա. սուլթանն է, որ ցանկացավ, կազմակերպեց և ղեկավարեց կոտորածները»: Արտաքին գործոց նախարարը, բազմած իր նստարանի վրա, մեծ դժգոհությամբ էր լսում այդ կարգի խոսքեր: Ժորեսը իրապարակավ խստությամբ դատա-

պարտում էր բնաջնջող պատերազմը, որն արյունով էր հեղեղում Թուրքիան: Ժորեսը սուլթանին հորջորջում էր Խողխողիչ կամ Մեծ մարդասպան: Բացի նրանից, Ազգային ժողովի շատ անդամներ, որոնք նստում էին խորհրդարանի ձախ կողմում, աջ կողմում և կենտրոնում, նույն ձևով էին մտածում: Կլեմանսոն՝ Հանրապետության անձնվեր սպասավորը, «Եկո դը Պարի» («Փարիզյան արձագանք») թերթում պախարակում էր քաղաքակիրք մարդկությանը, որ թույլատրում էր այդ բանը. «Երբ կարդում ենք ծայրահեղ վայրագությամբ տեղի ունեցած դեպքերի վերաբերյալ պատմություններ, որոնք պատմվում են արժանահավատ մարդկանց կողմից, հաղո ենք տալիս մեզ, թե ո՞ր ժամանակներում ենք ապրում, և թե իրականում ի՞նչ արժեք է ներկայացնում այն նրբացած քաղաքակրթությունը, որի բարիքներն ենք գովարանում ամեն ժամ»:

Սակայն սուլթանը, հակառակ իր վայրագությանը և երեմն հենց դրա՝ շնորհիվ, ձեռք էր բերել պաշտպաններ: Ժողովրդական ամենասաստիկ հուզման մեկ պահին, հուզում, որ բարձրացել էր իրենց նմանը չունեցող կոտո-

րածների պատճառով, 1896 թվականին ժնկում՝ խաղաղության այդ մայրաքաղաքի կրպակներում և գլխավոր գրախանութերում երևաց մեկ ֆրանք արժողությամբ մի բռոշյուր: Զարմանալիորեն տեղեկատու այնպիսի մի աշխատության մեջ, որ իրավամբ կարող էր գնահատել Զիգմունդ Ֆրոյդը Վիեննայի իր աշխատանոցում, շվեյցարական այս գրքույկի հեղինակը իր գործը ստորագրել էր «Լեռան ծերունի» նականունով, մի անձնավորություն, որ հեռավոր ժամանակներում ժանաչված էր ամբողջ Եվրոպայում որպես մարդասպանների արևելյան աղանդի սարսափագդու դեկավարը: Վոլտերն իր ժամանակին նրան համարում էր «մի փոքրիկ ավագակապետ»: Դա այնքան էլ գովելի բան չէր:

Անժխատելի է, որ Լեռան ծերունին իր տխուր հռչակով պարտական է ճանապարհորդական այն աշխատությանը, որ վենետիկցի Մարկո Պոլոն Զենովյայի իր բանտախցում թելադրեց բանտակից իր ընկերոջը՝ Ռուստիսյեն Պիզացուն, 1298 թվականին: Վանականների ձեռքով գունազարդված այդ ձեռագիրը շրջանառության մեջ էր Եվրոպայում և նվիրված էր աս-

պետներին, կոմսերին, դքսերին, իշխաններին և թագավորներին: Յետագայում, 1477թ., այն տպագրվեց Նյուրենբերգում, 1481թ.<sup>1</sup> Առևտուրում և 1485թ.<sup>2</sup> Անվերսում (ահա այս աշխատության օրինակներից մեկն էր, որ իր հետ տարավ Քրիստովոր Կոլոմբոսը՝ Ովկիական անծայրածիր ծովի մեջ ծովակալը, և այն ծանոթագրեց իր ձեռքով): Յրաշքների գիրք վերնագիրը կրող այս աշխատությունը իր քանառութերորդ գլխում Լեռան ծերունուն բնութագրում էր հետևյալ կերպ. «Նա Մոհամեդի վարդապետության հետևորդներից էր այն ժողովորդի հետ, որի վրա իշխում էր: Ավելին, նա հղացավ մարդկանց փոխելու և նրանց ոճրագործներ կամ վարձու մարդասպաններ դարձնելու անհավատալի չարությունը, մարդիկ, որոնց սովորաբար անվանում են մարդասպաններ»: Աբդուլ Յամիդի մոլեռանդ և կույր այս հետևորդի աչքին, այն մարդու, որ որդեգրել էր այս կենծանունը, առավել զարմանալին այն էր, որ Մարկո Պոլոյի Յրաշքների գիրքը բացվում էր հաճելի մի նկարագրությամբ, որտեղ հրչակավոր ճանապարհորդը լայն գծերով տալիս էր Յայաստանի և Թուր-

քաստանի շահեկան և խաղաղ պատկերը. «Իրականում գոյություն ունի երկու Յայաստան, մեկը՝ մեծ և մեկը՝ փոքր: Փոքրի վրա իշխում է մի թագավոր, որ իր երկիրը պահում է արդարությամբ և վասալն է Թաթարստանի... Թուրքաստանն ունի երեք ցեղի բնակիչներ. նախ՝ թուրքերը, որոնք պաշտում են Մոհամեդին: Սրանք հասարակ մարդիկ են և ունեն իրենց հատուկ լեզուն... Մնացած բնակիչները հայեր և հույներ են, որոնք նրանց հետ խառնված՝ ապրում են քաղաքներում և ավաններում...»: Վերջապես, վենետիկցի ճանապարհորդը ներկայացնում էր Մեծ Յայաստանը որպես մի գեղեցիկ նահանգ, որ հյուսիսից սահմանակից է Վրաստանին, իսկ արևելքից և հարավից՝ մի թագավորության, որ կոչվում է Մուսուլ. «և իմացեք, որ այս Մեծ Յայաստանում է գտնվում Նոյի տապանը մի մեծ լեռան վրա»: Սակայն այս կարգի մտքերն անկասկած ոչ մի ազդեցություն չեն թողնում Աբդուլ Յամիդի մոլեռանդ հետևորդների վրա:

Ուրեմն Լեռան ծերունին, որ վերամարմնավորված էր ժմռում ծառայելու համար օսմանցի սուլթանի շահերին, պաշտպանում էր այն

տեսակետը, որ դժբախտ հայերի շուրջ բարձրացած ամբողջ աղմուկը, ինչպես նաև այն աղետները, որ հարվածում էին նրանց, իրականում թշնամական գործն էին ավելի կամ նվազ անիշխանական և աստվածուրաց անձանց, որոնք վտանգավոր կողմնակիցներն էին «ո՞չ Աստված, ո՞չ տեր» կարգախոսի և որոնք, առավել ևս, վաճառված էին բրիտանական դիվանագիտությանը։ Սառնարյուն արձակագիրը, ուրեմն, ցանկանում էր վերահաստատել ծշմարտությունը, սուլթանի ծշմարտությունը, ծշմարտությունը Բարձր Դուռն, որը շատ հաստատուն էր այդ ժամանակաշրջանում։ Եվ այդ ծշմարտությունը հայտարարելը նույնքան հեշտ էր, որքան այն հասկանալը։ Արդու Յամիդը առաքինի մի վեհապետ էր՝ մտահոգված արդարությամբ։ Փորձառությունը պարզապես սովորեցրել էր նրան, որ հույները, հայերը, թուրքերն ու արաբները չեն կարող իրար հասկանալ, իենց որ գտնվում էին կողք-կողքի։ Յետևաքար ընդարձակածավալ մի կայսրության մեջ պատշաճ էր գգուշանալ հակամարտություններից որքան հնարավոր էր, և այդ մտահոգությամբ էլ սուլթանը ի գործ

էր դնում իր ամբողջ տաղանդն ու արվեստը։

Մոտիկից նայելու դեպքում, ըստ ժնկարնակ դիտորդի, որի հայացքը չափազանց սուր էր, այս դժվարին, փափուկ և բարդ կացության պատճառը, վերջին հաշվով, «հայկական հարցն» էր, որի համար Եվրոպան վշտանում էր երբեմն։ Արդու Յամիդով հիացող այս մարդը հեղինակավոր շեշտով վճռում էր, որ հայերը առանձնահատուկ էակներ են, «կրծող որդերի» մի ուրույն տեսակ, որ կամաց-կամաց փորելով՝ քանդում է կայսրությունն իր հիմքից։ Եթե մահմեդականների ձեռքը (այսպես էր արտահայտվում նա) ծանր էր իջնում հայերի վրա, ապա դա միայն արդարություն էր։ Յայերը ընչաքաղց հայտնի վաշխառուներ էին, որոնց հետ համեմատած լեի հրեաները (շարունակում էր նա) ողորմելի մարդիկ էին։ Արևմուտքի ընթերցողներին լիակատար գոհունակություն պատճառելու համար Բարձր Դուռն այս նրբամիտ դպիրը կարծում էր, թե գտել է այն ճշգրիտ համեմատությունը, որը կարող էր լսելի դառնալ, ընդունվել, հավանության արժանանալ Փարիզում, Լոնդոնում, ինչպես նաև Վիեննայում,

Բեռլինում կամ Վարշավյում: «Այն ատելությունը, որ մահմեղականներին բաժանում է հայերից, ուրիշ պատճառ չունի, քան այն ծայրահեղ շահագործումը, որ համանման է հրեաների կողմից իրագործված շահագործմանը Ֆրանսիայում, Անգլիայում, Լեհաստանում և Ավստրո-Հունգարիայում: Կրոնական հարցն այստեղ նշանակություն չունի. պայքարը Եվրոպայում կոչվում է «հակահրեական», իսկ Թուրքիայում՝ «հայկական հարց»: Իրականում դա բացարձակապես նույն բանն է՝ the struggle for life (կյանքի պայքար): Խմբագիրը շատ ինքնավստահ էր խոսում, նա այնքան վստահ էր իր փաստարկումներին, իր իրավունքին, որ համեմատությունը կարող էր առաջ տանել մինչև մարգարենություն: Եթե, «օրինակի համար», ասում էր նա, եթե մի օր նման մի շարժում սկսվեր Ֆրանսիայում, ապա «հավանական է, որ աշխարհում ոչ մի տերություն չէր լինի, որ արգելեր իրեաների բնաջնջումը որպես արդար պատիժ հարյուրավոր տարիներից ի վեր կուտակված հանցանքներից»: Մեծ արժանիք չէր նրա համար այսպիսի մի կանխատեսում անելը, որովհետև այդ

ժամանակ Սատանայի կղզում աքսորված կապիտան Դրեյֆուսի դեմ վայրահաչությունները լցնում էին մթնոլորտը:

Գալով Արդուլ Շամիդի և նրա վարած քաղաքականության դեմ հասարակական կարծիքի մեջ գոյություն ունեցող վատ վերաբերմունքի դրդապատճառներին, ապա Լեռան այս նոր ծերունին ենթադրում էր, որ այդ դրդապատճառները պետք է փնտրել այն անկումային ոգու մեջ, որը, ըստ նրա, տիրապետում էր Եվրոպայում, հատկապես բրիտանացիների ախորժակների մեջ, որոնց նա չէր դադարում ամբաստանելուց, իտալացիների փոքրոգության մեջ, «որոնք միշտ պատրաստ են վաճառվելու», ինչպես նաև Ավստրիայի «հրեական կառավարության» ամբարտավան, արհամարհուտ քաղաքականության մեջ: Նրա քինախնդրությունը տարածվում էր մինչև իսկ մոդեռնիստ վտարանդիների փոքրաթիվ խմբերի վրա, որոնք ներկայանում էին «Երիտանարդ Թուրքիա» պիտակի տակ, և հավակնում Եվրոպայի մայրաքաղաքներից Կոստանդնուպոլսին պարտադրել խորհրդարանական մի վարչակարգ, որ անսովոր էր Բոսֆորի և Անատոլի-

այի կլիմայի համար: Փարփառում գոյություն ուներ (դա փաստ էր արդեն) ըմբռստների մի խմբակ, որ շատ տիհածություններ էր պատճառում Աբդով Համիդին: Այդ այլախոհները, որոնք ինչ-որ չափով դավադիրներ էին, անհավասներ ու մաստնականության գործակալներ, իրատարակում էին *Մեշվերեթ*<sup>3</sup> (Խորհրդակցություն) անունով մի թերթ: Նրանք սպասում էին իրենց ժամին: Եվ նրանց ժամը հասավ:

<sup>3</sup> ՄԵշՎԵՐԵՐ – բուրքերեն բառ = խորհուրդ: Այսպես էր կոչվում իթթիհատականների պաշտոնաթերթը, որը հրատարակվում էր Փարիզում (Ծն. բարգմ.):

Այս ժամանակ փիլիսոփա երիտթուրքը, որը կարդացել էր Պլատոն, Կաբբալ և ծանոթ էր սոցիալիստների գրվածքներին, կարող էր հաստատել առանց նախատական խոսքերի, որ սուլթանը միջնադարյան նենգամիտ, չար, նախապաշարյալ մի իշխան էր՝ շրջապատված ծիծաղելի պահապաններով և ցածրորակ աստղագետներով: «Սուլթանը, եթե ուզում եք, ֆրանսիացիների Լյուդովիկոս 11-րդն էր, – ասում էր նա՝ ամփոփելով իր խոսքը ֆրանսիացիների մասին, – խորամանկ Լյուդովիկոս 11-րդն ու իր երկարե վաճակները: Ավելին, նա կեսար Բորջան էր, – ավելացնում էր մեր փիլիսոփան, որպեսզի հասկանալի լինի ամբողջ Եվրոպային: – Նրա ընթերցանության սովորական գիրքը՝ սնարի գիրքը, Մաքիավելիի իշխանն էր»: Այսպիսով նա կարծում էր, թե

Լրիվ ծանոթացել է Մաքիավելլիի կերտած կերպարին: Սակայն, կարծում եմ, միշտ կլինի մտածել, որ Աբդուլ Շամիդը վաստ էր կարդացել ֆլորենտացու այս գործը, ուր հեղինակը խորապես վերլուծում էր «այն մարդկանց, որոնք անիրավությամբ են հասել իշխանության»: Արդարև, եթե հնագույն ժամանակներից սկսած՝ Պատմությունն ապացուցում էր, որ կարելի է սպանել իր համաքաղաքացիներին, դավաճանել բարեկամներին, չունենալ ոչ հավատ, ոչ խիղճ և սակայն հասնել իր նպատակին, այդ նույն Պատմությունը անհերքելի հորեն հաստատում էր նաև, որ անասնական վայրագությունը արգելում է նրան, ով դա իր համար կանոն է դարձնում՝ տեղ գրավելու ազնիվ և վստահելի մարդկանց շարքում: Այդպիսի մեկը ստիպված կլինի «դանակը միշտ ձեռքում պահել»: «Նրա շարունակական վայրագությունները թույլ չեն տալիս ժողովուրդներին երբեւ հույս դնել նրա խոսքերի վրա»: Աբդուլ Շամիդն անկասկած չէր մտահոգվում դրանով մինչև 1908 թվականի այն առավոտյան, երբ Սալօնիկի գինվորականներն սպառնացին իր գահին, և մինչև 1909 թվականի այն երեկոյան, երբ նա

գահընկեց եղավ: Այդ լուրջ նրան հաղորդող պատգամավորների առջև նա գույնը գցեց, սրունքները կրոտեցին, ձեռքերը դողդողացին, ծայնը խզվեց, և սարսափից ծամածովեց դեմքը: Աբդուլ Շամիդը՝ Երկրագնդի այդ խալիֆը, վախսենում էր, որ կզրկվի իր կմախքացած մեծափառ մարմնից: «Իսկ իմ կյա՞նքը, – թախանձում էր նա: – Վստա՞հ եք, որ կխնայվի իմ կյանքը»: Նա երդվում էր իր ապուպապերի գլխով, որ միշտ էլ սրբազն մի սարսափ է զգացել արյունից: Եթե իր շրջապատի մարդկանցից մի քանի հելլուզակներ ի չարն էին գործադրել իր ազնվությունը և երկպառակություն սերմանել իր կայսրության մեջ, եթե հազարավոր աղետներ էին տեղի ունեցել իր գահակալության ընթացքում, ապա այդ բոլորի ու մնացյալի համար, հակառակ արտաքին երկույթներին, պետք չէր իրեն մեղավոր համարել: Նա իր գլխով երդվելով՝ հաստատում էր դա այն պատգամավորներին, որոնք եկել էին գահընկեց ամելու իրեն:

Սուլթանը շատ պարզ, շատ հասարակ հաճույքներ ուներ, ինչու՞ կրիվ հարուցել իր դեմ: Նա կերակրում էր իր թոշնարանի կանաչ

թուրակներին, դաշնամուրի վրա ճատները խփելով նվազում էր «Տիկին Անգոյի դուստրը» օպերետը, հմայված էր հազարավոր կտավների հեղինակ իտալացի Ֆառևտո Չոնարոյի նկարներով և թուրքերեն էր թարգմանել տալիս այն սրտաճմլիկ, արյունալի վեպերը, որոնք գրավում էին փարիզյան օրաթերերի ներքելի մասը և ունեին հետևյալ վերնագրերը. «Դաշույնի ասպետները», «Զահակիր ընկերները», «Ուրվականների դյակը», «Կարմիր սենյակը», «Գետնափոր դամբարանների դրամաները» և այլն: Այս կարգի պատմություններով էր սնվում նա Ելդրզի անարիկ պալատի իր գրոսայգում, որը շրջափակված էր եռաշարք պարիսպներով և պահպանված չերքեզներից, սիրիացիներից և ալբանացիներից բաղկացած սպառազեն գնդերով, ինչպես նաև իր վարձկան լուտեսների խիստ ցանցով: Սուլթանը շատ էր սիրում Քսավյե դը Մոնտեպենին և Պիեռ Զակկոնին: Դա մի մեծ թերություն չէր, եթե նույնիսկ Զակկոնը թողել էր «Քաղաքական և կրոնական գաղտնի ընկերակցությունների մասին. մարդասպանները» վերնագրով ուսանելի մի աշխատություն և եթե, մյուս կողմից,

եղել էր խմբագրողը «Ծաղիկների նոր լեզում՝ անվանակարգությամբ հանդերձ այն զգացումների, որոնց խորհրդանիշն է յուրաքանչյուր ծաղիկ, ինչպես նաև դրանց գործածությունը զանազան մտքերի արտահայտության համար» գոքի. որովհետև Աբդուլ Յամիդը սիրում էր ծաղիկները, և դրա համար նույնպես չէր կարելի մեղադրել նրան: Նա Ելդրզի իր գրոսայգու համար մեծ ծախսերով բերել էր տվել ամբողջ Եվրոպայի ամենաարտասովոր տնկինները և Վիլիելմ 2-րդի կնոջը՝ Գերմանիայի կայսրություն ուրախացրել՝ նվիրելով նրան իր այգու ջերմոցներից քաղված փարթամ վարդերի գեղեցիկ մի փունջ, որի մեջտեղում գետեղել էր իր գանձարկոյից դուրս բերված նրբաճաշակ մի ակնաքար: Պատահում էր երբեմն, որ Ելդրզի իր տաղավարներում հաղթանամ մի քանի ներքիններ խոշտանգեին շնորհազրկված դժբախտ մարդկանց, ճգմեին նրանց ամորդինները և աքցաններով պոկեին նրանց մարմնի անդամները: Սուլթանը մի առաջակալի հետևում թաքնված՝ ներկա էր լինում այս տեսարաններին: Բայց դա պետության բարիքի համար էր: Իսկ ցավի աղաղակ-

ները չին լսվում հեռվում: Եթե Աբդուլ Շամիդը արգելափակել էր տվել իր եղբորը, իրամայել էր խարազանել իր անհնազանդ ստրուկներին, կախել իր երկշուր հակառակորդներին, Բոս-Փորի ջրերում խեղդամահ անել անզգամ ուսանողներին, ապա դա միշտ իր երկրի երջանկության համար էր: «Ես մեղավոր չեմ», քոյլ ձայնով հեծեծում էր Աբդուլ Շամիդը: Ազգային ժողովի քուրք, իրեա և հայ պատգամավորները վստահեցնում էին նրան՝ ասելով. «Օսմանցիները ազնիվ և վեհանձն մարդիկ են: Նրանք անարդար չեն լինի»: Սուլթանը անձնական պատճառներ ուներ չհավատալու դրամ:

Այսուհանդերձ, տեսնելով, որ խաղը տանուկ է տվել, նա խոնարհվեց՝ փորձելով քաղցր խոսքերով ողոքել սպաներին, որոնց հանձնարարված էր փոխադրել նրան ապահով մի վայր: Խորտակված, կուչ եկած, խորամանկելով, տկարացած ու շլմորած մարդու տեսք ընդունելով՝ ասում էր. «Ես ծերացած, հիվանդ մի մարդ եմ. ազան քողեք ինձ և քույլ տվեք, որ գնամ Եվրոպա»: Բայց երիտրուրքերը շատ լավ գիտեին, թե Եվրոպայում որքան հեշտ է վերականգնել առողջությունը: Նրանք չին

ուզում այդ վտանգին ենթարկել իրենց:

Գիշերով, գաղտագորի և լրելյայն, Աբդուլ Շամիդը հեռացավ իր պալատից՝ հետը տանելով իր սիրելի մարդկանցից չորս հոգու, մի քանի սևամորք ներքինիների և իր հարստության աննշան մի մասը: Հակառակ այն լուրին, որը հնարավոր էր եղել տարածել այս ու այն կողմ՝ հավաստի դարձնելու համար անհեթեթ մի առասպել, սուլթանը գահընկեց չեղավ այն քանի համար, որ ուներ չարաբաստիկ մի աղամանդ, որ հայտնի էր Hope diamond (հուսատու աղամանդ) անունով. դա մեծ չափի մի ակնաքար էր՝ բերված Գոլկոնդայից<sup>4</sup>, գուցե պոկված հինդու կրոնին պատկանող մի կուռքի վրայից Տավերնյե անունով մի մարդու ծեռ-

<sup>4</sup> Գոլկոնդա – Ավերված ամրոց և քաղաք Յնդկաստանում: 1518 թվականից եղել է առասպելական հարստություն ունեցող Դեկանի խլանական սուլթանության մայրաքաղաքը, որը 1687թ. կործանվել է Ավղանգօքեր անունով մոնղոլ կայսրի կողմից: Բազմաթիվ ամրություններ, պալատներ և գերեզմաններ վկայում են, որ քաղաքի շրջակայքում գոյություն են ունեցել հարուստ հանքավայրեր, որտեղից դուրս են հանվել աշխարհի ամենանշանավոր ակնաքարերից մի քանիսը (Ծնք. թարգմ.):

քով, որը հետագայում պատառութվեց վայրի շների կողմից, կապույտ գույնի մի աղամանդ, որ դժբախտություն էր բերում նրան, ով իր մոտ էր պահում այն, թանկարժեք մի քար, որ Լյուդովիկոս 14-րդի դժոխային սիրուհու՝ Մոնտեսպանի ձեռքից անցել էր Լյուդովիկոս 16-րդի կնոջ՝ Մարի-Անտուանետի ձեռքը, մի անգին գոհար, որ անհետացել էր Ֆրանսիական հեղափոխության ժամանակ և վերհայտնվել փարիզեցի մի կուրտիզանուհու վահին, որը շուտով սպանվեց իշխանական ծագում ունեցող իր սիրեկանի կողմից, ապա՝ մի հույնի մոտ, որ իր կյանքն ավարտեց մի խորխորատի հատակին, և վերջապես Աբդուլ Համիդի բերներերան լցված գանձարկում: Սուլթանը, ուրեմն, գահազուրկ եղավ ոչ թե այն բանի, որ իր մոտ էր պահում ավելի քան քառասունինգ կարատանց այդ նշանավոր աղամանդը, այլ, ավելի շուտ, մարդկային հասարակության մեջ գործող այն պարզ օրենքի պատճառով, որի համաձայն, ինչպես հաստատում էր մի ուրիշ փիլիսոփա, այնտեղ, ուր ճնշում կա, կա նաև ապստամբություն:

Ուլքանի աղետալի կյանքն ու գործը երկար ժամանակ սնում էր երևակայությամբ ապրող Եվրոպացուն: Եթե 1914-ի աշնանը վրա հասավ պատերազմը, «Նեղին սենյակի գաղտնիքը» և «Սևազգեստ տիկնոց օծանելիքը» գրքերի հեղինակը Բուֆորի կողմերն ուղարկեց իր անվեհեր և ճարպիկ լրագրողին, ում դարձրել էր իր հերոսը, որովհետև հարկավոր էր, որ ինքն առաջին պլանում չերևար: Նրա այս ինքնատիպ թերթոնի գահազուրկ վեհապետ Աբդուլ Համիդը երկրորդական կերպարի դեր էր կատարում, բայց որքան գրավիչ և անհրաժեշտ դեր «Մատեն» («Առավոտ») թերթի ընթերցողների համար: «Իրոք նա այնքան վայրա՞գ է, ինչպես ասում են» հարցում էր Ռուլտարիյը<sup>5</sup>. – «գուցե

<sup>5</sup> Ռուլտարիյ – հիշատակված գրքերի գլխավոր հերոսը (Ծնբ. թարգմ.):

ավելի վայրագ, եթե հավատանք պտտվող անեկդոտներին»: Այս ժողովրդական վեպերի վատորակ թուղթը, փայլուն կազմը և առապելական տպաքանակը ժողովուրդների մտքում անջնջելի էր պահում սուլթանի սարսափագոր համբավը և նրա գործած ոժիրների իրականությունը: Թափառելով Ելդըզի պալատում և այնտեղ թաքնված թանկագին քարերի՝ հակիմների, շափյուղաների, զմրուխտների, թիով կիտելով չափ առատ աղամանդների, մեղեսիկների, արևակների, ոսկեքարերի, պարտիզաքարերի, արմալոնների, ոսկու և արծաթի կույտերի փնտրություն տարված Ռուլտարիյը սկսում էր սարսուր զգալ «այս պատմական վայրերում, որոնք այնքան բաներ էին տեսել... այնքան սարսափելի բաներ... Այստեղ է, որ կազմակերպվեցին և պատվիրվեցին հայկական ահավոր կոտորածները» (ինչպես մարդիկ գունատվելով խոսում են 1282 թվականի մարտի 30-ին, երեկոյան ժամերգության ընթացքում սկսված սիցիլիական սահմուկեցուցիչ կոտորածների մասին, որոնք մինչև այսօր չեն ջնջվում մարդկանց գիտակցությունից): Ժողեֆ Ռուլտարիյի արևելյան

այս անմիտ արկածախնդրությունը, ինչպես նրա զարմանալի արկածախնդրություններից յուրաքանչյուրը, ոգևորեց Ֆրանսիան և Եվրոպան: «Բուֆորի գաղտնիքները» կամ «Ռուլտարիյի զարմանալի ամուսնությունները» և կամ «Ռուլտարիյը պատերազմում» վեպերը քսանական թվականներին թարգմանվեցին իտալերեն, իսպաներեն և չեխերեն. Միլանում դրանք թարգմանվեցին Զուտիտսա Ռուտտիի, Մադրիդում՝ Նիկոլաս Ագիլար ի Մունյոսի, Պրագայում՝ Ֆանտա Շտեպանեկի կողմից, և տակավին կարելի է, այս կամ այն մայրաքաղաքում փնտրելով, հայտնաբերել մոռացված մի քանի այլ հրատարակություններ:

Այս ժամանակի բոլոր մարդկանց հայտնի է, ակնհայտ իրողությունների մեջ ակնհայտ մի իրողություն, որ Աբդուլ Շամիդը առաջին կարգի մի մարդասպան էր մյուս մարդասպանների շարքում: 1935թ. Կինոբեմադրիչ Կարլ Գրյունը նկարահանեց *Abdul the Damned* (անգլերեն), *Abdul der Verdammte* (գերմաներեն) անունով մի ֆիլմ, որի մեջ սուլթանի դերը կատարում էր Ֆրից Կորտները, թուրք ոստիկանապետի

դերը՝ շվեդացի դերասան Նիլս Ասթերը, իսկ հրապուրիչ և վառվորուն կնոջ դերը՝ ամերիկուհի Աղրիեն Էյնսը, որը ֆորտ Ուորթից էր (Տեխասի նահանգ): Կարլ Գրյունը Գերմանիայից հեռացել էր Համաշխարհային երկրորդ պատերազմից առաջ՝ ապաստանելու համար Ֆրանսիայում, ապա՝ Անգլիայում: Կորտները նույնպես այդ անհօյալ ժամանակաշրջանում կարողացավ փոկվել՝ փախուստի դիմելով: Այս ցավալի հանգամանքների շնորհիվ էր, որ նա բրիտանական կինոստուդիաներում մարմնավորեց զարհուրելի մի մարդասպանի կերպարը: *Gallahar Ltd* անունով սիգարետների ֆիրման «Abdul the Damned» («Անհօյալ Աբդուլը») ֆիլմը մտցրեց «Կինոյի նշանավոր տեսարաններ» վերտառությամբ իր գովազդային բազմագույն քարտերի շարքի մեջ, որոնք դեռ կարելի է հեշտությամբ ծեռք բերել մեկ սրեռլինգով: Ֆրանսիայում այս ֆիլմը հրապարակ իջավ «Կարմիր սուլքանը» անունով: Անշուշտ այս անվանումը սուլքանի առաջադիմական անհավանական համոզմունքներին վերաբերող մի ակնարկություն չէր, այլ վերաբերում էր

այն արյան գույնին, որ անխողորեն թափել էր Արդուլ Շամիդը: Ֆիլմը, դուրս գալով հրապարակ, ուժեղ տպավորություն գործեց. «Եվրոպայում իրականացած մեծագույն կինոարտադրությունը»՝ վստահեցնում էր «Եկրան Լիոնե» թերթը. «1908 թվականի թուրքիայի վերակազմավորման գեղեցիկ պատկերը, որը համապատասխանում է մարդկանց հիշողության մեջ դեռ ներկա եղածին»: Լյուսիեն Ռեն, որ մի կերպ վաստակում էր իր ապրուստը՝ աշխատակցելով երեսուն սանտիմ արժողություն և առանձին պրակներով շաբաթական երեք անգամ լույս տեսնող *Film-Complet* հանդեսին, այդ ֆիլմի հիման վրա պատրաստեց մի կինովեա նոդայական հին վաճառատների և խանութների պշորուհիների, երիտասարդ վաճառող աղջիկների, Փարիզի 14-րդ թաղամասի արագաշարժ կարուիհների, *Օբերվիլիեի* և *Լըվալուա-Պերեի* դեռահասակ բանվորուհիների, ինչպես նաև Ռես, Նովելտի, Էղեն և Ռեժանս սրճարաններում իրենց բազկաթոռներին պինդ կպած գույգերի համար:

«Արևելյան ճեպընթացը» հանգիստ սլա-

նում էր դեպի Կոստանդնուպոլիս...»: Կինովեպում սա լավ սկիզբ էր: «Գնացքում կային տիտղոսավոր բազմաթիվ երևելի անձնավորություններ...»: Ի՞նչ բախտավոր, երջանիկ մարդիկ: Վագոն-ռեստորանում համեղ ճաշատեսակներ՝ Մոնակոյի կոցար, այժյամի փափուկ մսից պատրաստած կերակուր, մեկ շիշը երեք ֆրանկ արժող Լիստրակ գինի և վեց ֆրանկ արժող շամպայն: «Կոստանդնուպոլիս... Երևում էին ոսկեզօծ մինարեթներ, մզկիթներ, նրբարվեստ կամ անձաշակ պալատներ, լուսաբացին և մայրամուտին լսվում էր ականջ ծակող երկարաձիգ երգը հարյուրավոր մուեզինների, որոնք դեպի Մեծք էին ուղարկում իրենց ջերմեռանդ աղերսն առ Աստված... Այստեղ մարդիկ շնչում էին օծանելիքի ծանր բուրմունքը, վախենում՝ հյուծված, նիհար շներից, խոլոյ տալիս՝ գերեզմանատներից, որտեղ իսլամական գերեզմանների շուրջը թափառող անպարկեշտ կանայք հրավեր էին ուղղում տղամարդկանց»: Լյուսիեն Ռեն գործինաց մարդ էր: Փարիզի Դընկերկ փողոցում նա աշխատում էր Բիբի Ֆրիկուտեն և Պիե Նիկոլե հրատարակչի համար (սրանց հերոսները նույնպես ծանոթ էին Կոս-

տանդնուպոլիսին և արհամարհում, ծաղրում էին թուրքերին): «Անորոշ ինչ-որ բանից,— շարունակում էր վեց սու արժող այս կինովեպի հեղինակը,— զգացվում էր, որ գտնվում ես մի երկրում, ուր բռնապետությունը գործադրում է իր արյունալի ավերները»: Անհանգստացնող այս տեսարանում, որը վերաբերում էր Կրեմների թագուհու և Ֆլո դիմափոշու համար արված մի գովազդի (դրանք երիտասարդական թարմություն ու հմայք են տալիս ձեզ), սերը և քաղաքականությունը միաձուլվում էին իրար հետաքրքրություն և ուժեղ հուզում առաջանող մի արկածախնդրությամբ:

Թերեգա անունով հերոսուիհն՝ վիեննական օպերետի երգչուիհներից մեկը, յուրք վագոնով եկել էր Կոստանդնուպոլիս՝ ամուսնանալու թալաք անունով խիզախ և ազատախոհ մի թուրք սպայի հետ: Այստեղ Թերեգան, որպեսզի փրկի գլխատվելու դատապարտված իր սիրականին, ստիպված հանձնվում է վավաշոտ սուլթանի պիղծ ցանկություններին: Ներման արժանանալով՝ թալաքը մեկնում է Սալոնիկ՝ միանալու երիտրութերին: «Նա կայացրել էր իր որոշումը. պետք

էր ամեն գնով փրկել Թուրքիան ոճրային մտքերով ցնորված մի միապետի արյունալի բռնակալությունից»: Արդ, մոտիկից տեսնելով բռնապետին, գուցե և արժանացած լինելով նրա ուշադրությանն ու սիրուն, գեղանի թերեզան կարեկցանք, գրեթե համակրանք է զգում նրա հանդեպ: Չէ՞ որ սուլթանը սիրուն էր իր փափկամազ անգորական կատվին և կամերային երաժշտությունը: «Ա՞հ, իշխանությունը սարսափելի բան է», հառաջում էր միապետը նրա առաջ: Թերեզան հասկանում էր նրան: «Ա՞հ, երկի սարսափ եմ պատճառում ձեզ: Այնքան շատ արյուն կա իմ ձեռքերի վրա»:- «Թերեզան, տարօրինակ կերպով զգացված, նայում էր նրա ձեռքերին, որոնք, սակայն, սպիտակ էին»: Մինչդեռ Սալոնիկում, իր գեղեցիկ նշանածից հեռու, հրապուրիչ Թալաքը ապստամբության սերմեր էր ցանում, կամավորների լեգեններ կազմում և արշավում դեպի Կոստանդնուպոլիս: Այստեղ էլ վերջանում էր կինոֆիլմը առանց հանգուցալուծնան (որովհետև այն տևում էր միայն հարյուր ինք րոպե, իսկ կինովեար տարածվում էր միայն տասնչորս էջի վրա): «Այն ժա-

մանակ Թալաք փաշան, որը երիտթուրքերի առաջնորդն էր, վերջապես ճանապարհ բաց անելով իր զորքերի միջով, որոնք խօնված էին իր շուրջը, մոտեցավ և շեշտված ձայնով գոռաց: «Աբդուլ Համիդ, դուք գահից գրկված եք, ձեր իշխանությունը վերջացած է... Թուրքիան այլևս արյուն չի ուզում»: Սուլթանը խոնարիկեց սվիմների առջև: «Եվ Թալաքը հաղթական քայլերով շարունակելով առաջանալ պալատում՝ շուտով հանդիպեց Թերեզային՝ իր սիրելի նշանածին, որին վերանվաճել էր վերջապես: Նա ազատագործ իր հայրենիքը մի բռնապետի ձեռքից, որի անհաշվելի ծանր ոճիրները դարերով պիտի հիշի մարդկությունը»: Վերջ:

Աբդուլ Համիդի ուրվականը տեղ գտավ տակավին այն պատահական պատմությունների մեջ, որ *stylr fiction*-ի հեղինակներից մեկը՝ Արարիայի նշանավոր հետախույզ Լաուրենսի բարեկամը, առաջարկում էր *Blue Book Magazine* և *Boston Sunday Globe* պարբերականներին հրատարակել: Դրանք ունեին հետևյալ վերնագրերը. «Իսրանքուի շները», «Անիծյալ Աբդուլի գանձը», «Արևելյան ճեպըն-

թաց»: Նշանակում է, թե Կարմիր սուլթանը անջնջելի հիշողություն էր բողել Արևոտքի մարդկանց գիտակցության մեջ: Արդուլ Համիդի տապալումը օրինություն եղավ նաև Եվրոպայի համար:

2

Եվրոպան, անակնկալի եկած, քարյացակամությամբ ուսումնասիրում էր այն, ինչ կոչում էր «ազատական շարժում Թուրքիայում»: Սեկնարանողները մեկը մյուսի հետևից հաջորդում էին իրար՝ չափավորականներից սկսած մինչևն ամենից անգիտումները: Նույնիսկ այն մարդը, որ իր գրվածքներով սասանել էր ամբողջ Ռուսաստանը վերից վայր, Սանկտ Պետերբուրգի սովետի նախկին նախագահ Լև Տրոցկին, որը երազում էր տևական հեղափոխություն, իր տպավորությունները հանձնեց «Պրավդա» անունով փոքրածավալ թերթին, որ իրատակում էր Վիեննայում: Նա իր խոսքն ուղղում էր այն մարդկանց, որոնք աշխարհագրական քարտեզ երեք չեին տեսել, և հստակ լինելու գովելի մտահոգությամբ իրերը կոչում էր իրենց անուններով: «Թուրքիան, – գրում էր նա, – գտնվում է

Բալկանյան թերակղզում, Եվրոպայի հարավարևելյան անկյունում: Անհիշելի ժամանակներից ի վեր այս երկիրը խորհրդանշել է լճացում, անշարժություն և բռնատիրություն: Այս տեսակետից Կոստանդնուպոլիսի սուլթանը ոչնչով չի գիջում Սամկս Պետերբուրգի իր եղբորը, նույնիսկ գերազանցում է նրան: Տարբեր ցեղերի և կրոնների պատկանող ժողովուրդներ (սլավոններ, հայեր, հույներ) ենթարկվել են դժոխյային հալածանքների: Սուլթանի ժողովուրդն ինքն էլ (թուրք մահմեդականները) երջանկության մեջ չեր ապրում: Գյուղացիները փաստորեն ստրուկ են դարձել վարչակազմի պաշտոնյաների և կալվածատերերի ձեռքի տակ: Նրանք առջատ են, տգետ՝ ենթակա նախապաշտումների: Այնտեղ կային քիչ թվով դպրոցներ»: Ահա այսպես էր արտահայտվում նա Վիեննայում իր աքսորի ժամանակ: Տրոցկին ի վերջո հարց էր տալիս իրեն, թե Արևոտքում կազմավորված երիտրութերը համարձակություն կունենա՞ն, արդյոք, դիմակայելու այնքան դժվարին հիմնահարցերի և, որպես լավագույն լուծում, ընտրելու ժողովորդավարությունը, որին հավակնում են ոտքի ելած ազգերը:

Երիտրութերը հրապարակ էին իշել Միություն և Առաջադիմություն Կոմիտե անունով, ինչ որ բարենշան էր: Շարժումը գլխավորում էին քաղաքացիական և գինվորական անվանի դեմքեր: Փարիզից եկել էին Սիմեոն Ռիզան՝ Մեշվերերի տնօրենը, որը բնակություն էր հաստատել Լատինական թաղամասի Մոնժ փողոցում, և Բժշկական ֆակուլտետն ավարտած դրկտ. Նազիմը, որին մեծ սիրով ներկայացնում էին որպես «ազատական գաղափարների առաջալը Փոքր Ասիայում»: Այս հեղափոխականները անհանգստություն պատճառող ոչ մի բան չունեին. Սիմեոն Ռիզան թողել էր խնամքով ծևավորված սպիտակ մի մորուք, հազին ուներ մեծ ճաշակով կարված երկայն մի սերբուկ և աշխատակցում էր պողիտիվիստների կողմից հրատարակվող «Արևնտյան հանդես»-ին: Նա, որպես մոտիկ անձնավորություն, ներկա էր եղել Օգյուստ Կոնտի<sup>6</sup>

<sup>6</sup> Օգյուստ Կոնտ (1798-1857) – ֆրանսիացի փիլիսոփա: Համարվում է ընկերաբանության հիմնադիրներից մեկը: Նեղինակել է «Պողիտիվ փիլիսոփայության դասընթաց» անունով մի աշխատություն, որ հանդիսանում է պողիտիվիզմի (դրապաշտության) հիմքը (Ծնբ. թարգմ.):

մարմարե արձանի բացման հանդիսավոր արարողությանը Սորբոնի հրապարակում և Մեծ ուսուցչէ Պիեռ Լաֆիտի (այն մարդու, որը եղել էր առաջադիմության և սեփականության գաղափարի մեծ ջատագովն ու Գիտությունների պատմության ամբիոնի վարիչը Կոլեժ դը Ֆրանսում) հուղարկավորության ժամանակ բռնել էր նրա դագաղի սև ժապավենը: Իր այս հանգամանքով էլ Ահմեդ Ռիզան որոշ հեղինակություն և վստահություն էր վայելում դիվանագիտական շրջանակներում: Նրա արբանյակը՝ դոկտ. Նազիմը, որի նազերը սանրված էին դեպի ետև, ուներ գեղեցիկ և վայելուչ արտաքին: Մի ուրիշ բժիշկ՝ Բեհաեդին Շաքիրը, որը միացել էր այս խմբակին, խնամում էր նորածու փառավոր մի բեղ: Այս գինվորական ներն իրենց փոքրաթիվ խմբերով գալիս էին Սալոնիկից, որը արդյունաբերական անբարեկարգ մի քաղաք էր: Մաստնական օքյակների հովանավորության տակ սրանք միաբանել էին իրար հետ՝ երդվելով իրենց դաշույնների վրա, և պատերազմելու վարժություն էին ձեռք բերել լեռներում: Սրանք էին գովարանվում ամենից առաջ, որովհետև սրանք էին տապալել հասա-

րակական պարսավանքի արժանացած վարչակարգը: Յրամանատար Ենվեր բեյը, որ ավարտել էր Ռազմական դպրոցը, շատ հասարակ էր պահում իրեն գինվորական իր համեստ համագենստի մեջ: Ահմեդ Զեմալը առանձնանում էր միայն իր լայն և սև մորուքով: Արտասովոր միակ դեմքը, որ տարբերվում էր այս բոլորի մեջ, զորագնդի հրամանատարի տեղակալ Նիազի բեյն էր՝ դժոնահայաց մի ալբանացի, գլխին՝ կլոր մի գդակ, որի վրա օսմաներն տառերով արձանագրված էր ֆեղայի վարան (զոհաբերված՝ վասն հայրենիքի): Յիրավի, Նիազին երկար կյանք չունեցավ: Միություն և Առաջադիմություն Կոմիտեի անդամներն ընդհանրապես շատ չէին փայլում իրենց ինքնատիպ հազվածքով: Նրանք ավելի շուտ աչքի էին ընկնում օրինակելի պաշտոնատարների իրենց քայլվածքով: Այդպիսին էին, օրինակ, Թալաաթը՝ Փոստ-հեռագրատան նախկին պաշտոնյան, կամ փոքրիկ մի միակնոց կրող Ելսմտազետ Զավիդը, որի համար ասում էին, թե լավ իրեսոր է: Իրար հետ ժողով կազմած այս մարդիկ բոլորն էլ թիւ շատ նման էին միմյանց՝ քաղաքացիները՝ քաղա-

բացիների նման, զինվորականները՝ զինվորականների: Ունաճք ֆես էին կրում, մյուսները՝ ոչխարի մորթուց պատրաստած փափախ: Բայց նրանք այստեղ չէին գտնվում պարզապես ցույց տալու համար իրենց: Նրանք մնում էին ստվերի մեջ, մինչ Կոստանդնուպոլիսի փողոցները լցվում էին ցնծացող բացմուրյուններով:

Ինչպես ամեն հեղափոխության ժամանակ, ժողովուրդն իր ծարավը հագեցնում էր ազատության մաքուր ջրով. սկսում էր հուսալ լավագույն մի ապագայի: Յայերը վերջին ծափահարողները չեղան: Թաքսիմի պարտեզներում հանպատրաստից բեն բարձրացող ամբոխավարներ՝ ժապավեններով և կարմիր գլխանշաններով պճնված մարդիկ, կրակոտ ճառեր էին արտասանում եղբայրության և հավասարության մասին առանց կանգ առնելու: Առաջին օրերին եղան նույնիսկ այնպիսի դեպքեր, երբ երեկվա դահիճներից ոմաճք հրապարակ իրենց զղջումն էին արտահայտում 1896 թվականի զոհերի առջև: Մի լրագրող իր ծոցատետրում արձանագրում էր այդ օրերում տիրող մթնոլորտը՝ նշելով. «Ծատ քաղցր,

շատ խաղաղեցնող գորովալից մի լայն շունչ փայփայում էր բոլոր մարդկանց սրտերը»: Ծաղիկներով և շլացուցիչ գեղեցիկ պաստառներով ծածկված սայլերի վրա խմբերով թառած հայեր, հրեաներ, հույներ և մահմեդականներ, ծեռք-ծեռքի բռնած, շարիշար անցնում էին Զմյուռնիայի փողոցներով, մինչ զինվորական փողային նվազախմբերը հնչեցնում էին Մարսելյեզը (Փրանսիացի լրագրողները շատ էին սիրում նկարագրել այս զվարճալի տեսարանը): Իրենց զորանոցների առջև իշագերանների վրա նստած զինվորներ և սպաներ, օրորվելով աջ ու ձախ, արտասանում էին հայրենասիրական քայլակներ, ծեռքերի և դիմագծերի ճարպիկ շարժումներով արտահայտում պայքուններով, կրակոցներով, բենգալյան կրակներով շահված դժվարին պատերազմները: Նախկին վարչակարգի հրամանով արգելված շարժումներն այժմ միանգամայն օրինական էին և ցանկալի: Անպարկեշտ փորագրանկարների փոխարեն, որոնք խաբերայությամբ մի քանի դահեկանով գաղտնի փոխանցվում էին անամոք օտարականներին, այժմ բարձրադադակ վաճառվում

Էին երեկվա այլասերված նախարարների ծիծաղաշարժ ծաղրանկարները: Ուրվանկարային տեսարաններ ներկայացնող ավանդական հին թատրոնի փոխարեն Պերայի կամ Իսթանբուլի գեղազարդ թատրոնի դահլիճները բեմադրում էին նորանշան իրաշալի ներկայացումներ, որոնք իրապուրում-քաշում էին մարդկանց, ինչպես նավի լամպն է քաշում ճանճերին: Դրանք, սակայն, ամենից ավելի զգվանք էին պատճառում Աբդուլ Համիդին: Նրան կասկածանք, տիհածություն և հակակրանք էին պատճառում նաև բռնակով գործող կինոխցիկները: Գուցե դրա պատճառը Գետլինգ գնդացիրներն էին, որոնք այնքան ավերեներ էին գործել և միևնույն ժամանակ այնքան ծառայություններ մատուցել: Կամ գուցե այն մարդն էր, որը Ռուլտարիյին ուղարկեց Բոսֆոր, բայց ինքն այնտեղ չէր այն պահին, երբ կինոխցիկում մեծ կրծտյունով և ոճրային եղանակով շարժման մեջ դրվեց երաժշտությունը: Նկարահանող գործիքն, ուրեմն, զգվեցնում էր սուլթանին, և նա արքունական իրովարտակով արգելել էր, որ բռնակի միջոցով գործող որևէ կինոտուի որսա մինարենների, շողշո-

ղուն գմբեթների կամ Բոսֆորի, Իշխանաց կղզիների, կնճռոտված դիմագծերով ճարպիկ նավակարների կողմից լատինական առաջաստներով առաջնորդվող նավակների և տեղացի բնակիչների կենդանի պատկերները: Այդ արգելքների ժամանակն անցել վերջացել էր: Ռումինացի մի իրեա, գերծ ամեն տեսակ նախապաշտումից, հասարակ մարդկանց համար արտադրում էր Պարե<sup>7</sup> ընկերության հնարած ծակոտիններով ժապավենները, որոնք հայտնի էին զվարթ աքաղաղ խորիրդանշանով: Դրանք դուր եկան հասարակ մարդկանց: Այդ մարդիկ համախմբվում էին Սպանեկ գարեջրատանը, Վարիետեների թատրոնում, Կոնկորդիայում կամ Ֆեվզիին սրճարանի այգում՝ տեսնելու համար, թե իրենց նմանները՝ երկրագնդի սովորական մարդիկ, որոնք իրենց

<sup>7</sup> Շառլ Պարե (1863-1957) – Ֆրանսիացի հայտնի արդյունաբերող: Եղել է ֆրանսիական ծայնագրիչ մեքենաների արտադրության նախաձեռնողը: 1896թ. իր եղբոր հետ իհմնել է Պարե ընկերությունը: Նա զարգացրեց կինոյի ճյուղը Ֆրանսիայում՝ արտադրելով կինոժապավեններ, կինոֆիլմեր, կառուցելով ստուդիաներ և լաբորատորիաներ (Ծնթ. թարգմ.):

պես օսմանյան հպատակներ են, ինչպես են շարժվում պատի լայնքին տարածված սպիտակ, լուսավոր մի կտակի վրա:

Նորոինակ զվարճությունների սիրահար, ամեն ինչով հետաքրքրվող քաղաքացիները խռնվում էին բրի վրա՝ տեսնելու համար, թե Բլերյոն<sup>8</sup>՝ այն մարդը, որն իր թռչող մեքենայով կտրել-անցել էր Բոսֆորից ավելի լայն մի ծովի վրայով, ինչպես է ջախջախվում Տատավիա հեղեղատի վրա գտնվող փայտաշեն մի տան վրա: Փարիզյան նորածև զգեստներով և ձեռքի շքեղ պայուսակներով զարդարված վայելագեղ կանայք իհմնում էին վիճարանական ակումբներ: Կոստանդնուպոլիսն աշխուժանում և կենդանություն էր ստանում մինչ այդ նմանը չունեցող անսպասելի դեպքերով: Այս քաղաքն ականատես եղավ (ապշեցուցիչ փաստ) գործադրությունից, որոնք տեղի ունեցան ապակեգործարանում, ծխախոտագործարանում, նավա-

<sup>8</sup> Լուի Բլերյո (1872-1936) – ֆրանսիացի նշանավոր օդաչու և ավիաշինարար: 1909թ. հուլիսի 25-ին օդային երթուղով նա առաջին անգամ կտրեց Լա Մանշը՝ Պադը-Կալեից մինչև Դուվրի նավահանգիստը (Ծն. քարզ.):

հանգստում, վիստային գործակալությունում և տրամվայի ընկերությունում: Համեստ պայման-ներում ապրող մարդիկ, գործավորներ, լայն գոտիներ կապած բեռնակիրներ, ոչինչ չարժող անձեր, իրենց թևերը ծալած, նստում և ծխելով գրուցում էին իրար հետ: «Ի՞նչ տաղտկալի տեսարան, – բացականչում էին օտարականները: – Ի՞նչ են ուզում սրանք»: – «Պարո՞ն, բնականաբար ուզում ենք աշխատանքային ժամերի նվազում և, բնականաբար՝ աշխատավարձի հավելում», – պատասխանում էին նրանք: Սակայն դա պարզապես երազանք էր, պատրանք, ցնորք էր ու բանդագուշանք: Դույն, թուրք, հայ, իրեա և բուլղարացի այն մի քանի բանվորներն ու մտավորականները, որոնք միասնաբար գեղեցիկ գաղափարն էին ունեցել Կոստանդնուպոլիսում ստեղծելու եվրոպական առումով սոցիալ-դեմոկրատական մի կենտրոն, անսպասելիորեն բախվեցին կոչտ իրականությանը և դատապարտվեցին անժամկետ բանտարկության կամ աքսորի, որովհետև մինարեբների երկրում տեղ կար միայն մե՛կ գաղափարի համար:

t

Օրերից մի օր նրանք, ովքեր, փառամոլությունից փքված, եկել էին Փարիզից կամ Սալոնիկից, Լոնդոնից, ժնևից կամ Կահիրեից և որոնք, թեև նվաճել էին իշխանությունը, բայց վարանում էին գործի դնելու այն, որոշեցին վերջապես, որ պետք էր մի քայլ անել դեպի Առաջադիմությունը: Նրանք չգիտեին՝ ինչպես շարժվել հաջողության հասնելու համար: Եվ քանի որ հարկավոր էր սկսել մի ծայրից, նրանք ամենից առաջ ձեռնամուխ եղան ազատվելու քաղաքի շներից:

Կոստանդնուպոլիսը զուրկ էր առողջապահական ամենատարրական պայմաններից: Այս մարդիկ ամեն օր ստուգում էին այդ պայմանները, քանի որ փորձառություն էին ձեռքբերել արևմտյան մայրաքաղաքների սրճարաններից և Մակեդոնիայի զորանոցներից:

Արդ, Կոստանդնուպոլսում, անկասկած տարիներից ու դարերից ի վեր, արձակ-համարձակ թափառում էին հազարավոր շներ՝ դեղին շներ, մոխրագույն շներ, սպիտակ ու սև շներ, սրածայր դնչերով շիկավուն շներ, որոնք մասնավոր մի ընկերություն էին կազմում և իրենց թվով ու վերին աստիճանի ընկերական իրենց բարքերով վերջերս գրավել էին մի քանի գիտնականների ուշադրությունը։ Շները (դա հազվագյուտ բան էր) կատարելապես բարեկամական հարաբերության մեջ էին կատուների հետ և այդպիսով հանդուրժողության զարմանալի մի ձգտում էին ցուցաբերում քաղցրությամբ և ընկերաբար ապրելու նրանց հետ։ Նրանք սիրված էին հասարակ ժողովրդի կողմից, բայց մի քանիսի կողմից էլ՝ արհամարիված։ Այս օրից, երբ քաղաքական նպատակոր փոփոխությունների բերումով դոկտ. Շաքիրը պատասխանատու մի պաշտոն էր գրադեցնում թշշկական ֆակուլտետում, շներին օգտագործում էր որպես լաբորատորիայի կենդանիներ։ Եվ շները, անսխալական բնագդով, փախչում էին նրանից, ինչպես ժանտախտից, կատաղությունից և խոլերայից։ Այս կամ

մի այլ պատճառով որոշում կայացվեց վերևից ամեն գնով վերացնել թափառական շներին, համարձակ մի գործողություն, որ առանց հաջողության հասնելու փորձել էր Մահմուդ Երկրորդը՝ մեծապատիվ Մահմուդը, այն մարդը, որ 1826 թվականի հունիսին մեկ օրվա ընթացքում ոչնչացրել էր այս հանդուգն ենիշերիներին։ Մի լուրջ գործողություն, որ առիթ տվեց զանազան իրապարակումների (դրանց հետքը կարելի է գտնել «Ընդհանուր և գործնական առողջապահություն» հանդեսում)։ Փարիզի Պաստորյան հաստատության<sup>9</sup> ներկայացուցիչներից մեկը շների վերացման համար ներկայացրեց արդյունաբերական և լոնդիանրացված եղանակով իրականացվող մի ծրագիր, որով, մարդկանց աչքերից հեռու, գազախցիկների միջոցով կարելի էր լուծել այդ հարցը, որը թվում էր շատ խնայողական ու ապագայի արժանի, և որը, ըստ նրա կարծիքի, այն առավելությունն ուներ,

<sup>9</sup> Պաստորյան հաստատություն – ֆրանսիացի հայտնի գիտնական Լուի Պաստորի (1822-1895) հիմնադրած մանրէաբանական հաստատություն Ֆրանսիայում (Ծնք. թարգմ.)։

որ թույլ կտար, առևտրական նկատառումներով, կորստից փրկել խեղդամահ եղած շների մնացորումները՝ մագերը, մորթիները, ուկորները, ճարպերը, սպիտակուցային գոյացությունները և «նույնիսկ փորոտիքը»: Սակայն երիտրուբերը վախենում էին, որ այս խորանանկ անձը պահանջեր, ինչպես հաճախ անում են օտարականներն այս երկրում, գործառնությունների համար չափազանց բարձր մի տոկոս: Եվ նրանք նախընտրեցին գործել ավանդական եղանակով, որը նվազ ծախսատար էր, թեև ավելի տեսանելի:

Քաղաքային գինվորներով շրջապատված անգործ մարդիկ, որպես գործարքային աշխատողներ, հավաքագրվեցին, որպեսզի շարժում խեղդող օղակ ունեցող երկար պարաների և ձուլածո աքցանների օգնությամբ բռնեն զանազան թաղանասերում թափառող շներին: Այս ամբողջ գործն ավարտվեց տասնինգ օրում: Կենդանիներին հայտնաբերում էին, կալմեջ անում, հետապնդում, խցկում մի անկյուն և բռնում: Շները կրվով կամ առանց կրվի հանձնվում էին, արգելափակվում սայլակների վրա դրված վանդակներում, ապա մակույկնե-

րով տարվում դեպի իրենց ճակատագիրը: Այս տեսարանին ներկա եղողներից մեկը նշում էր, որ շները, որոնք սովորաբար շատ կրվազան են լինում, երբ գրգռում ես նրանց, այս դեպքում, սակայն, միանգամից դադարում էին դիմադրելուց: «Նրանք մնում էին մեկը մյուսին սեղմված, տրտում և լուռ: Զարմացած և միաժամանակ նեղված՝ մի հայացք էին գցում քաղաքի վրա, որը երկար ժամանակ հյուրընկալել, իսկ այժմ իր ծոցից դուրս էր նետում իրենց: Ասես նրանք հարցնում էին միմյանց, թե ի՞նչ հանցանք են գործել, խորհում էին մարդկանց փոփոխանության և ապերախտության մասին և կանխատեսում այն սարսափելի ճակատագիրը, որ սպասում էր իրենց»: Մարմարա ծովի անմարդաբնակ, ժայռոտ մի կղզյակի վրա, առանց ջրի ու սննդի, սպասում էին մահվան: Նրանք մնում էին կանգնած ծովափի կլոր ու ողորկ խճաքարերի վրա, ականջները դեպի ետև, անշարժ, ապշությունից սառած: Կարելի էր հաշվել նրանց կողուուկները: Թափանցիկ և թեթև օդը շուտով լցվեց նրանց աղիողորմ ոռնոցներով՝ Բուֆորից և Ուկեղջուրից հեռու: Ապա աղմուկը

նվազեց, թուլացավ և բոլորովին դադարեց: Հասարակ ժողովուրդը սաստիկ ընկճված էր և տխուր: Բայց Միություն և Առաջադիմություն Կոմիտեի ծրագիրն ու կամքը կատարված էր:

Այդ օրերին, այդ գիշերներին, այդ ժամերին և այդ րոպեներին տեղի էին ունենում այլ իրադարձություններ, որ ժլատ մի տեղեկատվության պատճառով մարդիկ անգիտանում էին: Այն պահին իսկ, երբ երիտրուրքերի բանակն իր հաշիվը մաքրում էր շների տոհմի հետ, կայսրության տարբեր շրջանների հայ ազգաբնակչությունը տեսավ, որ հանկարծակի իր վրա են խոյանում գլխատիչների, ավագակների և մարդասպանների մշտնչենական խմբերը: «Անկարելի է տակապին ճշգրիտ մի գաղափար տալ այդ տեսարանների մասին և ոչ էլ տալ սպանվածների մոտավոր թիվը», տեղեկացնում էին Ֆրանսիայում հրատարակվող թերթերը 1909 թվականի մայիսի 15-ին: Ադանայում, Քեսարում, Լաբարիայում, Բայազետում, Անտիոքում մարդասպանները ծրագրված կերպով կատարեցին իրենց գործը: Վիկտոր Յուզո գրահանավի նավաստիներն այնպիսի հստակությամբ են լուսանկարել ալիք-

ների վրա ծփացող մարմինները, որ նայողին ահավոր անձկություն են պատճառում: «Երեք հազար հայերի դիակներ նետվեցին Աղամայից անցնող Սիհուն (Նախկին Կյուղնոս) գետը: Այժմ այս գետը ձնհալի պատճառով հոսում է հեղեղի նման, և դիակները, այս ու այն կողմ գլորվելով, գնում են դեպի ծովը, որը գտնվում է քսան կիլոմետր հեռու: Այդ դիակները, քամու հոսանքից քշվելով, սկսում են երևալ ջրերի երեսին, ծովեցերքի ամբողջ երկայնքով, և եվրոպական ռազմանավերը կարող են տեսնել, թե ինչպես դրանք, հերձատված և ուռած, դանդաղորեն քշվում-գնում են ծովափի երկայնքով... Հայտնի է չորս-հինգ տարեկան մի աղջնակի դիակը: Հայտնի է նաև ստորին որովայնից մինչև ծնոտը բացված մի տղամարդու դիակը, որի թերեն ու սրունքները կտրված են, ինչպես սպանդանոցի անասուն...» (Փրանսիացի մի սպայի նամակից՝ ուղղված Փարիզի «Ֆիգարո» թերթին):

Սահմանադրական գինվորներ, իրենց ֆեսերին չալմա փաթաթած հետադիմական ջոկատներ, երիտրուրքեր և Լեռան ծերունին, առհավական մի կատաղությունից բռնված,

լծվել էին ընդհանուր գործի: Ասես դա անխուսափելի ճակատագիր լիներ: Իշխանությանը տիրացած երիտթուրքերը կատարելապես սողոսկել մտել էին դարավոր ավանդության մեջ: Հաստատված է, որ այդ ժամանակ ընդհանուր առնամբ քսան հազար հոգի բնաջնջվեցին այրվելով, մորթվելով, մորթազերծ լինելով և անդամահատվելով: Ով չէր հավատում ճակատագրին, չար բախտին, անեծքներին կամ ազգային ոգու հավիտենությանը, կարող էր այս ողբերգական դրվագների պատասխանատվությունը գցել միայն երիտթուրքերի և նրանց կառավարության քաղաքականության վրա, որը ճիշտ հակառակն էր այն քաղաքականությանը, որ նրանք հոչակել, բարձրաձայն հայտարարել, խոստացել էին իրենց աքսորի ժամանակ: «Նրանց հակահեղափոխական բնույթը հետզիետե ավելի հստակ կերպով գուշակել էր տալիս նրանց իսկական ծրագիրը, և նրանք չուշացան շատ բնական կերպով վերադառնալ այդ քաղաքականությանը՝ իրենց նախնիների տիրակալական այն եղանակներին, որ կիրառում էր Աբրուլ Համիդը. պարբերաբար կազմակերպել արյան լոգանքներ՝ վա-

սալ ժողովուրդներին հանելով մեկը մյուսի դեմ և արևելյան եղանակով անխնա շահագործել գյուղացիությանը: Այս երկու մեթոդները հանդիսանում էին պետության գոյությունը պահող երկու հաստատուն սյուները»: Այսպես էր արտահայտվում Եվրոպացի առաջադեմ կանացից մեկը՝ Ռոզա Լյուքսեմբուրգը, որին Վիլիելմ Երկրորդը պահում էր բանտում: Այսպիսին էր այն վերջնական դատողությունը, որ նա իր զնդանի խորքից ձևակերպում էր Թուրքիայի տերը դարձած Միություն և Առաջադիմություն Կոմիտեի մասին:

2

Որ այս որոշակի ժամանակահատվածում Թուրքիան անցկացրել է փորձություն փորձության հետևից, դա աներկբա է: Տրիպոլիս և Կիրենայիկան սահում-գնում էին նրա մատների արանքից, Բալկանյան թերակղզում առաջացած խռովությունները փորացավ էին տալիս նրան: Անկուշտ իտալացիները թնդանոթածգությամբ յուրացնում էին Բերենիկեն, Կյուրենին և աֆրիկյան անապատի հնադարյան ավերակները: Մոնտենեգրոյի թագավորը պատերազմ էր հայտարարում Թուրքիային. այդ պատերազմին խառնվում էին Բուլղարիան, Սերբիան և Հունաստանը. սերբերը՝ ոստիկանական գդակներով, հույները՝ կեպիներով, իսկ թուրքերը՝ չալմաներով: Սրանք ջորիների նման բեռնավորված, զինվորական պայուսակներն իրենց մեջքին, իրար էին փնտրում և

կոիվ մղում Ալբանիայում, Մակեդոնիայում, Մոնաստիրում, Կումանովյում, Յանինայում, Վարդարի հովտում և Դավատի կիրճում: Բուլղարացիները խորանում էին Թրակիայում: Կարծ ասած՝ օսմանյան Մեծ Թուրքիան թուլանում էր, կազմալուծվում, բգիկ-բգիկ լինում: Զինվորների երկար շարաններ ձգվում էին ընդարձակ դաշտավայրերում՝ փամփշտակալներ կապած իրենց իրանների շուրջը և Մարտինի-Անրի մակնիշի միփողանի հրացաններ դրած իրենց ուսերին: Ծանրաշարժ ծիեր դարուվոս ճանապարհներով քաշ էին տալիս թնդանորներով ծանրաբեռնված սայլեր կամ իրենց մեջքի վրա կրում ռազմամթերքով լի արկդեր և լեռնային ռմբարձակ մեքենաներ: Այն անվերջանալի ճանապարհները, որ զինվորներն ստիպված էին կտրել ոտքով, այնքան թուլացնում, ուժասպառ էին անում նրանց, որ նրանք հազիվ կարողանում էին պառկել կողքի՝ տաքանալու համար վառվող կրակներին մոտիկ: Ուտելու համարյա ոչինչ չկար, որ լցնեին իրենց ստամոքսը: Յացը, տաք ապուրը ակնթարթային մի հիշողություն էին միայն: Յարկավոր էր գիշերը վեր կենալ ու գաղտագո-

ղի գնալ ձեռք բերել լրված շտեմարաններուն մնացած ցորենի կամ եգիպտացորենի հատիկներ: Երբ որ մեկ կամ մյուս կողմում գործը դեպի վատն էր գնում, պատերազմողներն, իրենց սպաններով հանդերձ, իրենց ոտքերը քամուն դեմ տված՝ անհոգ պառկում էին:

Երիտրուրքերը իրարահաջորդ այս պատերազմների վրա էին հիմնում իրենց ստահոդ առասպելները և հավատում իրենց արդարացիությանը: Շրջապատված դիվահարների հսկայական մի բազմությամբ, որոնք բարձրադարձակ գոչում էին՝ «Կեցցե՛ պատերազմը», «Կեցցե՛ Միությունը և Արածադիմությունը», Ենվերը, Բարձր Պոան շենքին, հենց իր ձեռքով վերացրել էր մի նախարարի՝ նրա աչքի մեջ արձակած իր մի գնդակով: Թալաարի հետ միասին նրանք բռնի ուժով և սպառնալիքով արդեն անզոր դարձած Մեծ վեզիրից կորզել էին իր հրաժարականը և նրա փոխարեն նշանակել իրենց մարդկանցից մեկին: Օրենքը՝ ամեն բան անելու և ամեն բան քանդելու այդ գերագույն կարողությունը, նրանց էր պատկանում: Նրանք երկշուտ, թույլ նարդիկ չէին, նրանք կարողանում էին ներկան ենթարկել իրենց

կամքին: Մի օր Խորհրդարանում (որովհետև հեղափոխությունից ի վեր Թուրքիայում գոյություն ուներ մի խորհրդարան), երբ Բուսիոս Էֆենդին՝ Սերֆիջիեից ընտրված մի պատգամավոր, գանգատվում էր հույն վաճառականների նկատմամբ ցույց տրված անարդար և թշնամական վերաբերմունքից, որոնց չեր բույլատրվում ազատորեն վաճառել իրենց ծիրապտուղներն ու սարդինները, հանկարծ նախարարների գբաղեցրած նստարանների կողմից նրա խոսքը կտրեց Թալաաթը՝ ասելով. «Լոիր, մենք քեզ ճանաչում ենք»: Հույն ներկայացուցիչը, որ խստաբար մի մարդ էր, դիմադրծեց նրան՝ ասելով. «Դու ինքը պետք է լուս, դու ինձ չես վախեցնում, դու չգիտես, ուրեմն, որ ես խոսում եմ ազգային այս բարձր անքինից, դու իմ աչքին մի մոջյուն ես միայն»: Արդ, Թալաաթը գիտեր, որ ինքն ամեն ինչ է, բացի դրանից: Նա պատգամավորին կոչեց քերաթ<sup>10</sup> և էֆշրիե<sup>11</sup>, որ կարող է նշանակել՝ կոտոշավոր, անկիրթ շինական կամ ստա-

<sup>10</sup> Քերաթ – բուրքերեն՝ խորամանկ, խարող, ստահակ:

<sup>11</sup> Էֆշրիե – բուրքերեն՝ ավազակ:

հակ: Մի ուրիշ անգամ, երբ Զոհրապ Էֆենդին՝ Կոստանդնուպոլիսի պատգամավորը, երկարորեն խոսում էր երկաթուղու ընձեռած բարիքների մասին, երբ նրան հակածառում էր ալբանացի հսմայիլ թեմալ բեյը, և երբ վիճաբանությունը, շեղվելով, ի վերջո հանգեց շռայլված ավելորդ վարձատրությունների, պարզեների, մանր ծառայությունների համար սրան-նրան տրված նվերների հարցին, երիտրուքերը, զայրացած, ոտքի ցատկելով, հարձակվեցին իրենց հակադրվողների վրա և Խորհրդարանի ներսում ապահեցին ալբանացուն՝ աններելի վիրավորանք հասցնելով նրան: Երիտրուքերը ծայրահեղ նվիրվածություն չէին ցուցաբերում Խորհրդարանի հանդեպ: Նրանք նախաընտրում էին սահմանափակել անհատի ազատությունը: 1914 թվականին նրանց ձեռքում էր գտնվում բացարձակ իշխանությունը: «Զարկավոր է, որ մեկնումեկը կառավարի Թուրքիան, – ասում էին նրանք, – իսկ ինչո՞ւ ոչ մենք»: Թալաաթ փաշան Ներքին գործոց նախարար էր, ենվեր փաշան՝ Ռազմական նախարար, Զեմալ փաշան՝ Ծովային նախարար: Մեկ բռնակալի փոխարեն Թուրքիան վաստակել էր

Երեքը: Սրանց հետևում, կիսաստվերի մեջ կանգնած էին Նազիմը, Շաքիրը, Արանց աշակերտների գունդը, ինչպես նաև Միություն և Առաջադիմություն Կոմիտեի քարտուղար Սահիդ Ջալիմը որպես Մեծ վեզիր:

Երբ 1914թ. հունիսի 28-ին Ավստրիայի մեծ դուրս ֆրանսուա Ֆերդինանդն սպանվեց Սարակոյում մի սերք ազգայնամոլի կողմից, երբ ֆրանսիացի ժան Ժորժն ընկավ ծայրահեղ աջակողմյան մի մոլագարի արձակած գնդակից Կրուսասան սրճարանում, երբ ամբողջ Եվրոպան միանգամից հայտնվեց պատերազմի մեջ, Միություն և Առաջադիմություն Կոմիտեն, դեռևս աշխույժ և պատրաստ նոր արկածախնդրությունների, թերքեց Վիլհելմ Բ կայսեր կողմը: Դժվար էր գուշակել, թե երիտրութերը ինչ էին սպասում այդ պատերազմից: Ճեշտ չէր կարդալ, թե ինչ էր գրված նրանց ուղեղում: Ոչ ոք նրանցից, ովքեր փորձել են հասկանալ մթին խորհուրդը, նշում էր ին իմաստուններից մեկը որպես պատգամ, դեռ մի քայլ չի արել խավարի շրջանակից դուրս: Բայց ին իմաստուններն անտեսվել էին: Դոկտ. Նազիմը խանդավառ բանաստեղծ-

ներից փոխ էր առել այն ժամանակ որոշ դրապաշտ փիլիսոփաներից և ընկերաբաններից (սոցիոլոգներից) վերցված գնահատանքի արժանի մի գաղափար, որ բօախնդիր բժիշկներ, ոյուրաքորբոք փաստաբաններ և հետամնաց ուսանողներ գրավիչ էին գտնում, մի գաղափար, որ առաջին հերթին հրապուրում էր գոռոզ զինվորականներին, մի գաղափար այնքան կախարդիչ, որ գերի էր դարձնում ինչպես արդիական մտքերով տարված անձանց, այնպես էլ հնամոլ զանգվածներին. դա ցեղի, նախնինների, հողի, արյան, ցեղաբանական ազգի, էրնիկական արմատի զաղափարն էր՝ թուրքիզմը: Թուրքիան, Մեծ Թուրքիան, զտարյուն Թուրքիան, Թուրանը, Պանթուրանիզմը: *Türk Yurdu, Türk Ocaði*<sup>12</sup>: Այս գաղափարը տափակ էր, հասարակ, բայց՝ ոճրածին: Ամբողջ Եվրոպան դոփում էր խրամատներում: Անգլիացի, ֆրանսիացի, գերմանացի, հունգարացի, ռուս, մոլդովացի զինվորները՝ սրանք բոլորը բարեխվել մնացել էին ցրտի, ցեխի, ռումբերի խլացուցիչ աղմուկի մեջ: Մեծ Սերբիան, Մեծ

<sup>12</sup> *Türk Yurdu, Türk Ocaði* – թուրքերեն՝ թուրքական հայրենիք, թուրքական օջախ:

Գերմանիան, Մեծ Ռուսաստանը, հավիտենական Ֆրանսիան՝ յուրաքանչյուրը կրկնում էր իր փոքրիկ հանգերագը, յուրաքանչյուրը պաշտպանում էր մսի իր յուղոտ պատառը: *Պատերազմը՝ աշխարհի միակ հիգիենան*, ամենուրեք երգում էր Մարինետտին<sup>13</sup>, թիթեռնաձև փողկապով այդ ֆուտուրիստը:

1914թ. նոյեմբերին Կոստանդնուպոլսում, Թալաաթ փաշայի հայացքի տակ, Շեյխ-ուլ-Իսլամը Զիհատ հայտարարեց: Փողոցներում Մարգարեի կանաչ դրոշները խառնվում էին մահիկով և սպիտակ աստղով զարդարված կարմիր դրոշականերին: Ցուցարարները մի լավ գործ կատարած լինելու համար փշրեցին հայկական վաճառատների մի քանի ցուցա- փեղկեր:

<sup>13</sup> Ֆիլիպպո Թոնասոն Մարինետոի (1876-1944) – իտալացի գրող և բանաստեղծ, ֆուտուրիզմի (=ապագայապաշտության) սկզբնավորողը Եվրոպայում: 1909-1912թթ. ֆուտուրիզմը տիրապետող գրական հնանքը էր համարվում Եվրոպայում (Ծնթ. թարգմ.):

Ենվեր փաշան դարձավ գլխավոր հրամանատար՝ սպարապետ: Զեմալ փաշան իր գեղեցիկ նոր համազգեստի բաճկոնի վրա, որն ուներ ոսկեբանված սքանչելի ուսաղիրներ, ցուցամոլությամբ կախում էր իր պատվանշաններն ու երկարյա հաշը: Զար լեզուներն այն մարդկանց, որոնք հիշում էին նրանց խոնարի ծագումը և տեսել էին նրանց վերելքը, հաստատում էին, որ Զեմալը գիտեր մանավանդ լավ կովել պոկերի սեղանի շուրջը «Արևելյան շրջանակում», իսկ Ենվերն ապելի այգեպանի քայլվածք ուներ, քան զորավարի: Գուցե դա ճիշտ էր: Բայց նրանք գիտեին նաև մարդկանց կախել եռոտանի կախաղանների վրա Բայազիդի հրապարակում կամ Դամակոսում և ժառանգել ընթրուտացած երևելի անձանց հարստությունը: Միայն մեկ գործարքից

Ենվերն իր գրապանն էր իշեցրել քառասուն մի-լիոն գերմանական ոսկի-մարկ: Այդպիսի գործերում Զեմալը նույնաես անձարակ մեկը չէր: Այս վերջինը, վկայում էին ոմանք, նրան հակառակ, ուներ մարդասպանի դիմագիծ, որ օտարականների մոտ քողազերծում էր այն դափնը, որ նա իրականում էր:

Զեմալ փաշան բարի դեմք չուներ: Նրա մորուքը, որը ծածկում էր ամբողջ դեմքը, անկասկած այդ ժխտական տպավորության անմիջական պատճառն էր ավելի, քան այն կրակը, որ լաֆիլզում էր նրա ներաշխարհը և նկատելի էր նրա աչքերում: Այդ նույն աչքերը, սակայն, որոնք առանց այլևայլի հեղինակազրկում էին նրան, ցույց էին տալիս այնպիսի մի նուրբ խելամտություն, որի հետ Ենվեր փաշան չէր կարող մրցել:

Որ Ենվերը գեղեցկադեմ, ինքնահավան մի մարդ էր, դա ակնհայտ էր. բայց նա իր գրասենյակում կախել էր Նապոլեոն Բոնապարտի դիմանկարը, որպես պատերազմների, ծածուկ հնարամտությունների և ուրացությունների մեջ փորձառու մի զորավարի, և երբ նա խոսում էր, նրա գործածած բառերի հինգերորդը,

եթե ոչ առաջինը, միշտ լինում էր՝ «ես»: «Ես գոի եմ ինձանից», կրկնում էր նա հածուքով: Իմանալով, որ Վեղրինը և Մարկ Բոնիեն<sup>14</sup> արագ թոփքով կտրել-անցել են Տավրոսյան ծյունածածկ լեռնաշղթան, ինքն էլ հղացավ Կոստանդնուպոլիս-Ալեքսանդրիա օդային երթուղու գաղափարը, երթուղի, որի ոնթացքում ահավոր կախճան ունեցավ փոս ընկած այտերով իր համհարզը՝ Սելիմ Սադիք թեյը: Այդպիսին էր այն գինը, որ հարկավոր էր հատուցել երենն: Զինվորական կեցվածքով, թերը խաչածեած, իրանը թերեւորեն շեղ պահած, ծնոտը բարձր. ահա այսպիսի դիրքով էր պատկերված Ենվերը գեղեցկացված փոստային բացիկներում: Իր գինվորական պայուսակում դրված այլևայլ առարկաների կողքին նա իր հետ Տրիպոլի էր տարել Գյորեի Ֆառւստը՝ գորական լեզվով<sup>15</sup> դարերի խորքից եկած այն մոգական առասպելը, սարսափազդու, բայց զարմանահրաշ պատմությունն անհայտ ծագումով բացառիկ մի էակի՝ փիլիսոփաների փիլիսոփա-

<sup>14</sup> Ժյուլ Վեղրին, Մարկ Բոնիեն – ֆրանսիացի հայտնի օդաչուներ (Ծնն. թարգմ.):

<sup>15</sup> Գորական լեզու – Յին գերմաններեն:

յի, ամենագարշելի անասունի և բազմաթիվ սատանաների այն կոյանոցի<sup>16</sup>, որին մի դաշինք կապում էր բոլոր փայլուն հաղթանակներին, մեծամեծ բոլոր պատիվներին նրա կյանքի հաշված տարիների համար: Սալամանդրայի՝ կրակի ոգու, կամ օդի դիվական ոգու չարադրություններով, բյուրեղյա սրվակների մեջ իրենք իրենց վրա գալարված արու դեմքի ոգեկոչումով, մոգական անիմանալի խոսքերով, երիտասարդացնող տռփահարուց ըմպելիքներով, կենսատու էլիքսիրներով և քրծումի, հալվեխնկի, համպարի, ծիրանագույն վարդերի նուրբ շափրակների, փշրված թարմ ոսկրածութերի և երևակայական այլ նյութերի խառնուրդներով չե, որ Ենքեր փաշան ուզում էր նվաճել հավիտենությունը, այլ՝ իր գործերով: Նա հավատում էր իր աստղին: Նա ամուսնացավ Օսմանի վավերական որդիների սերնդից մի սուլթանուհու հետ և շռայլորեն ապրեց շքել թաղամասերում: Գալով Թալաարին, որը նույնքան հաղթանդամ էր և ուժեղ, որքան Ենքերը փոքրակազմ էր ու նիհար, պարծենկո-

<sup>16</sup> Ընդգծված այս բառերը բնագրում գրված են լատիններով (Ծնք. թարգմ.):

տությունը չեր պատշաճում նրան: Նա բավարպում էր իր տանը նստած՝ ջին խմելով, առանց երևալու ուրիշներին գործի լծելով, որպեսզի որևէ մեկից առաջ իմանա, թե ինչ է նյութվում օսմանցիների մոտ՝ շնորհիվ այն ամենաարդիական գործիքների, որոնց կիրարկումը սովորել էր, երբ փոստ-հեռագրատան պաշտոնյա էր տակավին: Ահա այսպես է, որ այս երեք փաշանները, յուրաքանչյուրն իր տրամադրություններով, յուրաքանչյուրն իր հակումներով, մեկնեցին պատերազմի:

Ներգրավված լինելով Առանցքի պետություններ<sup>17</sup> կողքին՝ թուրքական բանակը կռվում էր Կովկասում, Սուլեզում և Դարդանելի նեղուցներում: Ռուսները մեկ առաջանում էին, մեկ հետ էին քաշվում: Անգլո-ֆրանսիացիները ցամաք էին ելում Գալիպոլիում: Անգլո-հնդիկները իրենց աչքերն ուղղել էին դեպի Բաղդադ և Միջագետը: «Այս քյոփեքները (շները) պղծում են մեր սրբազն հողը», մոթմոթում էր Ենքերը: Թուրքական բանակը պաշտպանում էր իր կայսրությունը: Ժամանակը եկել էր պար-

<sup>17</sup> Առանցքի պետություններ էին կոչվում Գերմանիան և Ավստրո-Հունգարիան (Ծնք. թարգմ.):

գելու դրոշակաները, ցույց տալու երիտրուրքերի անսահման փառասիրությունը և վերջապես կերտելու իրենց երազած Թուղթիան: Ենվեր փաշան՝ մեծ հրամանատարը, կտրեց սար ու ձոր՝ հարձակվելու համար թշնամու վրա ցուրտ ծմբանը, հյուսիսային սահմաններում, Սարդարական ապահովված է», հոխորդում էր նա: Բուքը սուլում էր ուժգին, մտրակում զինվորների դեմքերը, փայտացնում նրանց մատներն ու մարմնի անդամները, թափանցում հագուստներից ներս: Անվերջանալի մի փորորիկ աչքից ծածկեց օսմանյան երրորդ բանակը: «Եթե ձախողվեմ, – ասում էր Ենվերը հերոսներին վայել խրոխտ ձայնով, – ապա կմեռնեմ իմ բանակի վերջին զինվորի հետ»: Դա նշանակում էր առաջանալ անիմաստ կերպով: Նրա հետևակ զինվորները խրվում էին ծյան մեջ այլևս երբեք վեր չկենալու համար: Ութսուն հազար զինվոր: Ի վերջո Ենվերն իր միտքը փոխեց: Նա ավտոմեքենա նստեց և գնաց Կոստանդնուպոլիս: Շշուկները տարածվում էին, անցնում բերանից բերան. «Ենվեր փաշան անհետացել է», «Ենվերը փախուստի մեջ է»: Պարտությունը սաստիկ հու-

զել էր նրան: Նա գունատվել էր: «Ի՞նչ եղավ», հարցրին նրան: «Կովեցինք, այդքան», խոստվանեց նա ցավով: Եվ դրանից հետո ոչ մեկին թույլ չտվեց արտասանել Սարդարակիշ անունը: Բոլորը հնազանդվեցին նրան, որովհետև նա էր ուեկավարը:

Սակայն Օսմանյան կայսրության մյուս ծայրին Զեմալը իր բախտն էր փորձում: Լսած լինելով, որ Եգիպտոսը՝ բոլոր թագավորությունների մեջ այդ օրինված հին թագավորությունը աշխարհի բանալին է, նա իր շարասյուներն առաջ շարժեց Սինայի անապատի միջով: Չէ՞ որ իրենց հաղթանակներն այդպես էին ապահովել պարսիկների և մեղացիների թագավոր Կամբիզը<sup>18</sup>, նրանից հետո՝ Արտաքսերքսեսը և ապա՝ Մեծն Ալեքսանդրը, որի փառքը գովաբանում են դարերը:

Մի օր, երբ խամսինը<sup>19</sup> իր կիզիչ հողմատույտներով բարձրացնում էր ավազը՝ մթագ-

<sup>18</sup> Կամբիզ (շուրջ 600-550թթ.) – Պարսկաստանի Արքենյան դինաստիայի թագավոր (Ծնթ. թարգմ.):

<sup>19</sup> Խամսին (արաբերեն՝ հիսուն) – Անապատային խորշակ Եգիպտոսում, որ փչում է Երբեմն մինչև հիսուն օր (Ծնթ. թարգմ.):

Աելով հորիզոնն ու երկինքը, Զեմալ փաշան իր գորագունդը, հեծելազորը, արաբական իր արագընթաց ուղղերը և 270 տրամաչափի թնդանոթներն արձակեց Խսմահլիայի վրա: Նա մտածում էր, որ Աստծու օգնությամբ և գերմանացի հմուտ ռազմագետների շնորհիվ կտիրանա տաք ծովերի միջև բացված անգնահատելի ջրանցքին՝ Պորտ-Սահիդից մինչև Սուլեզ: Մացառու տափաստաններում բնակվող ավստրալիացիները և նեպալցի գյուրիսաները<sup>20</sup>, որոնք մեծարիվ նավերով բերվել էին այնտեղ, ի դերև հանեցին նրա ծրագրերը: Զեմալը նահանջեց և իր գորակայանները հաստատեց Պաղեստինում և Սիրիայում, որտեղ շատ բան ուներ անելու:

<sup>20</sup> Գյուղիսաւ – Հնդկական մի ցեղախումբ, որ հնում, փախչելով ճահմեղականներից, ապաստանել է Նեպալում՝ Կատմանդուի հովտում (Ծնթ. թագամ.);

1915 թվականի ապրիլի 30-ին Կոստանդնուպոլսում Վիլհելմ II-ի դեսպան բարոն Յանս ֆոն Վագենհայմը կայսերական դիվանագետ Նորին Սեծություն Թեորալդ ֆոն Բերնան-Շոլվեգին խստ տագնապալի մի հեռագիր ուղարկեց Բեռլին՝ նշելով. «Ապրիլի 24-ին, շաբաթ օրվա գիշերվանից մինչև կիրակի ապրիլի 25-ի գիշերը և կիրակի օրվանից մինչև երկուշաբթի ապրիլի 26-ի գիշերը ձերբակալվեցին բազմաթիվ հայեր (հավանաբար ընդամենը 500 հոգի) հասարակության բոլոր խավերից՝ մասնավորապես թժիշկներ, լրագրողներ, գրողներ, մտավորականներ, ինչպես նաև մի քանի երեսփոխաններ»: Եվ այս բոլոր մարդիկ կտրվեցին աշխարհից: Այսուհանդեռձ երկու երեսփոխաններ խուսափեցին այս զանգվածային ձերբակալություններից ներքին գործոց

նախարարի հետ իրենց ունեցած բարեկամական հին կապերի շնորհիվ: Դրանք կոչվում էին Զոհրայ և Վարդգես: Առաջինը բոլորի կողմից գնահատված մի իրավաբան էր: Միություն և Առաջադիմություն Կոմիտեի ղեկավարները պարտական էին նրան, որովհետև նա նախկին վարչակարգի ոստիկանության խորամանկ պաշտոնյաների ձեռքից փրկել էր իրենցից մեկին, երբ այս վերջինը հետախուզման մեջ էր գտնվում: Երկրորդը անդամ էր Յայ Հեղափոխական Դաշնակցության, ողջունել էր երիտրուրբերի հեղափոխությունը և, դրանից շատ առաջ, աքսորում կամ ընդհատակում եղբայրացել էր այդ հեղափոխությունը ներշնչողների հետ: Այս երկուսը, ուրեմն, ազատ էին բողնվել ի հիշատակ հին լավ ժամանակների: Թալաաթը և Վարդգեսը գրուցեցին իրար հետ: Բայց զգացումները չեն կարող արգելք հանդիսանալ, որ կատարվեր ճակատագիրը, այն մեծ գաղափարը, որ դյուցագներգակ բանաստեղծների և մոլեռանդ բժիշկների կողմից միսվել մնացել էր զինվորականների ուղեղում, Türk Yurdu, Türk Ocaði: Մենք: Նրանք: Ցեղը, Նախնիները, Ազգը: Զգա-

ցումները չեն կարող արգելք լինել նաև անկեղծ խոստովանության: «Մենք կօգտագործենք այս նպաստավոր կացությունը, որի մեջ գտնվում ենք, որպեսզի այնպես ցաք ու ցրիվ անենք ձեր ժողովրդին, որ հիսուն տարի ձեր մտքից դուրս համեք բարենորոգման ամեն գաղափար», հայտարարեց Թալաաթ փաշան՝ ներքին գործոց նախարարը: «Ուրեմն դուք մտադրել եք շարունակե՞լ Արդուլ Յամիդի գործը», հարցրեց Վարդգեսը: «Այո՛, կտրուկ պատասխանեց Թալաաթը՝ առանց այլևս ճարտասանական նախագգուշության:

Այս խոսակցությունը հիշատակվել էր գերմանացի մի վերապատվելիի կողմից շարադրված գաղտնի մի հուշագրում և տպագրվել Պոտսդամում ողբերգական իրադարձություններից քիչ ամիսներ անց: Դրանից հետո Վարդգեսն անհետացավ Զոհրապի հետ, որովհետև լավ հարաբերությունները մի սահման ունեն, երբ մանավանդ դրանք վերաբերում են հին լավ ժամանակներին: Նրանք երկուսն ել զոհվեցին Ուրֆայի ճանապարհին Յատուկ կազմակերպության մաս կազմող մի չերքեզի ձեռքով: Զգիտես ինչու, բայց միշտ էլ գտնվում

Են վարձկան մարդասպաններ, որոնք պարծենում են իրենց գործած ոժիրներով: «Ես պայթեցրի Վարդգեսի ուղեղը Մաուզեր մակմիշի իմ ատրճանակով, ապա բռնեցի Զոհրապին, գետին գցեցի նրան և մի մեծ քարով ջարդեցի գլուխը մինչև որ մեռավ»: Այս բանը տեղի էր ունենում Շեյքան դերեսի (Սատանայի ծոր) կոչված մի վայրում: Թալաաթը, որ պատշաճություններն իմացող մի մարդ էր, նրա այրի կնոջը հայտնեց, որ ամուսինը մահացել է սրտի կարվածից: Յալեափի գերմանացի հյուպատոսը, որ կոչվում էր Վալտեր Ռուլեր, այս երկու երեսփոխանների դժբախտ ճակատագրի մասին իր վերադասներին հաղորդել էր հետևյալ տեղեկությունը. «Զոհրապ և Վարդգես էֆենդիները՝ երկու հայտնի հայ երեսփոխանները, այժմ գտնվում են Յալեափում: Նրանք մաս են կազմում Դիարբեքիր գնացող տարագիրների խմբին: Այնտեղից մեզ հասած լուրերի համաձայն, բոլոր հիմքերն ունենք մտածելու, որ նրանց համար դա վստահաբար նշանակում է մահ»: Բայց մեռելներին այլևս չին հաշվում. դրանք իրար վրա կուտակվում էին ճանապարհների երկայնքին, ջրհորների, ծորերի

խորքում, գետերի եզերքներին, իրդեհված գյուղերի ավերակների տակ, անապատների քարանձավներում:

Բոլոր կողմերից, բոլոր նահանգներից այդ մասին բարձրանում էին լուրեր. իրար խաչաձևող տեղեկությունները հաստատում էին ծշմարտությունը: Յակառակ, որ այդ լուրերը խեղդվում էին պատերազմական հաղորդագրությունների հեղեղի տակ, և հակառակ գյուրյուն ունեցող գրաքննությանը, որանք տեղ էին հասնում ամենաարդիական միջոցներով, այսինքն՝ հասնում էին դիվանագիտական ներկայացուցություններին, Արտաքին գործոց նախարարություններին, ամենատարածված թերթերի խմբագրություններին, հակառակորդներին, բարեկամներին, չեզոքներին: Անտեղյակությունն ավելի շուտ դրսևորվում էր ոճագործության թատերաբեմում: «Ամերիկայում դուք հավանաբար դեռ չեք իմացել այս սարսափելի տագնապի մասին, որի միջով անցնում են թրքահայերը այս պահին», գրում էր 1915թ. հունիսին Կոստանդնուպոլսից «Թույլատրված մի աղբյուր» Նյու Յորքի հայրենակիցներին: Այդպիսին էր ծշմարտությունը: 1915 թվականի

ապրիլի 28-ի և 29-ի իր համարներում «Եյու Յորք Թայմզ» արձագանքել էր օսմանյան կառավարության մոտ Միացյալ Նահանգների դեսպան Յենրի Սորգենթաուի կողմից ձեռնարկված քայլերին: Դեսպանը նրբամիտ և ականավոր անձնավորություն էր: Նա իր գրասենյակում ընդունում էր օտար ճանապարհորդների, մասնավորապես միսիոներների, որոնք տարբեր պետությունների քաղաքացիներ էին և իրենց առաքելության բերումով ցրվել էին Թուրքիայի զանազան նահանգներում և ճանապարհորդների վրա. և ահա այդ միսիոների, այդ ճանապարհորդների և ազգային տարբեր ծագում ունեցող այդ օտարականների բերանից նա լսում էր համանձան, նույնատեսակ, նույնանձան սարսափելի պատմություններ, որոնք իրարից տարբերվում էին միայն սպանության համար ի գործ դրված ահավոր տանջանքների, խոշտանգումների մանրանասնություններով: Թեև այդ եղելությունների կապակցությամբ միջամտություն անելը շատ դուր չէր գալիս նրան, և դա նշանակում էր սոսկ ամերիկյան շահերը պաշտպանելու սահմանված իր լիազորությունից այն կողմ անց-

նել, այնուամենայնիվ դեսպան Մորգենթաուն որոշեց այդ մասին իր մտահոգությունները հայտնել Սիություն և Առաջադիմություն Կոմիտեի դեկավարների դեկավարին՝ ներքին գործոց նախարար Թալաարին՝ հուսալով, որ իր միջամտությունը բարենպաստ մի օրվա կիանդիափի: Նա նկատել էր, որ Թալաարը սիկլոթիմիկ խառնվածքի տեր մի մարդ է և, որպես այդպիսին, խստագույն զայրույթից միանգամից կարող է անցնել սիրալիր, ուրախ, զվարք տրամադրության: Հավանականությունը, սակայն, չնչին էր: Թալաարը չէր սիրում, որ իր հետ խոսեն հայերի մասին. դա կատաղեցնում էր նրան: Թալաարը նախընտրում էր, որ իր վարմունքը չափավորությամբ թելադրվի իրեն, որ մարդիկ զսպվածությամբ խառնվեն իր գործերին՝ համարելով, որ իր գործերը հենց պետության գործերն են: «Ինչու՞ եք հետաքրքրվում հայերով», – հարցրեց նա կոպիտ կերպով, – դուք իրեա եք, և այդ մարդիկ քրիստոնյա են»: Այս պարզունակ դատողությունն ապշեցրեց դեսպանին, որը, սակայն, որոշ չափով ծանոթ էր իր խոսակցի մտայնությանը: «Երևի դուք չեք հասկանում, որ ես այստեղ եմ

գտնվում ոչ թե հրեայի հանգամանքով, այլ՝ որպես ամերիկյան դեսպան... Ես ձեզ չեմ դիմում մի ցեղի կամ մի կրոնի անունից, այլ դիմում եմ պարզապես նարդկության անունից: Դուք բազմիցս ասել եք ինձ, թե ցանկանում եք Թուրքիան դարձնել դեպի առաջադիմություն գնացող մի ազգ: Այն ձևը, որով դուք վարվում եք հայերի հետ, ձեզ չի օգնի բնավ իրագործելու ձեր ցանկությունը: Ընդհակառակը, ձեզ կիամարեն հետադիմական մի ժողովուրդ, որ շատ հետ է մնացել մյուս ժողովուրդների համեմատությամբ»: Առաջադիմություն, հետադիմականներ... Այս բառերը, որոշ պարագաներում, կարող էին փաշային հետ տանել դեպի *Մեշվերերի* գնահատելի գաղափարները, որոնք մանրակրկիտ կերպով մշակվում էին Փարիզի և Սալոնիկի սրճարաններում և վիճաբանության սրահներում, վերադարձնել նրան ընդհատակում գտնվող երիտասարդ Թուրքիայի այն փառասիրական ծրագրին, որը հիմնված էր օսլայած ծալովի օձիքով շապիկներ հագած արդիական ընկերաբանների դրապաշտ փիլիսոփայության վրա: Բայց Թալաար փաշան, որ այժմ իր ափի մեջ ամուր էր պա-

հում Օսմանյան կայսրության բոլոր հպատակների կյանքի և մահվան վրա իր ունեցած իշխանությունը, թվում էր անմատչելի իրենց դարն ապրած այդ դատողությունների համար: «Կարելի չէ վստահել հայերին, – կտրուկ ասել էր նա: – Եվ, բացի այդ, նրանց հանդեա մեր վերաբերմունքը Միացյալ Նահանգների գործը չէ»: Այո՛, երիտրուրքերի ասելով՝ դա ոչ մեկի գործը չէր, այլ՝ միայն բոլք ոստիկանների, զափթիենների և Յատուկ կազմակերպության գործը:

du

Հատուկ կազմակերպությունը ստեղծվել էր մասնավորապես պատերազմի կեղտուտ գործերը առաջ տանելու նպատակով: Արդյունքի հասնելու համար հարկավոր էր, որ այդ գործերը կատարողները լինեին շահագրգուված անձինք: Բանտերը բերնեքերան լցված էին այդ կարգի սրիկաներով՝ գողեր, ավազակներ, մարդասպաններ: Բանտախուցերը բացվեցին ուրեմն քրեական հանցագործություններ կատարած այս մարդկանց առջև այն պայմանով, որ նրանք ստորագրեն, թե հանձն են առնում հնազանդությամբ և հավատարմությամբ կատարել իրենց տրված իրահանգը: Այդպիսով նրանք իրենց ազատության հետ մեկտեղ ձեռք կրերեին նաև իրավունք՝ ստանալու հատուցում իրենց որսի դիմաց: Այս տիսուր նպատակով ստեղծված Հատուկ կազմակերպությունը,

որ թուրքերեն կոչվում էր *Թեշքիլար-ի-Մահսուսե*, ուղղակիորեն և բացառապես կախված էր Միություն և Առաջադիմություն Կոմիտեից, և կառավարական ոչ մեկ հաստատություն իրավունք չուներ միջամուս լինելու նրա գործերին: Այս կազմակերպությունը դրված էր դոկտ. Նազիմի և նրա գործակից Բեհաեդին Շաքիրի իրավասության տակ: Սա մի կառույց էր, որ կատարելապես պատշաճեցված էր այս մարդկանց արմատական մտքերին. մի տեսակ արդիական գորաբանակ: Այո՛, արդիական, ուժեղ և ազդեցիկ, բոլոր օրենքներից վեր, եթե ենթադրենք մի պահ, որ օրենքներ իրապես գոյություն ունեցել են երիտրուրքերի երկրում: Այս կազմակերպության գործունեության համար անհրաժեշտ եղող փողը (որովհետև փողը մնում է պատերազմի ջիղը) գալիս էր կուսակցության գաղտնի ֆոնդերից, նրա գործողությունների ընթացքում կատարված հակիշտակություններից. գենքերը դուրս էին բերվում զինվորական զինապահեստներից: Յատուկ կազմակերպության հրահանգները կատարող խմբերը ծանոթ էին չեթե անունով: Դոկտոր Բեհաեդին Շաքիր բեյը սքանչելի մի գործա-

ռար էր, ջանասեր, խոհուն մի մարդ, որ ոչ մեկ բան պատահականության չէր թողնում: Այս հատկությունները նա արդյոք ծեռք էր բերել կայսերական բժշկական համալսարանից, որտեղից վկայվել էր, թե՞ Փարիզում, այն քաղաքում, որտեղ նա մասնագիտացավ հոգեբուժության և դատական բժշկագիտության մեջ՝ հաճախակի լինելով հանդերձ աքսորականների սեղմ միջավայրում, և կամ արդյոք իսբանքովի դիազննարանում, որի վարիչը լինելու երջանկությունն էր ունեցել նա պատեհազմից առաջ: Այս ընդունակությունները նրան դարձրել էին անհրաժեշտ մի անձնավորություն այն առանձնահատուկ պաշտոնում, որ փոխանցվել էր իրեն: «Տեղահանված հայերը ոչնչացվա՞ծ են», – հարցաքննում էր նա Խարբերդի վակիհն 1915 թվականի գարնանը: – Տեղեկություններ տուր ինձ կոտորածների մասին: Վստանգավոր անձինք կոտորվա՞ծ են, թե՞ պարզապես քաղաքներից վտարված և աքսորված: Յստակ կերպով ասա՛ ինձ, եղբայր»: Մեքենան ընթացքի մեջ էր դրված: Մեքենան սկսել էր գործել լիարժեք: Արդյունքը գերանց գանց էր:

Աղետների մայրը՝ Զարագործությունն ու Նենգությունը, անողորմաբար հարվածել էր նրանց, ովքեր ապրում էին այնտեղ: Երբ մունետիկը իր թմբուկով հայտարարում էր, թե մեկնելու ժամանակը եկել է, նրանք հավաքում էին իրենց իրերը, դուրս էին գալիս տնից հետիոտն, անվերջանալի շարաններով, շրջապատված ոստիկաններով և այդպես բռնում իրենց մահվան ուղին: Նրանք որոշ ժամանակ առաջանում էին մտրակների հարվածների տակ, ապա, երբ քաղաքներից, գյուղերից և ավաններից մի քանի մղոն հեռացած էին լինում, չեթեները իրենց բազմապատիկ ծիերով հանկարծակի խոյանում էին նրանց վրա և միանգամից սպանում: «Կոտորում են մեզ, բնաշնչվում ենք, խյակների ենք վերածվել», ճշում էին սպանվողներն իրենց սպանության պահին: Բայց նրանց պաշտպանելու համար ոչ մի ուժ չկար, իսկ նրանց աղաղակները լսելու համար հազիվ թե գտնվեր մի գրասիրտ անձ: Նրանց սպանելը ծանր գործ էր: Պատահում էր, որ անհրաժեշտ էր լինում հատկացնել անընդմեջ չորս ժամ՝ խողխողելու համար մի քանի հազար հոգու:

Այն ժամանակ ընտանիքն այն տղայի, որը կոչվում էր Սողոմոն և որը նրբակազմ մի պատանի էր, հեռացավ իր բնակարանից: Դա տեղի էր ունենում ամռան սկզբին: Նրանք բոլորը՝ Երզնկա քաղաքի և նրա շրջակայքի բոլոր հայերը, հավաքվեցին Արևելքի խստաշունչ բարձունքների վրա: Նրանց ասացին, որ կարող են իրենց հետ տանել իրենց գույքը, բայց նախ պետք է հանձնեն իրենց փողերն ու գոհարեղենը, որպեսզի դրանք ապահով կերպով պահպանվեն մինչև իրենց վերադարձը: Դրա փոխարեն նրանք փողերը թաքցրին իրենց տների տակ, իոդի մեջ, ապա իրենց հետ վերցնելով իրենց ավանակը, գուցե նաև մի սայլ՝ ընկան ծանապարի: Նրանք քաղաքից շատ հեռու գնալու ժամանակ չունեցան, որովհետև զինվորներն իսկույն սպանեցին նրանց՝ Երզնկայի տեղահանված բնակիչներին և Սողոմոնի ընտանիքին էլ նրանց հետ միասին: Մի ոստիկան առևանգեց նրա քրոջը (ոստիկանները այդ բան անելու իրավունք ունեին), իսկ մայրը գիտենալով, թե ինչ է պատահելու իր աղջկան, աղաղակեց՝ «Կայ, քոռանամ»: Բայց նրա մայրն իսկույն մեռավ, եղբայրը նույնպես՝

գանգը երկու մասի ճեղքված: Այսպես վերացան ընտանիքը, բոլոր հարևանները և ծանոթներն այն տղայի, որը կոչվում էր Սողոմոն: Իսկ Սողոմոնը, որ, այս կամ այն պատճառով, խուսափել էր կոտորածից, մեկնեց Պարսկաստան, Սալմաստ անունով մի քաղաք, որտեղ մտավ մի վաճառականի մոտ ծառայության:

Այն տղան, որը կոչվում էր Արշավիր և որը զվարթ ու արթնամիտ մի պատանի էր՝ թեև հորից որբացած, ում մեծացրել էր նրա մայրն այն քաղաքում, որի եզերքները ողողվում էին Բոսֆորի և Ոսկեղջյուրի ջրերով, չիե՞ռացավ այդ քաղաքից, բայց ուրախությունն ու անհոգությունը ընդմիշտ լքեցին նրան: Նա բնակվում էր Պերայում, երբ մի օր ամենի մի մեծ ամբոխ, զինված քարերով և մահակներով, անցավ Գալաթայի կամքով առանց անցագին վճարելու: Նա տեսավ, թե ինչպես էին փշրվում Թոքարլյան մեծ հյուրանոցի ապակիները, և թե ինչպես ոստիկանները, հայինյելով, բրտությամբ հարվածում էին իր նմանների տան դռներին, բռնի ուժով ներս մտնում և տանում նրանց, ում ընտրում էին: Արշավիրը մնաց Կոստանդնուպոլսում և օգնեց, որ մառաննե-

րը, ախոռները, ծեղնահարկերը վերածվեն թաքստոցների՝ փախստականներին թաքցնելու համար, որովհետև նա իր տասը մատների պես գիտեր քաղաքի բոլոր նեղ փողոցներն ու ծածուկ անկյունները: Ահա այսպիսին եղավ նրա գործունեությունն այնքան ժամանակ, որքան տևեց պատերազմը: Գալով այն մյուս տղային, որը կոչվում էր Ստեփան, զգիտենք, թե նա ո՞վ էր:

առնելու մասու ցույցը՝ խորհրդական քանին  
առաջ գոյց ըստ պատճենի վայրի և բարեկա-  
րգական վեճութեան առաջնային ազգական և

## ԺԲ

առաջ գոյց առաջնային առաջնային վեճութեան  
առաջ գոյց առաջնային առաջնային վեճութեան

Երգնկայից ոչ հեռու, Քեմահ Բողազը կոչ-  
ված վայրում կանանց և երեխաներին ժայռերի  
բարձունքից նետեցին Եփրատ գետը: Գլխատ-  
ված տղամարդիկ, սվիններով շամփրված  
մարմիններ, իրար կապված, սփռված էին ճա-  
նապարհների վրա և դաշտերում: Այն կանայք,  
որ պատմում էին այս բանը, դանիացի երկու  
հիվանդապահուիհներ էին, որոնք ծառայում  
էին գերմանական զինվորական Առաքելու-  
թյան մեջ: «Բայց ինչու՝ եք տանջում նրանց  
այսպիսի անպատճելի ձևերով»,— հարցնում  
էին նրանք զափթիեներին, այն պահակներին,  
որոնք տարագրվածների վրա նշանակվել էին  
որպես հսկիչներ:— Ինչու՝ տեղնուտեղը վերջ  
չեք տալիս նրանց»: Այն ուստիկանները, որոնք  
տեղյակ էին Միություն և Առաջադիմություն  
Կոմիտեի ծրագրերին, պատասխանում էին

իրենց պարզ բառերով և իրենց տրամաբանությամբ. «Պետք է նրանք ճանաչեն, թե ի՞նչ բան է տառապանքը: Բացի այդ, ի՞նչ էինք անելու նեխված դիակները»: Եվ ճանապարհի եզերքին նրանք իրենց միջև բաժանում էին մի տարատ, մի ծածկոց, մի գույգ կոշիկ, որպեսզի նրանց դիակները մնան մերկ և բաժին դաշնան անգղերին ու շնագայերին:

Այդ, վաստակելու շատ ավելի բան կար, քան այդ ողորմելի իրերը: Ամեն ինչ կարելի էր ծերոք բերել ոչինչ գնով. եզներ, ավանակներ, աղջկներ, ջորիներ, երեխաններ, գեր ոչխարներ, դրամ: Եվ դեռ տնական կահկարասիններ, արռոններ, նստարաններ, դրվագված փայտյա զարդեր, ներկված դրսներ, պատուհաններ, ուսկեզօծ հայելիններ, պղնձեն նոփզնոր ասղանոցներ, Զինգեր մակնիշի կարի մեքենաններ: Այն մարդկանցից, որոնք ճանապարհ ընկած դեպի Մալաթիա և Ուրֆա, մի թուրք սպա պոկեց չորս հարյուր լիրա՝ երդվելով, որ այդ գնով նրանք իր հետ միասին տեղ կհասնեն առանց որևէ արգելքի: Բայց առաջին իսկ երեկոյան նա ծլկվեց՝ այդ գումարը գրպանած: Երրորդ օրը նստիկանները կալանավորներից պահանջեցին

երկու հարյուր լիրա որպես վճար նրանց պաշտպանության համար, բայց հետո նրանց հանձնեցին քուրդ ավագակների ծեռքը: Կալանավորների շարանը գնալով նոսրանում էր լինի այն պատճառով, որ քայլողները ճանապարհին խողխողվում էին, լինի այն բանի համար, որ նրանցից շատերը ուժասպառ մահանում էին արևի կիզիչ շողերի տակ: Այն կալանավորներից, որոնք հասան մինչև Մուրադ գետը, պահակագնդի ղեկավարներից մեկը անձ գլուխ ստացավ մեկ լիրա, որպեսզի նրանց չխեղդի գետի մեջ: Յիսուններորդ օրը լրանալուց հետո, այն հազվագյուտ մարդիկ, որոնք հոգնաբեկ չեն ընկել, ուզեցին իրենց ծարավը հագեցնել ջրի մի ակից: Պահակները նրանց ստիպեցին վճարել երեք լիրա յուրաքանչյուր բաժակի համար: Եվ այսպես, վաթուններորդ օրը, մեկնող տասնութ հազար հոգուց մնացել էր միայն երեք հարյուր վերապրող և դեռ ավելի պակաս, երբ նրանք հասան Ռաս-ուլ-Այն, որտեղով անցնում էր Բաղդադի երկարուղագիծը:

«Այս բոլորը մեզ զվարճացնում է», հայտարարեց ցմփոր Թալաաթ փաշան դեսպան Մոր-

գենթառի հուզված կնոջը: Փաշան անհաղորդ էր ննում լավ հագնված ամերիկացի կանանց զգացումներին: Եղջուրավոր իժերի նման սուլելով՝ Յատուկ կազմակերպության կոշտ ու կոպիտ վարձկանները իրենց սայլերը մինչև բերանը լցնում էին ոսկե և արծաթե դրամներով, գոհարեղենով, ոսկեղեն զարդերով, հագուստներով, մետաքսե կորոններով, բրդյա գորգերով: «Մտածեք նյութական կորուստների նախան», իիշեցնում էր ամերիկացի դեսպանը ներքին գործերի նախարարին վերջին մի փորձ կատարելով, որովհետև հավատում էր, որ իր տրամաբանությունը ներգործող ուժ կունենա: «Մենք արհանարիում ենք տնտեսական կորուստները, – պատասխանեց Թալաաթը, – մենք հաշվել ենք և գիտենք, որ կորուստները հինգ միլիոն լիրայից այն կողմ չեն անցնի: Դա մեզ չի անհանգուացնում բնավք»: Յենրի Մորգենթառը փորձում էր տրամաբանության կոչ անել ենվեր փաշային՝ հավատալով, որ նրա մոտ հաջողություն կունենա: «Դուք ձեր երկիրը տնտեսապես սնանկացնում եք», – ասում էր նա: Բայց ենվերը իր ուսերն էր թոթվում՝ պատասխանելով. «Տնտեսական նկատառումնե-

ոը մեզ համար մեծ կարևորություն չեն ներկայացնում այս պահին»: Նրանք նույն ըմբռնումը չունեին տնտեսական հարցերի մասին: Կողոպտված իրերի մեկ մասը գնում էր չեթեներին<sup>21</sup>, իսկ մեկ մասն էլ՝ Միություն և Առաջադիմություն Կոմիտեին: Յաստագլուխ չեթեները գիտեին, թե որտեղ է պահպում փողը: Նրանք ոսկեդրամները թքել էին տալիս այն մարդկանց, ովքեր դրանք թաքցնում էին իրենց բերանում, խուզարկում էին կանանց, տղամարդկանց և դեռահասակ աղջիկների ամոթույքը և մինչև իսկ մեռելների աղիները՝ չորս մասի բաժանելով նրանց մարմինները:

Եթե մի քանի զգայուն սրտեր, որպիսիք գոյություն ունեին տակավին, փորձեին խնդրո առարկա պետական շահերի համար ընդունելի սահմանից այն կողմ անցնել կամ չկամություն ցուցաբերել հարգելու տրված հրամանները, ապա այդպիսիք պարտավոր էին իսկույն ներկայացնել համոզիչ մի փաստարկում: Երրորդ բանակի հրամանատարը հստակ կերպով արտահայտել էր այն որոշումները, որոնք ձեռք

<sup>21</sup> Չեթե – թուրքերեն՝ ազգայնամոլ հելուզակ:

էին առնվելու այդպիսիների նկատմամբ. «Այն մահմեղականները, որոնք համարձակվում են հայերին ընդունել իրենց տաճը, կախաղան պիտի հանվեն հենց իրենց տաճ առաջ, որը հրդեհվելու է»: Եվ եթե դժբախտաբար պատահեր, որ օտարականներ մի վատ պահին գտնվեին մի վատ տեղում և իրենց թերահավատ աչքերով տեսնեին այն, ինչ իրենց չեղ վերաբերում, արգելք չկար վճռականապես հերքելու ասվածները և տեղի ունեցածը վերագրելու պատերազմի թոհութուին, տիրող ընդհանուր քառսին, ազգերի հասկանալի շահերին՝ մոռացության տալու համար տիհած հետևանքներ ունեցող նրանց վկայությունները:

Այսպես է, որ, երբ ապրիլի 28-ին գերմանացի դեսպան Բարոն ֆոն Վանգենհայմն ստացավ շտապ մի տեղեկագիր այն ստոր գործողությունների մասին, ինչպիսիք էին հայերի բնակարանների հրդեհումը և երևելի անձանց սպանումը փողոցում, որոնց ներկա էր եղել երգորումի իր հյուպատոս ֆոն Շոյբներ-Ռիխտերը, նա, որպես պատերազմի անխուսափելի հետևանքներին սովոր անձ, շատ չվարանեց, թե ինչպիսի վերաբերմունք պետք է ցույց տա.

անշուշտ նախընտրելի էր արգելել, որ խաժանուժ ամբոխը գնա այնպիսի ծայրահեղությունների, «ինչպիսիք էին կոտորածներն ու թալանը», իսկ «դրան հասնելուց հետո հարկավոր էր խուսափել այն տպավորությունը թողնելուց, թե մենք մեզ իրավունք ենք վերապահում պաշտպանել հայերին և ուզում ենք միջամուխ լինել իշխանությունների գործերին»: Աղանայից, Ալեքսանդրետից, Յալեսից բարոնն ստանում էր գեկույց գեկույցի հետևից՝ բոլորն էլ նույն բովանդակությամբ, բոլորն էլ լի արյունալի նյութերով:

Յյուպատոսները, որոնք շատ մոտ լինելով իրադարձություններին՝ տեսնում էին, թե մարդասպաններն ինչպես են գործում իրենց աչքի առաջ, ցուցաբերում էին այնպիսի արգահատանք, կարեկցանք և զգվանք, որ մտահղություն չեր պատճառում ավելի բարձր դիրքի վրա գտնվողներին: «Բացահայտ է, որ կառավարությունը այսպիսի բարբարոսական միջոցների դիմելով՝ վճար է պատճառում իր երկրի շահերին» (Բյուգե, գերմանացի հյուպատոս Աղանայում, 18 մայիսի 1915): «Բավական է ինչպիսի դժբախտ դեպքեր տեղի ունեցան,

ժամանակն է, որ վերջ տրվի դրանց» (Ռուսլեռ, հյուպատոս Յալեպում, 26 մայիսի 1915): «Ես հայտնեցի տեղական իշխանությանը, որ այս բոլոր ոճիրները ահավոր սարսափ են պատճառում ինձ» (Յոլշտայն, հյուպատոս Մուսուլում, 10 հունիսի 1915): Իր ստորադասների դրսնորած մակերեսային այս հակազդեցությունների դիմաց, որոնք կարող էին հասկանալի լինել բարոնին, նա չէր մոռանում, որ պատերազմական իրավիճակ էր, որ Թուրքիան իրենց հզոր դաշնակիցն էր, որ Զեմալ փաշան երկարե Խաչ է կորու իր պատմումանի վրա, որ Ենվեր փաշան ռազմական կցորդ էր Եղել Բեռլինում, որ նա Վիլհելմ Բ-ի նման պահում էր սրածայր և կեռ բեղեր, չէր մոռանում նաև, որ Կայզերն ինքը որպես թուրք ծպտվել էր հիշարժան մի ճանապարհորդության ընթացքում, աչքաթող չէր անում Բաղդադի երկարուղու ներկայացրած ռազմական, քաղաքական և տնտեսական կարևոր նշանակությունը, ոչ էլ Վաճառահաննան այն անսահման շուկաները, որ այդ շրջանը պարունակում էր իր մեջ Կրուպի գործարանների համար: Ահա թե ինչու նա իր ստորադաս հյուպատոսներին,

ինչպես և իր վերադաս նախարարությանը խոհեմության էր իրավիրում: «Յասկանալի է, – բացատրում էր նա, – որ այն միջոցառումները, որոնց ուզում են դիմել թուրքերը, առաջ պիտի թերեն շատ դժգոհություններ մեր թշնամիների ամբողջ ճամբարում և պիտի օգտագործվեն մեր դեմ: Ստույգ է, որ դրանք չափազանց ծանր են հայ ազգաբնակչության համար: Այսուհանդերձ կարծում եմ, որ, եթե կարողանանք մեղմացնել այդ միջոցառումները իրենց գործադրության ձևի մեջ, ապա սկզբունքով չպետք է հակադրվենք դրանց»:

Ապա բարեկարգ եղանակում մեջտեղուած  
աշխարհականությանը մշամայիս առաք  
հաջողություն ունեցած է առաջնակազմ  
Հայություն Շահուանու առաջնության մաս  
ներ առան ժամանակ ուսուց գնուութեան  
և առաջնություն Բայրակ առաջնության մասնաւութեան

## ՃՊ

Սակայն նեղուցներից, ծովերից և օվկիա-  
նոսներից այն կողմ լուրջ տարածվում էր անո-  
դոքաբար: Ամենամեծ երկրի ամենամեծ մայ-  
րաքաղաքի ամենամեծ թերթը այդ լուրջ հա-  
ղորդում էր մեծ վերնագրերով. «Պատերազմի  
ողբերգական հետևանքը Արևելքում. հայերի  
զանգվածային կոտորած Փոքր Ասիայի արևել-  
յան գյուղերում թուրքերի և քուրդերի կողմից»:  
Նյու Յորք Թայմզը հաստատում էր, որ նախճի-  
րը աներևակայելիորեն գերազանցում է այն  
ամենը, ինչ գործադրել էր տիաճ դեմքով Կար-  
միր սուլթան Աբդուլ Համիդը իր ատելի իշխա-  
նության շրջանում: Դժբախտաբար, գոյություն  
չուներ «ոչ մի քան, որ տեղիք տար կասկածի»:  
«Սալոնիկից վերջերս վերադարձած Թայմզ  
թերթի մի թղթակից հայտնում է, որ Թուրքիա-  
յից եկող տեղեկատվությունները բոլորն ել

համընկնում են հայերի դեմ թուրքերի գործադրած սարսափելի վայրագություններին: Ենթադրվում է, որ խնդիրը վերաբերում է բնաջնջման պաշտոնական մի ծրագրի, որով նախատեսվում է ուր հարյուր հազարից մինչև մեկ միլիոն հոգու սպանությունը»: Հոդվածը լույս է տեսել 1915 թվականի սեպտեմբերի 16-ին: Դա ցավալի լուր էր և սկսում էր աղմուկ հարուցել դիվանատներում, գայթակղութուն առաջացնել խորհրդարաններում և շփոթեցնել կառավարություններին: Եթե խորհրդարանները համակերպվում են գայթակղություններին, աղմուկին և հակածառություններին, ապա, մյուս կողմից, հաստատ է, որ կառավարությունները բնավ չեն սիրում շփոթությունները, ոչ էլ դիվանատները՝ աղմուկը: Բարոն ֆոն Կանգենիայմը շատ լավ գիտեր, թե որտեղ պետք է կանգ առներ: Տեղեկատվությունները չեն պակասում, նա մոտիկից հետևում էր իրադարձություններին: «Ակնհայտ է,— նշում էր նա, — որ հայերի տեղահանությունը պատճառաբանված չէ միայն պատերազմական նկատառումներով: Ներքին գործոց նախարար Թալաարքերը վերջերս բացեկրաց հայտարարեց դոկտ.

Մորդմանին (որն այժմ պաշտոնի է կոչված կայսերական դեսպանատանը), որ Բարձր Շուրն ուզում է օգտվել Յանաշխարհային պատերազմից՝ արմատապես վերացնելու համար իր ներքին թշնամիներին, առանց անհանգստանալու օտարերկրյա դիվանագիտական միջամտությունից»: Ուզմական կցորդներն իրենք իսկ, որ թեև կարծրասիրտ են լինում և սովոր բափված արյան, բաց օդում մնացած անկենդան մարմինների, չպատճառաբանված զնηակահարությունների, հառաչանքների և հեծեծանքների, նաև ոչ մի բան չէին տեսել մինչ այդ իրենց մղած բոլոր ճակատամարտերում: Ինչքան էլ որ նրանք կորցրել էին պատվի զգացումը, այնուամենայնիվ դժվարանում էին ծածկել իրենց զգացած զգվանքը:

Այն, ինչին ներկա եղավ Գերմանական ռազմական առաքելության ներկայացուցիչ փոխգնդապետ Շտանգեն, ինչ նա ստիպված եղավ տեսնել ու ճանաչել երգրումի, Տրապիզոնի, Երզնկայի, Մամախաթունի շրջանում, սիրտխառնուք էին պատճառում, փշաքաղում, մեկ խոսքով՝ փսխել էին տալիս նրան: «Այն ամենից հետո, ինչ տեղի ունեցավ, — ըմբռստանում

էր նա, – կատարվածը կարող ենք համարել միանգամայն ստույգ. հայերի տեղահանությունն ու բնաջնջումը որոշվել և կազմակերպվել էր Կոստանդնուպոլսի երիտրուրքերի կողմից և գործադրվել զինվորականների և կամավորների ջոկատների օգնությամբ»: Արդարն, Թալա-արք փաշան Երկաքե բռունցքով ամուր բռնել էր ներքին գործերը: Փորձառու դիվանագետները ոչ այն ջիղն ունեին և ոչ էլ այն թափը կշտամբելու համար նման մարդկանց: Դիվանագետները չգիտեին՝ ինչպես մոտենալ Միություն և Առաջադիմություն Կոմիտեի պարագլուխներին, որոնք իրենց նման չեին կազմավորվել դիվանագիտական հատուկ դպրոցում և չեին տիրապետում Ծկուն խոսքի արվեստին; բայց ծեռք էին բերել բարձր դիրքի հասած ապաշնորհ մարդու գարշելի համբավ: Նրանց համարում էին վատ դաստիարակություն ստացած մարդիկ: Նրանց ներկայությունն ու կորորած դատարկ ժամերը Պրինկիպոյի Յախտինգ ակումբում, Կոստանդնուպոլսի ակումբում կամ «Արևելյան շրջանակում», մշտապես բախվում էր իին ազնվականների բարձր ճաշակին: «Անցյալում, – փսփսում էին շատերը, –

այս մարդիկ հազիվ թե բույլտվություն ունենային մտնելու այդ ակումբների նախարարը և փոխանակելու մի քանի բառ դժոնապանի հետ. և ահա, դառնալով այսպես հարուստ և հզոր, մարդկանց հետ վերաբերվում են որպես ագահ և վայրագ տիրակալներ»: Նրանց ձայնը բարձր էր, կոպիտ, սպառնալից և պատասխան չիւնուրժող: Նրանք խոսում էին մսավաճառի նման ազատ:

Ճակառակ իր համեստ տիտղոսին, բայց քանի որ նա այնպիսի մի երկրի պաշտպանության տակ էր գտնվում, որից մեծապես կախված էր Թուրքիան, գերմանացի մի վերապատվելի, որը հետազոտություններ էր կատարում Ռոյչե-Օրիենտ Միսիոն-ի (Գերմանա-արևելյան առաքելություն) համար, կարողացավ հանդիպել գերագույն իրամանատար Էնվեր փաշային՝ այն մարդուն, որը գլխավոր շտաբի և բուրքական ընդարձակ կայսրության տարածքում զինվորական համագետստ հագած բոլոր մարդկանց կողմից խնկարկված և ահազդու ղեկավարն էր: Վերապատվելին անվախ աչքեր ուներ, նրա մարդասիրական հավատը նրան մղում էր համարձակ քայլեր անելու:

«Անդրադասնալով մեզ հետաքրքրող նյութին,  
- սկսեցի ես,- հարց եմ տալիս ինձ, թե դուք  
տեղյա՞կ եք արդյոք և համաձա՞յն եք այս ամե-  
նին, ինչ տեղի է ունենում ներքին ճակատում»:  
Նա հասկանում էր, թե ինչ էի ուզում ասել, և  
պատասխանեց. «Ես ինձ վրա եմ վերցնում  
ամբողջ պատասխանատվությունը»: (Այս խո-  
սակցությունը հրատարակվել է «Դեր Օրիենտ»  
ամսագրում Էնվերի կենդանության օրոք, երբ  
նա գտնվում էր Բեռլինում):

۴۹

Ծիշտն ասած՝ նա մի պարզ այցելու չեր, ոչ  
էլ օտար մի անցորդ, որ իրազեկ չլիներ տեղի  
ունեցող իրադարձություններին իրենց ընդհա-  
նուր գծերի մեջ։ Նա, ով զալիս էր շատ հեռվից  
և ժամանել էր Արևելյան ճեպընթացի՝ մահոգե-  
նու փայտից պատրաստված պղնձապատ  
շքեղ վագոնների մեջ բազմած (թեև երկարու-  
ղագիծը դադարել էր գործելուց Բուլղարիայից  
այն կողմ), նա, ով ճանապարհորդել էր բոլոր  
խաղացող պրուսացիների և երաժշտասրահ-  
ներում հանդես եկող վիեննացի պարուիհինե-  
րից մեկի հետ, որին իրապուրել էին Պերայի  
սրճարանները, ուր համերգներ էին տրվում,  
նա, ով նայում էր, թե ինչպես հակառակ ուղ-  
ղությամբ դեպի ռազմաճակատ են բարձրա-  
նում իրացաններով ու պայթուցիկ նյութերով  
բեռնավորված, իրենց ոտքերին սոնապաններ

փաթաթած գինվորներով լցված ռազմակառքերը, նա, ով լրագրող էր և օգտվում էր չեզոք մարդու իր հանգամանքից, ահա նա, ինչպես բոլորը, ծանոթ էր իրադարձություններին: *Մետրոպոլիտեն Սագագին* հանդեսի տնօրենը, որ նրա տերն էր, թելադրել էր նրան, որ գնա մոտիկից հետևի Եվրոպայում տեղի ունեցող պատերազմական դեպքերին ամսական հինգ հարյուր դոլար աշխատավարձով: Այդպիսի մի առաջարկություն մարդ չի մերժի, եթք իր ապրուստը վաստակում է իր գրչությունը: Նա, անցնելով Զիբրիալթարի նեղուցով, հասել էր Նեապոլ, ապա շարունակել էր իր ճանապարհը դեպի Սալոնիկ, Լվով և Բուլհարեստ՝ հույս ունենալով, որ կգնա մեկուսացած վայուեր, որտեղ թշնամի գորքերը կրվում էին միմյանց դեմ: «Ինձ թվում է, որ Կովկասը մի քիչ նման է Մեքսիկային, և ես կստահ եմ, որ նրա բնակիչները դուր պիտի գան ինձ»: Նա ծանոթ էր Մեքսիկային և Պանչո Վիլլային, բայց աշխարհագրության մասին շատ աղոտ գաղափար ուներ: «Այս կողմերում ոչ ոք չի եղել բնավ: Դա կլինի անապատում մղվող կրվի մասին աշխարհում իր նմանը չունեցող մի պատմություն»:

թյուն»: Նա երազում էր: «Զիով կտրել-անցնել այն կիրճը, որտեղից անցնելով Զինգի խանը ուտնատակ արեց Եվրոպան. դա հիանալիք բան կլինի»: Այս ակնկալությամբ, Զոն Ոիդը, որը ծնվել էր Պորտւենդում (Օրեգոնի նահանգ), Խաղաղ օվկիանոսի եզերքին, և քաղաքացի էր Նյու Յորքի, Ասլանտյանի եզերքին, դատարկ ման էր գալիս Կոստանդնուպոլսում և խորը շնչում Բոսֆորի ու Պուկեղջուրի խոնավ օդը: *Մետրոպոլիտենի թղթակիցը*, որը ժամանակավորապես դադարել էր ուժեղ զգայություններ ունենալուց, բավարարվում էր՝ դիտելով Խաս-գյուղի ողորմելի բարձունքները, Խոթանքուլի ծովափը, կապույտ, կարմրանարնջագույն, կանաչ, դեղին գույնի անկարծ տանիքները, սպիտակ մինարեթներն ու մզկիթների շողշողուն գմբեթները, Սուլթ-Սոֆիայի տաճարը, Մեծն Սուլեյմանի մզկիթը, կամուրջները, քարափները, նավահանգիստը և պատերազմի պատճառով խարիսխ զցած և անշարժացած շոգենավերը, Յամիդիե հածանավը՝ Ձեմալ փաշայի նավատորմի այդ ծաղիկը, որը դեպի անտեսանելի թշնամին է ուղղել 15 տրամաչափի իր երկու և 12 տրամաչափի իր ութ

թնդանորները: «Կոստանդնուպոլիսը թվում է ավելի հանդարտ և ավելի ինքնակտահ, քան երբեք», մտածում էր նա:

Զո՞ն Ռիդն այստեղ հայտնաբերելու ուրիշ բան չուներ, բացի իրենց հրապույրները ցուցադրող պոռնիկներից, բարեկեցիկ ընտանիքների՝ զինվորական ծառայությունից խուսափած զավակներից և նյու Ձերսիում գործված գորգերի վաճառականներից: Նա համբերությամբ սպասում էր, հաճուքով ճաշակում փափուկ հանգստապատառներ, խմում Աղենի սուրճ, ծխում Սամսոնի ծխախոտով պատրաստված թույլ սիգարետներ և չափչփում հինգ հազար փայտակերտ կրպակներից բաղկացած Մեծ շուկան և շնչում քափուրի, կաշվե հողաքափերի և անատոլիական ափիոնի բարկ հոտը:

«Ենքեր փաշան նախապես ինձ խոստացել եր, որ կարող եմ գնալ Գալիպոլիի ռազմաճակատ, բայց երկու շաբաթ սպասելուց հետո ինձ ասաց, որ ոչ մեկ ամերիկացու չի թույլատրվում ուղեկցել բանակին»: Ժամանակն սպանելու համար նա հաճախում էր այն տեղերը, ուր ելույթ էին ունենում թեթևաբարո պա-

րուիիներն ու ռեգբայմի<sup>22</sup> նվազախմբերը: Թույլացած մարմնով անեռանդ հաճախորդներ, նատած ծղոտե արոռների վրա, մարմարե ծածկով ցած սեղանիկների շուրջը, կում-կում խմում էին Տոսրինի վերմութով և Ֆրանկֆուրտի շինով խառնված մի ըմպելիք: Օրերն ու ժամերը հաջորդում էին իրար: Լավ քաղաքականություն չէր այսպես անգործության, ձանձրույթի և անորոշության մեջ թողնել նման խառնվածքի տեր մարդկանց: Նա ուշադրությամբ նայում էր հացի դատարկ խանութների առջև զղագրօված տեսքով հերթի կանգնած պարզ մարդկանց: Նրան ուղեկցող գիղը թարգմանում էր նրան աղքատ թաղամասերից բարձրացող բողոքի խռպոտ ձայները. «Թքա՛ծ ծեր հաղթանակների վրա: Յա՛ց տվեք մեզ»: Ամերիկացի լրագրողը ռազմաճակատ հիշեցնող ոչինչ չէր տեսնում այստեղ, նա շրջագայում էր քաղաքում, և քաղաքը պարզում էր իր

<sup>22</sup> Ռեգբայմ – Անգլո-ամերիկյան բառ: Խիստ կարծ դադարներով երաժշտական յուրահատուկ ոճ, որը ծագել է ամերիկյան նեգրական ֆոլկլորից և տարածվել 19-րդ դարի վերջերին՝ դաշնալով ժամանակակից ջագի աղբյուրներից մեկը (Ծնթ. թարգմ.):

գաղտնիքները: «Կասկածանք չհարուցող նկուներում և շտեմարաններում ես հանդիպեցի հայերի, որոնք թաքնվել էին ավելի քան հինգ ամսից ի վեր՝ խուսափելու համար արտորից, որ նշանակում է ստույգ մահ Փոքր Ասիայի անապատներում»: Քառակուսի գծերով սև գույնի մի փոքր ծոցատետրում ներքին գործերի նախարար Թալաար փաշան նուրբ և վարժմի ձեռագրով իր հաշիվներն էր պահում Եվրոպացի պաշտոնատարի ճգրտությամբ: Ակտիվն ու պասիվը՝ նշված մեկ գծի վրա, առանձին սյունակներում: Տեղահանվածներ, որքեր, անտեր մնացած սեփականություններ: Անկարայի վիլայեթ՝ 47.224 տեղահանված: Էրզրումի վիլայեթ՝ 128.657: Սեբաստիայի վիլայեթ՝ 141.592: Կեսարիայի կուսակալություն՝ 47.617: Այսպես նա հաշվում էր ընդամենը 924.158 տեղահանված՝ սխալվելով գումարումի մեջ (որովհետև թույլ էր թվաբանությունից), ապա փակում իր ծոցատետրը՝ էջանիշով նշանակելով էջը: Նախարարը աչքաթող չէր անում այն շահույթը, որ կարող էր ձեռք բերել իր կազմակերպած սպանություններից: Դիվանագիտական խողովակով ուղարկված ծրարներն ու փաս-

տաթղթերը ապօրինաբար ստուգման ենթարկելով՝ նա տեղյակ էր դաշնում ֆինանսական այն բոլոր գործառնություններին, դրամական փոխադրումներին և օգնություններին, որ զանազան ընկերություններ, ազգականներ, մարդասեր մարդիկ Ամերիկայից փորձում էին հասցնել հայերին: «Ինչու՞ մեզ չեք տալիս այդ փողը, – հարցնում էր նա դեսպան Մորգենթաուին, – մենք դրան նույնքան կարիք ունենք, որքան հայերը»: Ափսո՞ս, կորած այդ բոլոր ֆոնդերը... Թալաար փաշան շատ բան չգիտեր կապիտալիզմի և նրա գաղտնիքների մասին, բայց կարծում էր, թե բավականաչափ ծանոթ է դրանց՝ կորած խաղաղրամը վերստանալու համար: Հայերը իրենց կյանքի բարգավաճ տարիներին կյանքի ապահովագրության փաստարդեր էին ստորագրել ամերիկյան Վստահելի ընկերությունների հետ, որոնք եկել էին Արևելք՝ հետազոտություններ կատարելու: Դրանք էին՝ New York Life Insurance Company և Equitable Life of New York ընկերությունները: Իրեն չհասցեագրված հեռագրերի ընթերցումներից և այն թվերից, որ նշել էր իր ծոցատերում, Թալաարը հանում էր տրամաբանական

Եզրակացություններ. «Այժմ նրանք բոլորը մահացել են առանց ժառանգ թողնելու: Յետևաբար նրանց դրամը հասնում է կառավարությանը. նա է, որ պետք է օգտվի դրանից»: Օրինական չէ՞ր միթե, որ պետությունը, որի սպասավորն էր ինքը, համարվեր փողի միակ ժառանգորդ, որովհետև, վերջին հաշվով, անհետացողները օսմանյան քաղաքացիներ էին:

Կոստանդնուպոլիսի կլիման վնասակար լի-  
նելով իր սրտին և շնչերակներին՝ Գերմանիա-  
յի դեսպան ֆոն Վանգենհայմը իր պաշտոնում  
փոխարինվեց իշխան ֆոն Շուենլիհե-Լանգեն-  
բուրգի կողմից, որը խառնվածքով ավելի կոփ-  
ված մարդ էր. գուցե չափազանց կոփված  
մարդ՝ ըստ իր պաշտոնակիցների կարծիքի:  
Նրա կենսագիրները կիմանան, թե նա գործում  
էր իր իշխանական դիրքի հետ կապված պատ-  
վարեր ավանդույթները հարգած լինելու՝  
մղումով, թե՝ նա պարզապես խղճնտանքով  
օժտված մարդ էր. Բայց իր նախորդի նման,  
իրազեկ լինելով այն քստմնելի իրադարձու-  
թյուններին, որոնք տակնուվրա էին արել  
Փոքր Ասիայի բոլոր կողմերը, իշխանը 1915  
թվականի օգոստոսին բավական խիստ մի  
գրություն փոխանցեց Բարձր Դռանը հետևյալ

բովանդակությամբ. «Գերմանիայի դեսպանությունը իր կառավարության հրամանով ստիպված է մի անգամ ևս բողոքել այս զարհութելի արարքների դեմ և իր վրա չի վերցնում պատասխանատվությունն այն բոլոր հետևանքների, որոնք կարող են առաջ գալ այդ արարքների պատճառով»: Դաստատված չէ, թե իշխանն արդյոք կայսերական կառավարության հրամանո՞վ էր արել այս միջամտությունը, թե՞ դա նրա սեփական նախաձեռնությունն էր (բվում է, թե Արտաքին գործերին առընթեր պետական փոխարտուղարը, որ նրա վերադասն էր, մեղադրել է նրան այդ միջամտության համար): Ինչ էլ որ լինի, Միություն և Առաջադիմություն Կոմիտեի մարդիկ անտեսում էին գերմանացի բարոնների, իշխանների և վերապատվելիների ազդարարություններն ու զգուշացումները: Նրանք, եթե դա հնարավոր էր լինում, շատ ավելի պակաս կարևորություն էին տալիս լատինների կամ անգլո-սաքսոնների կարծիքին: Խարբերդում, ամեն ինչից հեռու, օգնությունից գորև ամերիկացի հյուպատոս Լեսլի Ամներթոն Դեյվիսը, որի բոլոր թղթակցությունները հսկողության տակ էին առնված,

անորոշ մի մտավախություն ուներ այդ մասին: Այս, ինչ նա տեսնում էր շաբաթներից ի վեր (նա գրում էր հուլիս ամսին), ինչ նա գիտեր, ինչ նրան էր վիճակված անել, թեարափ և անհույս էր թղթնում նրան. «Գաղտնիք չէ, որ նախատեսված ծրագիրը միտում էր կործանել հայ ժողովրդին որպես ցեղ, բայց այդ ծրագրի հրագործնան համար գործադրվեցին այնպիսի եղանակներ, այնպիսի սառնարյունությամբ և այնպիսի բարբարոսական ձևով, որ նախապես ես չեմ կարող ենթադրել բնավ... ես չեմ հավատում, – ավելացնում էր աստղագաղտ դրոշակի արժանապատիվ ներկայացուցիչը, – որ աշխարհի պատմության մեջ երբեկցե գոյություն ունեցած լինի մի կոտորած այդքան ընդիհանրական և այդքան արմատական, որքան այն կոտորածը, որը կատարվում է այս պահին այս շրջանում, և ոչ էլ մի ծրագիր այնքան ահավոր և այնքան սատանայական, որը երբեկցե հղացված լինի մարդու մտքում»: Դա տեղի էր ունենում պատերազմական կացության մեջ, բանուկ ամեն ճանապարհից հեռու, անջրդի լեռներում, կորած լճերի եզերքին, կիզիչ խճաքարերի վրա ամրացված Բաղդադի

անձայրածիր երկարուղու երկայնքին, մարդու նայվածքին անմատչելի խոպան վայրերում:

Ապահովության նկատառումով, Ձեմալ փաշան, որ այս տարածաշրջանում բանակի գլխավոր իրամանատարն էր, արգելել էր ամենօրյա իրականությունից գողացված ամեն լուսանկար ու պատկեր: Այդ օրերին անսաստող անխոհեմ և հանդուգն այն անձինք, որոնք բառասունութ ժամում իրեն չեն հանձնի օրենքով արգելված լուսանկարների կլիշեները, կենթարկվեն օսմանյան ռազմական արդարադատության բոլոր խստություններին (Շետագայում Ձեմալ փաշան անելու էր հետևյալ հաստատումը. «Ես բացարձակապես տեղյակ չեմ այն որդապատճառներին, որոնք կառավարության ին գործընկերներին մղել են ընդունել հայ ազգաբնակչությունը տեղահանելու որոշում. այդ մասին նրանք ինձ հետ չեն խորհրդակցել»): Այնուհանդեռձ, զազրելի իրադարձությունների լուրը հասնում էր ամենաօտար մարդկանց ականջներին և պատկերվում ամենահոգավոր մարդկանց աչքերին, որովհետև ամեն տեղ և ամեն ժամանակ գաղտնիքը, ինչքան էլ այն լավ պահված լինի, մի օր, անպայ-

ման, հայտնի կդառնա: 1915 թվականի օգոստոս ամսվա վերջերին Հռոմի Մեսացերո թերթը հրատարակեց Տրապիզոնում Խոալիայի թագավորության նախկին հյուպատոս կոմենդատորեց Գորրինիի մեկ հարցազրույցն այն մասին, ինչ նա տեսել էր և կարող էր արտահայտել: «Դա խսկական մի բնաջնջում էր, – ողբում էր հյուպատոսը, – Անմեղների կոտորած, աներևակայելի ոճիրներ, մի սև էջ՝ դրոշնված մարդկության ամենասրբազան իրավունքների բացահայտ ոտնահարումով»: Երիտքութքները պետք է իմանային, որ լատինները և հատկապես խոալացիները որքան զգայուն և խիստ տպավորվող մարդիկ են: Այն, ինչին խոալացի դիվանագետն ականատես էր եղել, նրան կորցնել էր տվել իր քունը. «Զղային տանջալից նոպաների մեջ ընկա և սիրտխառնութներ ունեցա, այնքան որ սարսափելի բան էր այդ անմեղ և անպաշտպան արարածների զանգվածային սպանությանը ներկա լինելու տառապանքը»: Հույնները, որոնք դիմացկուն մարդիկ էին՝ վարժված լինելով բալկանյան պատերազմների բռնություններին և դառնություններին, նույնիսկ նրանք չեն կարողանում ան-

զգա մնալ: Քոնիայի հույն փոխիշուապատոսը, կարկանած, իր դեսպանությանը նկարագրում էր այն հուզումը, որ համակել էր իր դավանակիցներին ի տես ուսկրացած և ահաբեկված մարդկային ուրվականների քարավաններին. «Այստեղ հույները սարսափահար նայում են տեղի ունեցածին՝ լցված այն նախազգացումով, որ նույն ճակատագիրը սպասում է նաև իրենց» (նա առանց դժվարության պատկերացնում էր, թե գալիքը ինչ կարող էր վերապահել իրենց): 1915 թվականի հոկտեմբերի 9-ին Իլիուստրասիոն հանդեսը, որը շատ տարածված և գնահատված հրատարակություն էր ընտանիքներում, իր 3788 համարի 386-րդ էջում տալիս էր «Դայերի բնաշնչումը» վերնագրով քսան տողից քաղկացած համառոտ մի տեղեկություն, որին կցված էին ծվեճ-ծվեճ եղած ձորձերով գաղթականների լուսանկարներ: Դրանից մի քանի օր առաջ, հոկտեմբերի 6-ին դերկոնս Ձեյնս Բրայսը Լոնդոնի Լորդերի պալատին ներկայացրել էր մի դիմում (ինչպես գիտեն անել միայն շոտլանդացիները), որ պեսզի հրապարակավ դատապարտվի կատարված սարսափազու ոճիրը: «Կոտորած-

ների պատմությունները, – ասում էր նա, – հասան ինձ տարբեր կողմներից, բայց եական կետերում դրանք բոլորն ել համընկնում են իրար և իրականում հաստատում մեկը մյուսին... Այսպես է, որ, ինչպես թվում է, հայ ազգի երեք չորրորդը կամ չորս հինգերորդը ոչնչացված է. և պատմության մեջ չկա մի էց, անշուշտ Լենկրեմուրի ժամանակաշրջանից ի վեր, ուր նշված լինի նույնքան զարհութելի և նույնքան մեծ չափի մի այլ կոտորած»: Նույնիսկ հարավյային կիսագնդում, տարաշխարհիկ և մերկ հեռավոր ցամաքանասի վրա, որին մոտեցել են Վիլլեմ Յանսոնը, Ռիխրեն<sup>23</sup> քաղաքի Կուրիեի (Բանքեր), Ադելայիդայի<sup>24</sup> Ուժեստրի, Վիկտորիայի<sup>25</sup> տպագիր թերթերի և մինչև իսկ Սառուցյալ Տասմանիայի Մերկուրիի ընթերցողներին հասնում էին Անատոլիայից եկող

<sup>23</sup> Ռիխրեն – Նավահանգիստ Ավստրալիայում:

<sup>24</sup> Ադելայիդա – Քաղաք Ավստրալիայում, Յնողկական օվկիանոսի եզրքին, Զարավային Ավստրալիայի նահանգի մայրաքաղաքը:

<sup>25</sup> Վիկտորիա – Ավստրալիայի հարավ-արևելյան նահանգ, որի մայրաքաղաքն է Մելբուրնը:

Երկարածիգ, ողբազին հեծեծանքները. «Սպանդանոցի տեսարաններ», «Արյունաքամ հայեր», «Մարդիկ քշվում են անապատ մեռնելու համար», «Ավելի քան մեկ միլիոն զոհ»...: Ամբողջ աշխարհը գիտեր և քարանում էր սարսափից:

۹۲

Երիտրուրենը մնացել էին խիստ մեկուսացված և զայրացել էին այդ կացության համար: Սխալ չեր, սակայն, որ նրանք եղել էին առատաձեռն, ծախսել էին անհաշիվ, ծայր աստիճան բարեհաճությամբ և լիառատությամբ, իրենց առատ նվիրատվություններով մեծ օգուտ էին տվել թերթերին, լրագրերին, տնօրեններին և խմբագիրներին՝ շռայլելով աջ ու ձախ, այստեղ ու այնտեղ: Վեց հարյուր հազար ֆրանկ Պըտի Պարիզին, Երկու հարյուր հիսուն հազար ֆրանկ Գոլուային և տակավին տասնյակ հազարավոր ֆրանկներ Լիբր Պարոլին, Օռորին, Արսիոնին, Էքսելսյորին և Էնտրանսիժանին՝ թվելու համար միայն Ֆրանսիայում իրատարակված թերթերը: Երիտրուրենը գովազդի նախկին ղեկավար Լեոն Ռենիեին իրենց գր-

պանն էին դրել՝ վճարելով նրան հինգ հարյուր հազար ռուփի-ֆրանկ: Նրանք պահում էին մի քանի վստահելի բարեկամներ գրական և գինվորական շրջանակներից: Գերմանական դեսպանատան ռազմածովային կցորդ Հյումանը, որը հոխորտում էր, թե իր կյանքի գեղեցկագույն մասն անցկացրել է Թուրքիայում և հետևաբար լավ է ճանաչում նրա հոգին, հարում էր կառավարման այն սկզբունքներին, որոնցով երիտրուրքերը, ըստ նրա, արդարորեն առաջնորդում էին հասարակության կյանքի ընթացքը: «Ամենատկար ազգը պիտի պարտվի», կրկնում էր նա ավելացնելով. «Ենվեր փաշան մի ճանճի անգամ վնաս չի տալիս»: Ենվեր փաշան ճանճերի դեմ ոչինչ չուներ: Երիտրուրքերը ազնիվ մարդիկ էին: Մեծ ազգերի երևելի դեմքերը համաձայն էին դրան: Ֆրանսիացի գրող Պիեռ Լուտին, որը ռազմանավերի վրա ման էր գալիս աշխարհով մեկ, նշումներ կատարում այն բոլոր վայրերում, որտեղով անցնում էր, և երջանիկ կյանք վարում նա վահանգիստներում, կյանքի երկար փորձառություն ունեցող մարդ էր: Բոքսերների

ապստամբության<sup>26</sup> ժամանակ նա ընդհարումների երկրորդ գծի վրա ներկա էր եղել Եվրոպացիների կողմից Պեկինում տեղի ունեցած քաղաքային բնակիչների կոտորածին: Պիեռ Լուտին սիրում էր ծովային ճանապարհորդությունը տարաշխարհիկ հաճույքների համար: Նա շատ էր սիրում մանավանդ ծայտվել: Ֆորմիդարլ զբոսանավը ման էր ածել նրան մինչև Ալժիր, Ուրդուտաբլը<sup>27</sup> տարել էր Չինաստան, իսկ Վոտուրը՝ դեպի Բուֆորի ափերը: Նա լուսանկարվում էր մերթ որպես չինացի բարձրաստիճան պաշտոնյա, մերթ որպես փարավոն, մերթ որպես թուրք և կամ բոլորովին մերկ՝ ամոթույքը ծածկած որբատուն-

<sup>26</sup> Բոքսերների ապստամբություն – 1895թ. չինական գաղտնի մի ընկերության կողմից այլասյացության մի շարժում բորբոքվեց Չինաստանում, որտեղ հաստատվել էին Եվրոպացիները: Այդ շարժումն իր բարձրակետին հասավ 1900թ. և վերածվեց գինված մի ապստամբության՝ սպառնալով օտարերկոյա զանազան կառավարություններ ներկայացնող հաստատություններին: Միջազգային ռազմական մի արշավանք վերջ տվեց այդ ապստամբությանը (Ծնթ. թարգմ.):

<sup>27</sup> Ուրդուտաբլ, Վոտուր – ֆրանսիական զբոսանավեր (Ծնթ. թարգմ.):

կի տերևով. այդպիսով նա հեշտությամբ կարող էր համարվել մի երազատես, եթե ընտրված չլիներ Ֆրանսիական ակադեմիայի անդամ՝ գրավելով թիվ 13 բազկաթոռը: Արդ, ակադեմիկոս մարդը անհրաժեշտորեն վեր էր մնում ամեն քննադատությունից:

Այս գրողը Թուրքիայում սիրում էր այն ամենը, ինչ նրան թվում էր իրապես թուրքական: Նա գնահատում էր բյորեկները, «վեզիրի մատներ» կոչված կոցարի միսը և Սըմքը Փալյասի<sup>28</sup> չերքեզական ճուտը: Նա կրում էր ֆես, ծխում էր նարգիլե, որ նրա համար պատրաստում էր Յասան անունով իր ծառան: Պիեռ Լուտին շատ էր կապված սուլթան Արդուլ Յամիդին, որը մի ժամանակ նրան ճաշի էր իրավիրել «ապշեցուցիչ շքեղությամբ» կահավորված իր ճաշասենյակում: Նա սուլթանի օգոստափառ ծերքից ստացել էր փայլուն աղամանդներով ընդելուզված, ասպետի Մեջիդին կոչված կայսերական բարձր պատվանշանը, որով շատ էր ուրախացել: Նա ճաշակել էր հա-

<sup>28</sup> Սըմքը Փալյաս – Անառային շքեղ ռեստորան Կոստանդնուպոլսում (Ծնբ. թարգմ.):

մադամ կերակրատեսակներ, համտեսել քաղցրահամ ընպելիքներ, կերել խմորեղենի սքանչելի տեսակներ, խմել ծիրանագույն ընտիր գինիներ, սառը օշարակներ՝ մատուցված ոսկյա անորեների և բյուրեղապակյա բաժակների մեջ, մեծաթիվ սպասավորների կողմից, որոնք հագել էին թանկագին թելերով բանված կարմիր, երկար պարեգումներ նարնջագույն և կանաչ միատեսակ հանդերձանքով՝ բոլորն էլ նույնքան գեղեցիկ, որքան արեգակն ու լուսինը: Նա շնչել էր հոտավետ խնձորների, ստաշի և կնդրուկի բույրերը, մետաքսյա փափուկ բարձերի վրա երկարած՝ ունկնդրել էր հալվեի փայտից պատրաստված վիճի հնչյունը և այն ալեծածան ձայները, որոնց քաղցր հնչականությունը կախարդում էր նրան: Պիեռ Լուտին սուզվում էր այս ախորժելի պահերի մեղմանուշ վերիիշողության մեջ: Եվ եթե ճիշտ էր, որ Ելիզափի պալատում զգացվում էր մահվան թևածումը, եթե ճիշտ էր, որ հասարակ ժողովուրդը սուլթանի անունն արտասանում էր միայն դողալով, ապա կային նաև փափկամարմին դեռատի աղջիկներ, որոնք նրան կոչում

էին դուդով: Ակադեմիկոսը Թուրքիայի մասին գիտեր այն ամենը, ինչ հարկավոր էր գիտենալ՝ Արևելյան իին պալատը, նոճիների հոտը, սոսիների ստվերը, վանդակապատ պատուհանները, որոնց հետևում կանայք փակված էին մնում, զինվորական շեփորների աղմուկը և ուրբաթ օրվա մեջ աղոթքը: «Այստեղ, ինչպես մեզ մոտ, կորցրել ենք գեղեցկության զգացումը և հարգանքն այն բաների հանդեպ, որ մեծարում էին մեր նախնիները», կիսաձայն իր դժգոհությունն էր արտահայտում նա: Դեղափոխությունից ի վեր շատ նորություններ սարսափեցնում էին նրան՝ սկսած ազատագրված կանանցից, որոնք հասարակության մեջ ցուցադրում էին իրենց, շատախոսում հրապարակավ, թերք էին կարդում, դառնում բուժքույրեր կամ դասախոսներ, մինչև անգամ ոմանք մուտք գործում հեռախոսային վարչություն: Բարերախտաբար, հաստատում էր նա, դեռևս մնում էին այնպիսիներ, «որոնք ունեցան բավականաչափ ողջամտություն և ճաշակ՝ չիրաժարվելու համար սև քողից», նաև իշխանության գլուխ անցած

նոր դեմքերի մեջ այնպիսիները, որոնց նա կոչում էր «ազնվացեղ մահմեդականներ»: Ահա թե ինչու պաշտոնազրկված սուլթանի զգոյության պատճառով նա պաշտպանում էր Միություն և Առաջադիմություն Կոմիտեի երիտրությունին (թեև առաջադիմությունը նա սիրում էր ոչ այնքան ոգևորությամբ):

Պիեռ Լոտին, ուրեմն, իր սրածայր գրիչը մտցրեց վերքի մեջ և սկսեց այն շուռումուռ տալ: «Թուրքիան վատ է ճանաչված, – ընդգծում էր նա, – իսկ թուրքերին զրպարտում են, նախատում անընդհատ»: «Ես իմ ամբողջ կյանքում ասել եմ, որ նրանք կազմում են ամենաառողջ, ամենաազնիվ տարրը ամբողջ Արևելքում. նաև՝ ամենահանդուրժող տարրը»: Ահա թե ինչու նա իր գրքույկը հրատարակել էր «Դայաստանի կոտորածները» վերնագրով, որպեսզի հերքվեն նրանց դեմ եղած մեղադրանքները. որովհետև Եվրոպան բանրասում էր տակավին, միշտ բամբասում, անընդհատ բամբասում՝ խոսելով այդ ատելի նյութի մասին, կարծես թե ուրիշ բան չունենար անելու: Խեղճ թուրքեր, ափսոսում էր

ակադեմիկոսը, «նրանք ինչ որ էլ անեն Եվրոպայում, միշտ նրանց են մեղավոր համարում... Քրիստոնյա ասված բոլոր ժողովուրդների անխոստովանելի դաշինքը զինաթափ չի լինելու բնավ։ Եվ նրանք գիտեն նաև, որ այդ դժբախտ հայերը, նույնիսկ ամենախաղաղ ժամանակներում, չեն դադարելու նրանց դեմ տիրահոչակ և կեղծավոր ամբաստանողներ լինելուց»։ Որ դժբախտ հայերը կոտորածների զոհեր են եղել, Պիեռ Լոտին դա չեր կարող ուրանալ։ Եվ ինչպես կարող էր ուրանալ, երբ թափված արյունը դեռ չեր չորացել, երբ զոհերի ոսկորները դեռ չեն սպիտակել կիզիչ արևի տակ։ Դա պատճառ չեր, սակայն, որ նա լրեր իր բարեկամներին։ Ո՞վ արդյոք, հարցնում էր նա, կիամարձակվի առաջին քարը գցել մարդասպանների վրա։ Միթե ֆրանսիացիները մեղավոր չեին Սուլը-Բարբորոնմեոսյան գիշերային ջարդերի, բողոքականների դեմ Լյուլովիկոս 14-րդի հարուցած հալածանքների, ֆրանսիական հեղափոխության ժամանակ տեղի ունեցած արհավիրքների և Փարիզի Կոմունայի համար։ Միթե խապանացիները մեղա-

վոր չեին եղել հավատաքննության շրջանում կատարված խժողովությունների, իրենց երկրից հրեաների ողբալի արտաքսման համար, որոնց հյուրընկալեց միայն Օսմանյան կայսրությունը։ Եվ ի՞նչ ասել «արյունախանձ շոշափուկներով» զարթելի Կայզերի մասին (որովհետև իր տեսիլքների մեջ Լոտին Կայզերին պատկերացնում էր օժտված շոշափուկներով, ինչպիսին էր Նաուտիլուսի<sup>29</sup> հրեշավոր ութունանին)։ Կոտորածը, շարունակում էր նա, իար հավիտյան մնում է թաքնված մարդկային հոգու խորքում, այն հատուկ է բոլոր ժողովուրդներին, բայց միայն թուրքերին է, որ ոչինչ չեն ներում՝ ցցի վրա հանված կանայք, շների առջև նետված երեխաներ և կմախքներ՝ ճանապարհների եզերքին։ «Ավա՞ղ, այո՛, թուրքերը ջարդել են։ Սակայն ես պնդում եմ, որ ջարդերի մասին եղած պատմությունները միշտ էլ չափազանցված են, իսկ մանրամասնություն-

<sup>29</sup> Նաուտիլուս – ֆրանսիացի գրող Ժյուլ Վեռնի «Բասան հազար մոլոն ծովերի տակ» վեպում հիշատակված այն սուլամավի անունը, որի վրա հարձակում են գործում ութունանի հրեշները (Ծնք. թարգմ.)։

ները՝ ամիհմն կերպով տգեղացված: Պնդում եմ նաև (և դրանում ոչ ոք չի համարձակվի հակածառել ինձ), որ գործված ոճիրների ամենամեծ և ամենածանր մասը ընկնում է քուրդերի վրա, որոնց պաշտպանությունը ես երբեք չեմ ստանձնել»: Ուրեմն, հետևելով նրան, թուրքերը, որոնք ոչնչով պատաժանատու չեն եղել իրենց չգործած ոճիրների համար, ունեին մեղմացուցիչ հանգամանքներ, որովհետև հարկավոր էր ընդունել, և աշխարհը պետք է գիտենար, պետք է գիտենային թե՛ Ֆրանսիան, թե՛ Իտալիան, թե՛ Իսպանիան և Երկրագնդի բոլոր ժողովուրդները, որ հայերը, որոնց հանդեա գրողն ուներ գութ և ողորմածություն և որոնց անկեղծորեն կարեկցում էր այն ծայրահեղ դժբախտությունների համար, որոնք հարվածում էին նրանց, – այո՛, այդ հայերը համակրելի մարդիկ չեին:

Փարիզում լույս տեսած դեղին գրքույկի հեղինակի այս դատողության մեջ կարմի դատարկություն. դա գրաքննության կողմից արված լայնաբաց դատարկությունն էր: Գրքույկի 27-րդ և 28-րդ էջերում կառավարության

մկրատը կտրել-հանել էր ակադեմիկոսի մտածումը: Պատերազմ էր, և այն, ինչ նա գրում էր, չեր կարող տպագրվել առանց վնասելու ռազմիկների բարոյականությանը, նրանց, ովքեր կրվում էին խրամատներում, Դարդանելում, Արևելքում: Հետագա հրատարակության մեջ, երբ արդեն վերահաստատվել էին բնականոն խաղաղ պայմանները, վերականգնված էր պակասող այդ հատվածը: Հայերը, ուրեմն, համակրելի մարդիկ չեին: Պիեռ Լուին նրանց նույտ տեսել էր միայն նենգություն և կեղծավորություն: «Կհամարձակվեմ գրեթե ասել, որ Թուրքիայում հայերը նման են միրգ կրծող որդերի, նրանք իրենց կողմն են քաշում Երկրի ամբողջ ոսկին և չորացնում Երկիրը ամեն տեսակ միջոցներով, մանավանդ վաշխառությամբ, ինչպես անում էին դեռ վերջերս հրեաները Ռուսաստանում»: Պիեռ Լուին, որ հաճույքով էր ծպտվում որպես լեռնաբնակ հզոր շեյխ՝ դաշույնը խրած գոտու մեջ և կոր թուրք դրած ծնկների վրա, ասես լիներ Լեռան ծերունու մեկ եղբայրը: Իր դեղին գրքույկով նա արժանացավ Զարդարարների բարեկամ մակ-

անվանը: Բայց նա, ով դերասանների նման շպարգում էր որպես Օսիրիս՝ հին Եգիպտոսի թագավոր-աստված, որպես Զինաստանի մեծափառ պաշտոնակատար արգելված Քաղաքում, որպես Անդրիորդանանի էմիր և որպես լեռնային թուրք զորական, այն անմահը, որը գոռողությամբ գրավում էր Ֆրանսիական ակադեմիայի թիվ 13 բազկաթոռը, անտարբեր էր 1915 թվականի Ակատոմամբ:

dt

Դեսպան Մորգենթաուեն Թուրքիայից ընդ-միշտ հեռանալուց առաջ վերջին անգամ գնաց ներքին գործոց նախարարի մոտ: Այդ օրը Թալաաթ փաշան ուրախ և սիրալիր տրամադրության մեջ էր: «Մենք հույս ունենք, որ շուտով նորից կգաք... Սենք սովորեցինք ձեզ սիրել, հակառակ երբեմն մեր միջև եղած սուր տարակարություններին...»: Ինչու՞ ամերիկյան դեսպանը, մեկնելու մոտ, անտեսելով պատշաճությունը, պարտավորված զգաց իրեն մի անգամ ևս շոշափել փաշայի ականջին տիհած այն նյութը, որ ջղայնացնում էր նրան իր հարուցած անօգուտ հարցերով: «Իսկ հայե՞՞րը», հարցրեց դեսպանը: Թալաաթի դեմքը կծկվեց, աչքերը չարացան. «Ի՞նչ կարիք կա նորից խոսելու նրանց մասին, – ասաց նա ձեռքի մի շարժումով, – նրանց հաշիվը մաքրեցինք, վերջա-

ցավ»: 1916թ. հունվարի կեսերին դեռևս մնում էին նրանցից մի քանիսը ճամբարներում, Սիրիայի Բարեսիրական առաքելությունների որբանոցներում և Դեր-Զորի անապատներում, բայց Թալաարը հեռու չեր ծշմարտությունից: «Ես, իհարկե, չեմ հաշվել, բայց նրանք բոլորն ել սպանվեցին», նշում էր Երուսաղեմից նիհար և լուակյաց մի ֆրանսիացի, որին Ձեմալ փաշան ուղարկել էր Ուրֆա:

Գերմանացի մի պաշտոնյա, որն անցնում էր այդ վայրերով, հայտնեց, որ Մեսքենեի ճանապարհը ծածկված է պատառոտված հագուստների կտորներով, ամեն կողմ սփռված հյուսվածեղենի մնացորդներով, ծվատված շորերի առանձին մասերով, ասես մի ամբողջ բազմություն չքացած, գետնի տակ անցած լիներ այստեղ: Բյունտե անունով գերմանացի մի լեյտենանտ, մասնագիտությամբ ինժեներ, Եփրատի եզերքով բարձրանալիս տեսավ մեծ քանակությամբ մարդկային գանգեր և ուսկրակույտեր խարուր գետի ձախ ավիհն: Եկեղեցու բարեգութ քույրեր, բժիշկներ և բուժքույրեր, դիվանագիտական մարմինների աշխատողներ և գինվորականներ, բոլորն ել այն կարծի-

քին էին, որ սպանվածների թիվը անցնում է մեկ միլիոնից և մոտենում մեկուկես միլիոնի: Դեսպանների մեջ ամենափորձառուները, վրդովմունքի մատնված, արձանագրում էին, որ ո՞չ իրենց խրատներն ու կշտամբանքները, ո՞չ բարեկամ երկրների խորհուրդները, ո՞չ թշնամի հզոր պետությունների սպառնալիքները, ո՞չ պապական նվիրակի խնդրանքները և ո՞չ ել հանրային կարծիքի պարսականքը չեն կարողանում հետ կանգնեցնել երիտրուրքերին իրենց սատանայական ծրագրի գործադրումից:

Նրանք, սակայն, թշնամի շների նման ուշադիր նայում էին նրանց, ովքեր նախագահում էին խորտակվելու մոտ եղող Կայսրության նավին՝ սպասելով նրանցից մեկի սխալ քայլին, որպեսզի ծուղակը գցեն նրան, կամ ակնդետ հետևելով մյուսի սխալին, որպեսզի տիրանան նրա առանձնաշնորհյալ դիրքին: Այսպես է, որ Թալաար փաշան, հաջողությամբ պսակելով իր գործունեության ասպարեզը, հասավ Սեծ վեզիրի բաղձակի պաշտոնին: Ենվերն իր աչքի ծայրով հետևում էր նրան և չեր ուզում հեռանալ Կոստանդնուպոլսից՝ վախենալով,

որ իր բացակայության ժամանակ ցած կգլուրվի իր զբաղեցրած պաշտոնից: Իսկ ռազմածովային նախարար Զեմալ փաշան, որը Սիրիայում հրամայում էր անապատային բանակին, որոնում էր մոայլ մտքեր: Նա իրենից կախյալ վիճակում էր պահում ոչ բարեկամ փոքրաքանակ ցեղախմբեր, տարբեր լեզուներով խոսող թշնամի մանր-մունր անկարևոր ժողովուրդներ, հակառակ կրոններ դավանող աննշան խմբեր, որոնք ցրված էին Անատոլիայից ավելի լայնարձակ հողերի վրա, Ամանոսի լեռների և Արարիայի սրբազն քաղաքների միջև: Եվ սրանք բոլորը, ինչպես նրանցից յուրաքանչյուրը, վատ աչքով էին նայում նրան և սպասում միայն պատեհ առիթին՝ իրենց կոր դաշույնը խրելու համար նրա մեջքին: Զեմալը զգուշանում էր իրավացիորեն: Զիգ և խիստ, ինչպես ռազմական արդարադատությունը, նստած սպիտակ մի ձիու վրա, գլխին դրած զորագործային իր կտավե գլխարկը, ուշադրությամբ ստուգում էր իր զորքերը, որոնք մեկ գծի վրա շարված էին հովանոցաձև սոճիների առջև: Նա խուզարկում էր Դամասկոսն ու նրա շրջակայքը՝ խեղինելու դավադրությունները,

խափանելու խռովությունները և ճնշելու ապատամբությունները, ինչ որ այն սկսեր խլոտալ: Նրա գործակալները բերում էին նրան թռուցիկներ, մարդկանց խռովության և հուզումների մղող զայրալից պարսավագրեր, որոնք ընկնում էին այդ գործակալներից ամենագրագետների աչքի տակ: «Իմացեք, որ կազմվել է ֆիդայինների մի կոմիտե, որի ծրագիրն է սպանել բոլոր նրանց, ովքեր սպանում են արաբներին»: Զեմալ փաշան առանց ժամանակ կորցնելու կախաղան էր բարձրացնում (յուրաքանչյուրի վզից իր մեղադրագիրը կախված) դյուրզիններին, մարոնիտներին, Անստորականներին, անսարիեններին, իսմայելացիններին, բոլոր նրանց, ովքեր ընկնում էին նրա ձեռքի տակ: Այդ թվում նաև՝ արաբներին: **Էլ-ահա-ուլ-արարի, Էլլա Սերքեզիե, Զեմիեթ-ու-Թեվլիիեր-ուլ-արարի** գաղտնի ընկերությունների, ինչպես նաև Երդվյալների ընկերության հայտնի անդամները, Քահրանի որդիները, գլուխները շեղ, դատապարտյալների երկար սպիտակ պատմումները հագին, մեղմ քամուց ճոճվում էին կախաղանների վրա սարսափահար անցորդների գողունի հայացքի ներքո: Բեյրու-

թում, Դամասկոսում, Յաֆայում, Բաալբեկում այդպես օրորվում էին Արդուլ Քերիմ էլ-Յալիլը, Շեֆիք բեյ էլ-Մուտեյեղը՝ օսմանյան խորհրդարանի նախկին երեսփոխանը, Ռուշոյի Շամաան՝ նա, որ հանդես էր գալիս թատրոններում, և Սելիմ բեյ Զեզերին՝ նա, որ սրտառուց երգեր էր հորինում: Զեմալը, ծիծաղելով, խորը ծխում էր իր սիզարը: Զեմալը արդարամիտ մարդ էր: Նա միայն հայերին չէր կախում: Նա կախում էր մեծ քանակությամբ մարդկանց և առանց խորություն դնելու: Դա մի մոլություն էր, որ նա ձեռք էր բերել 1909 թվականին Ադանյում, երբ որ Միություն և Առաջադիմություն Կոմիտեն, մեծ ջարդերից հետո, այնտեղ էր ուղարկել նրան՝ գործերը մի քիչ կարգի դնելու: Զեմալը մտածում էր, որ ամենապարզ, ամենանվազ ծախսալից միջոցը կարգ մտցնելու այնտեղ, ուր այն բացակայում է, վարչական ամենալավ եղանակը, ամեն ինչ հաշվի առած, մարդկանց կախելն է:

Դա անհանգստացնում էր գերմանացիներին՝ նրա ռազմական խորհրդականներին: Դա լավ չէր պատերազմի համար: Նրանք խիստ դժգոհում էին դրանից: «Զեմալ փաշա-

յի կողմից ձեռնարկված ծայրահեղորեն խիստ միջոցները թուրքական դատից շեղեցին արաբներին», տրտնջում էին նրանք: Բայց առանց նախնական դատաքննության կատարված այս մահապատիժները, պետք է խոստովանել, ուրախացնում էին անգլիացիներին, Կահիրեի գրասենյակների մարդկանց, Զենդահի լուսեներին և բեղուինների նման հագնված այն մարդուն, որը ման էր գալիս ուղտի մեջքին նստած, և ուր անվանում էին Էլ-Ուրանս: «Զեմալը թանձրամիտ, ապուշ մարդ է, – հեգմանքով ծիծաղում էր այս վերջինը, – նա առանց գերմանացիների խորհրդին դիմելու գործում է մի թշնամու դեմ, ուր արհամարհում է, իսկ դա կարող է որևէ պահին հիանալի նվեր դառնալ հօգուտ մեզ»: Յիրավի, Զեմալ փաշայի գործելակերպը հակադարձ ազդեցություն էր ունենում: Նա չգիտեր ինչ անել՝ տրված լինելով, որ ռազմածովային նախարար և լերկ շրջանների կառավարիչ լինելը հարմար ոչինչ չուներ մի բան անելու համար: Զեմալը Դամասկոսում հաճոյանում էր Մեկնեի շերիֆի որդուն և հաճախ նրան ուղեկցում էր կինոթատրոն, որով

հետև Դամասկոսում այդ ժամանակ կային կի-նոթատրոններ: Նա ցույց էր տալիս նրան լա-վատեսական կինոժապավեճներ, որտեղ անգ-լո-ավստրալացիները Եգիպտոսից դուրս էին շպրտվում, և թուրքական մահիկը ծածանվում էր բուրգերի բարձունքին: «Եթե այս կինոժա-պավեճը ճշմարտությունն է ասում, ապա ին-չու՞ համառել և անհանգուտացնել թե՛ իմ հորը և թե՛ ինձ, որպեսզի զինծառայողներ հավա-քագրեք ձեր բանակի համար», դիտել էր տա-լիս անապատի այս ազնիվ որդին, որը եր-կնքից նոր ընկած մեկը չէր: «Գիտե՞ք ինչ, – պատասխանում էր Ձեմալը ոչ առանց փիլի-սոփայելու, – դա քաջալերում է մարդկանց: Մենք հույս չունենք նվաճելու Եգիպտոսը, ոչ էլ փորձում ենք այդ բանն անել»: Ձեմալը ոչ մի բանի հույս չուներ այլևս: Նա կառչում էր միայն Հեջազի գծին՝ սրբազն երկարուղուն, որպես փրկության միակ լաստի:

Նկատի ունենալով դա և դաս քաղելով նրա դիտողություններից, եմիր Ֆեյսալը՝ Մեկնեի շերիֆի որդին, Կարմիր ծովում հար-ձակում գործեց Ձեղդահի վրա՝ դուրս քշելու համար օսմանցիներին, իսկ նրա հայրը ան-

կախություն հոչակեց Հեջազում: «Կերե՛ք թուրքերին որպես նախաճաշ, նախքան նրանք կուտես մեզ որպես ճաշ», միաձայն արտասա-նում էին Վրեժիսնդիր արաբները՝ կրակելով իրենց հրացաններից, մինչ թեղուինի հա-գուստներ հագած անգլիացին, մի անկյունում ծվարած, շփում էր իր ձեռքերը: «Դույս ունեմ, որ այս շարժումը պիտի տարածվի, ինչպես դա երևում է», շշնջում էր նա: Ապա Լոուրեն-սը, որը կցված էր Եգիպտոսի Արաբական գրասենյակին, մանրակրկիտ կերպով վերլու-ծում էր հնարավոր այն կացությունները, որոնք ունակ էին Արաբական մեծ թերակո-ղին թեքելու Դաշնակիցների կողմը, իսկ դա մի հեշտ պատասխանատվություն չէր: Այդ էր նրա հանձնառությունը, այդ էր նրա գործը: Լոուրենսը, աչքերը չորս բացած, ոտքով կտրում-անցնում էր անհավատալի տարա-ծություններ, հայացքով ընդգրկում անապա-տային շողափայլ բնանկարներ, ուտում ար-մավ, վրանի տակ նստած խմում քաղցր սուրճ և հոխորտում իր հնագիտական հավակնու-թյուններով: Նա հետաքրքրվում էր Դամասկոսի խեցեգործական արվեստի կանաչ, կա-

պույտ, մանուշակագույն նմուշներով, հիթիթական բրոնզե առարկաներով, սեպագիր պնակիստներով և շեկ ավագի տակ նիրհող երեքհազարամյա հնություն ունեցող կավե գունավոր անոթներով: Լոռիենսը խոկացել էր հնադարյան ռազմիկ Քսենոֆոնի մասին, որը եղել էր արքայից արքա ազնվազարմ Կյուրոսի ընկերը, այն մարդու, որի հմաստությունն իր դարաշրջանում կախարդեց հայերի, Խալդիների և բյուրավոր այլ մարդկանց սրտերը: Նա կարդացել էր Գիյոն Տյուրացու, Բարեպաշտ Սիրիացու երկերը, Գոդֆրուա Բույոնի «Անդրծովյան շրջաններում տեղի ունեցած դեպքերի և գործերի պատմություն» աշխատությունը, ինչպես նաև Տարանտոյի իշխան Բոհեմոնդի և Տուլուզի կոմս Ռենոնդի պատմական երկերը: Եվ վերջապես նա մարտել էր անման մարտավար Կլաուգեվիցի գործերը: Լոռիենսը War Office-ի (պատերազմական գրասենյակ) համար մտորում էր երևակայական ծրագրերը. նավերով իշնել Ալեքսանդրետի ծովափը, զինել վատ ճակատագրի բերումով ամեն կողմից կտրված, կեղտոտ հյուրավաններում կուտակված կամ անմատույց լեռների

բարձունքներում ապաստանած և օրենքից դուրս ապրող թշվար հայերին, որոնք սնվում են հասունացած ծիթապտուղներով և չորացած պանրով: Տասը հազար հրացան և երկու հետևակային միավորի համար նախատեսված զնդացիրներ, ըստ նրա կարծիքի, բավարար կլինեին այս համարձակ նախաձեռնության համար: Դա չէր նշանակում թանկ վճարել նման մի պատերազմ շահելու համար: «Շերիֆը՝ հետևից, իսկ հայերը՝ առջևից, – հաշվարկում էր նա, – և թուրքերը որսացված կլինեն ցանցն ընկած ձկների նման»:

Չեկուցագրերով հաստատված իրողություն էր, որ Յալեպի, Յոմսի, Դամասկոսի, Երուսաղեմի շրջակայքում և մինչև կիզի Հորովանում արյունաքամ չորանում էր աքսորված հայ գաղթականների կիսակենդան կամ մահամերձ մնացորդացը: Մրա՞նք էին այն մարտիկները, որոնց կարիքն ուներ կապիտան Լոռիենսը՝ մղելու համար իր պատերազմը: Լեռնաբնակ և սարալանջերին ապրող հայերը, նրանք, ովքեր քառասուն օր դիմադրել էին Մուսա լեռան բարձունքում, ոչ մի զինամթերք չստացան: Յրաշանման մի բա-

ցառություն եղավ այն, որ Ալեքսանդրեսի ծովածոցն ակոսող ֆրանսիական Գիշեն, Դեզե, Ժամանա-դ'Արկ նավերը հավաքեցին ցնցոտիների մեջ մնացած վերապրողներին և նրանց իջեցրին Պորտ-Սահի նավահանգիստը՝ հանձնելու համար Կարմիր խաչի խնամքին։ Նրանք, ովքեր փութանակի կառուցված ժամանակավոր ճամբարներից էին, Սիրիայի կիսավեր քարվանսարայներից, Պաղեստինից և Լիբանանից, ընկել մնացել էին կիսաքաղց, թարթում էին իրենց հոգնած աչքերը և, որդերի կեր դարձած, հանձնվել էին մահվան՝ աղոթելով Նախախնամությանը կամ չմտածելով ոչ մի բանի մասին։ Նրանք դարձել էին ամայի հողերի վրա բացված հասարակաց մի սև փութաղված կղկղանքի և աղտեղության մեջ, ծածկված բզզացող ճանճերով և գարշահոտ մակաբույժներով։ Սև սայլեր գիշեր ու ցերեկ հավաքում էին դիակները։ Մի քանի կարեկից օտարականներ դույլերի մեջ լցված թեյ էին առաջարկում կամ վատորակ հաց այն մարդկանց, որոնք դեռևս կարող էին կուլ տալ որևէ սնունդ։ Խելագարված կանայք, որոնք անգամ էին դարձել ամեն ինչի նկատմամբ, հա-

ռաչելով գցում էին հացի կտորը, որ մարդիկ երկարում էին իրենց։ Նրանց, ովքեր չեին կորցրել իրենց բանականությունը, բազմիցս ասվել էր, որ ճակատագիրը գուցե կխնայեր իրենց կյանքը, եթե ողջամտությունն ունենային հավատափոխ լինելու։ Որովհետև մարդասպանները՝ օսմանցի ոստիկաններ և պաշտոնյաներ, ընդունելի էին համարում այդ տեսակի փրկությունը։ «Թող կապիկ դաշնան, եթե դա կարող է թույլ տալ նրանց, որ փրկվեն», ասում էր Զեմալ փաշան, որի բարեմտությունը զայրացնում էր նրա ստորադասներին։ Արևածագից մինչև մայրամուտ հարկավոր էր շտապով փորված խրամատների մեջ թաղել նեխվող մարմինները։ Դա լավ չէր թուրքերի մղած պատերազմի համար, առավել ևս՝ անապատում Զեմալի հրամանատարության տակ գործող բանակի համար, սիրիական այն փառավոր բանակի, որը պաշտպանում էր Կայսրությունն ու Յեջազի սրբազն երկաթուղին։ Որովհետև գաղթականների հետ գլուխ էր բարձրացնում նաև տիֆը, իսկ տիֆը չէր ճանաչում իր գոհերի կրոնը։

## ՃԸ

Ալեկոծված Կարմիր ծովի վրայով Արաբիայի Լոռիրենսը բերում էր Վիկեր մակնիշի գնդացիրներ, Բիկֆորդ մակնիշի լարեր, Ռոլս-Ռոյս զրահապատ ավտոմեքենաներ, ծովածոնսկի, ինչպես նաև ժամացույցներ՝ բաշխելու համար: Անհրաժեշտությունից մղված լինի, թե նախընտրությունից, նա իր հույսը դրել էր միայն արաբների վրա՝ իրականացնելու համար այն առաքելությունը, որ դրել էր իր մտքում: Լոռիրենսը իր և Մեկեբի շերիֆի որդի Ֆեյսալի շուրջն էր հավաքում բոլոր ցեղերի բեղուիններին՝ Յուհեյնահներին, Բենի Սալիմներին, Յուլիեյներին, Ռուալլահներին, Զելեբանի Հանեյտարներին, Բենի Ատիյահ Ագեյլատներին և, այդպես, նրանց ուղեկցությամբ բարձրանում դեպի հյուսիս՝ նստած արագընթաց իր ուղտի վրա: «Մեր թագավորությունը յուրա-

քանչյուրիս հոգու մեջ է, – բացատրում էր նա իր անհանդարտ ռազմիկներին, – մենք կարող ենք լինել այն գոլորշու ննան, որ հնարավոր չէ ձեռքով բռնել»: Լոուրենսը գրավեց Աքարան: Քրամանատար Լոուրենսը սաբոտաժի էր ենթարկում «սրբազն» երկարուղագծերը, պայթեցնում՝ կայարանները, ռազմական կետերը, քարակերտ կամուրջները: Նա պայթուցիկ նյութեր էր տեղադրում երկաթգծերի արանքում, կիլոգրամներով ժելինիտ էր դնում լայնակի քառակող պողպատաձողերի միջև, կակաչածեն ականներ էր թաղում հողի տակ և լարեր քողարկում խճաքարերի հատակին: Շոգեքարշները օր էին բարձրանում, իրացաններով լցված վագոնները ծալվում էին ակորդենի ննան: Լոուրենսը հարվածում էր այնտեղ, ուր չէին սպասում իրեն: Թուրքերը չգիտեին՝ ո՞ր պատին խփել իրենց գլուխները: Զեզոքացնել արաբական ապստամբությունը անկարելի մի փորձ էր, ինչպես անկարելի է «դանակով ապուր ուտելը», իսկ զորավար Ալենթին՝ անգլիացիների, նորգելանդացիների, ավստրալացիների և գյուրիսանների դեկավարը, առաջանում էր Սինայի անապատում և

Պաղեստինում: Ալենթին մտավ Երուսաղեմ: Թուրքերը նահանջում էին: Նրանք հանձնվում էին փոքրաթիվ խմբերով, ջոկատներով, զորագնդերով կամ սպանվում էին անհաշիվ: Այն ժամանակ Զեմալ փաշան մտածեց, որ խելացի, օգտակար և նպաստավոր բան կլինի ճամբար փոխելը:

«Ես չեմ վերադառնա Կոստանդնուպոլիս, մինչև չնվաճեմ Եգիպտոսը», հոխորտացել էր Զեմալն իր մեկնումի օրը դյուրահավատ ամբոխի ծափահարությունների տակ: Ժամանակն էր մոռանալ դատարկ խոսքերը, հաշվի առնել իրականությունը և մտածել ապագայի մասին: Զեմալը հանկարծ հիշեց, որ ինքը երեք գերմանասեր չէր եղել, ընդհակառակը: Երկարե Խաչը իր կրծքին ամրացվել էր միայն պատրանք ստեղծելու համար: Նա հիշեց հանկարծ, թե ինչպիսի՝ շերմությամբ, ինչպիսի՝ սքանչացումով էր այցելել Կրյոզոյի գինագործարանները և ֆրանսիական նավատորմի շքեղ նավերը: Նրա մտքից դեռ չէին հեռացել ֆրանսիական մանուլի՝ իր անձին ուղղված ներբողալից արտահայտությունները. «Զեմալ փաշան անծանոթ չէ մեր ընթերցողներին:

«Անցած շաբաթ, չորեքշաբթի օրը, Մեսամե՛ն՝ Աթեն (Բանքեր Աթենքի) լրագրի հաղորդած մի լուրի համաձայն, տեղական թերթերն արձանագրում էին, որ Զեմալն ապստամբել է Կոստանդնուպոլսի կառավարության դեմ և հաջողության հասնելու համար ոտքի է հանել վայրագ դյուլգիներին»: Կոպի՛տ ստեր: «Թերթն ավելացնում էր, որ արարմերը օգնում են Զեմալին»: Դա քիչ հավանական էր՝ նկատի ունենալով այն պարագան, որ նա հետևողական կերպով կախաղան էր բարձրացրել նրանց: Զեմալ փաշան իր մտադրության մասին գրում էր Ֆեյսալին, իսկ սա այն փոխանցում էր Լոռիրենսին, իսկ վերջինս էլ՝ Կահիրե: «Մեկեի դեմ ընթոստությունը Աստծու կողմից տրված պատիժ էր նրա համար: Նա պատրաստ էր անելու ամեն բան՝ դարմանելու համար հավատի դեմ գործված այդպիսի մի զանցանք»: Բայց Զեմալ փաշայի համար հարկավոր էին ավելի հաստատուն երաշխիքներ, քան աստվածային և անստույգ մի հատուցում: Նա, ի գին իր վերադարձի, դաշնակիցներից պահանջում էր, որ պատերազ-

մից հետո իրեն մշտնչենապես շնորհվի սուլթանի տիտղոս և ամբողջականությունն այն հողերի, որոնց վրա նա իշխելու էր. այն է՝ Սիրիան, Միջազգետքը, Արարիան, Հայաստանը, Քուրդիստանը... Օսմանի փոխարեն սուլթան. Ժառանգական սուլթանություն: Այս գաղափարն ի վերջո վատ չէր իր համար, իր որդու համար, իր թոռան համար, իր որդոց որդիների համար: Սուլթանի տիտղոս շնորհելը դեռ կարելի էր. մեծ տերությունների իրավասության էր վերապահված այդ տիտղոսը շնորհելն ու այն վերացնելը: Բայց այն տարածել ընդարձակածավալ հողերի վրա, շատ ուշ էր, որովհետև նրանք արդեն այդ հողերը դարձրել էին բարեհաջող բաշխման առարկա Ֆրանսիայի և Անգլիայի միջև: Առևտրական պալատները, դիվանագետներն ու գեներալները այդպես էին որոշել դրանց ճակատագիրը իրենց գաղտնի բանակցություններում: Ինչի՞ համար էր պատերազմը, եթե ոչ Անտիոքի քրոնի, Բեյթ-Շերաբի երկարի, Հորդանանի ֆոսֆատների, Զերել Միսիսի մանգանի, Զերել Ակրայի արծաթախառն

կապարի և 72 տոկոսանոց նիկելի հանքաքարի համար (այն դեպքում, եթե «Նոր-Կալեդոնիայի մեր հանքավայրերում դրա պաշարները 45 տոկոսը չեն անցնի»): Նրանց ինչի՞ն էին պետք ողջուտ, հյուծված, անտուն, ապագա չունեցող հայերը:

Փաշան, հուսախարված, բազմապատկում էր իր գիշումները, դիզում էր դրանք մեկը մյուսի վրա անհաստատ խորանարդիկների նման: Յեջազի, Սիրիայի, Միջագետքի ինքնավարությունը, Մեկկեի թագավորությունը շերիֆ Յուսեյնի համար: Եթե որ կույտը բավականաշափ բարձրացավ, այն փուլ եկավ: Գնդապետ Լոռիենսի և էմիր Ֆեյսալի ուղտերի շարասյուները, Ռուս-Ռոյս գրահապատ ավտոմեքենաները բարձրանում էին դեպի Ազրակ, Նիզիր, Դերաա, Տել Արար: Ձեմալ փաշան հեռացավ սպառնալիքի տակ գտնվող Դամասկոսից և մեկնեց Յոմս: Յեջազի արաքական բանակի սև, կարմիր, կանաչ և սպիտակ գույշներից բաղկացած դրոշակը ծածանվում էր շենքերի ճականներին: Թուրքերը, շփոթության մատնված, լքում էին իրենց դիրքերը, պայթեցնում իրենց

գինանցները և բարձրանում մեկնելու պատրաստ վերջին գնացքի վագոնների կտրի վրա: Ձինվորական միավորները, ջոկատները քանդվում, քայքայվում, կազմալուծվում էին: 3-րդ գորագունդը, 24-րդ գորաբանակը, 146-րդ գումարտակը... Բնակիչները, համարձակություն ձեռք բերելով, պատուհաններից և դռների անկյուններից կրակում էին պարտվածների վրա: Վերջապես մի օր, առավոտյան, Էլ Ուրանսն ու նրա ազգատոհմի մարդիկ հաղթական մտան Դամասկոս և տեղավորվեցին Վիկտորիա հյուրանոցում: Արևից խանձված դեմքերով բեղուինները, նստած իրենց փոքր ճժույգների վրա, համդիսավոր երթով և բացականչելով անցնում էին փողոցներով՝ իրենց հրացանների կոթը հենած պաճուճագարդ կաշվե թանքերի վրա: Քեֆրէ կամ ֆես կրող տղամարդիկ, իրենց գլխին գաղութային սաղավարտանման գլխարկներ դրած գինվորներ, բարձրածայն աղոթող դերվիշներ, իրենց սև քողերն արձակած կանայք տոնական ուրախության մեջ էին նրանց հետ, որովհետև բոլորն էլ գոհ էին, որ այլև

ՕՄԱՆԳԻՒՆԵՐ ՀԵՆ:

Ձեմալ փաշան իր ձիով արշավասույր քաշվեց գնաց դեպի Յալեպ՝ իր հետևից բարձրացնելով դեղնավուն փոշու ամպեր: Ապա անհայտացավ բնության մեջ՝ կրկին հայտնվելու համար Կոստանդնուպոլսում մարմնի Վրա առանց մի քերծվածքի:

10

Ամիսներն ավելանալով ամիսների վրա, և  
պարտությունները՝ պարտությունների վրա,  
նրանք, ովքեր գտնվում էին Թուրքական կայս-  
րությունում պաշտոնով կամ պարզապես գու-  
գաղիպությամբ և իրենց աչքերով տեսել ու  
իրենց ականջներով լսել էին այս բոլորը, ցովե-  
ցին երկրագնդով մեկ և վերադարձան իրենց  
սովորական կյանքին: Լեռնային բարձր շրջան-  
ներում կամ դաշտավայրերում ոչինչ չկար սովոր-  
ուեցնելու, ոչ ոք չէր մնացել խնամելու և ոչ մի  
հարց չկար բանակցելու համար: Դասախոսու-  
ներ, բուժքույրեր, ծեռնարկությունների արտո-  
նաւուերեր, բոլորն էլ վերադարձան Ամերիկա,  
Դանիա, Շվեյցարիա, Գերմանիա: Նրանք,  
կառքերով կամ ձիերով, աստիճանաբար, գա-  
լիս էին մայրաքաղաք՝ Բուֆորի ափին: Գնացքներն սպասում էին Սիրքեցիի կայարա-

նում, իսկ նավերը՝ նավահանգստում: «Եթե Աստված կամենա, վաղը, առավոտյան ժամը 7 անց 44 րոպեին կմեկնենք: Մենք շատ ուրախ ենք, որ մեկնում ենք»: Ուրֆայի ֆրանսիացին վերադարձավ Երուսաղեմ՝ դեկավարելու Ֆրանսիական հյուրանոցը: Խարբերդի ամերիկյան հյուպատոսը գնաց Ֆինլանդիա և կրկին ստանձնեց իր պաշտոնը: Հրամանատար Գորդինին որդեգրեց մի փոքրիկ որբուհու, իսկ դեսպան Մորգենթաուն մեկնեց Լեհաստան, որպեսզի տեղեկանա տեղի հրեաների անհայանձելի ճակատագրին: Էրգորումի գերմանական հյուպատոս ֆոն Շյորներ-Ռիխտերը վերադարձավ Մյունիսեն, որպեսզի իր հայրենիքը փրկի ցեղերի խառնուրդից շնորհիվ այն բանի, ինչ սովորել էր Թուրքիայում (բայց նա ժամանակ չունեցավ գործադրելու իր տեսությունները և մեռավ անժամանակ՝ կառչած ամբոխավար Ադոլֆ Շիտլերի թկից, ետպատերազմյան, շրջանում կատարված պետական հեղաշրջման ձախող մի փորձի ժամանակ):

Վերջապես համաշխարհային պատերազմն ունեցավ իր վախճանը: Ամեն կողմից ճարգում էին կայսրությունները: Ռուսաստանի

ցարը ծնկի եկավ քաղցած մուժիկների առջև: Լենինը կոչ էր անում աշխարհին հեղափոխության համար: Սուլթան Արդուլ Յամիդը, որ մարդկանցից մոռացված և արգելափակված մասում էր մարմարե մի պալատում, ժամանակը հասած համարեց ներկայանալու վարձահատուց և ամենազոր Աստծու առջև՝ ոչ թե վայելու համար հավերժական երանության պարտեզների, նրանց վճիռ և քաղցրանվագ աղբյուրների գեղեցկությունը կամ տիրանալու չքնաղ հուրի-փերիներին ու հարճերին, որոնք խոստացված էին նրանց, ովքեր տառացիորեն հետևում էին երկնային պատվիրաններին, այլ հավիտենապես տանջվելու գեհենում, որովհետև նրա բոլոր արարքները հաշված և կշռված էին: Զմեռային մի ցուրտ օր նա թռքատապից բռնվեց, հազար և ավանդեց գիշակեր ագրավի թևերի սևությունն ունեցող իր սև հոգին: Այսքանը նրա վախճանի մասին:

Թագերը մեկը մյուսի հետևից ցած գլորվեցին: Կիլ քաղաքի նավահանգստում գումար և հոգնած նավաստիներ իրենց նավերի գագաթին ցցեցին ապստամբության դրոշը, դուրս քշեցին իրենց անմիտ և անճարակ սպաներին

և Համբուրգում, Լյուքսեմբուրգ, Բրեմենում տարածեցին համընդհանուր հեղափոխության գաղափարը: Նույնիսկ Բավարիան դրսևորեց դեմոկրատական և սոցիալական փոփոխության հակում: Վիլհելմ Բ-ի՝ կոր և սրածայր թեղերով այդ հզոր կայսրի գահը տապալվեց: Ավստրո-Հունգարական կայսրությունը մասնատվեց: Բուդապեշտը հանրապետական կարգեր ընդունեց: Յարավալավիայում սլավոնները հաճադաշնակցություն կազմեցին: Միսիի<sup>31</sup> Եվրոպան դադարել էր գոյություն ունենալուց: 1918 թվականի նոյեմբերի առաջին օրվա երեկոյան երիտրուրքական կառավարության պարագլուխները փախտած տվեցին: Թալաաթ փաշան, Ենվեր փաշան, սև մորուքով և իրացայտ աչքերով Ձեմալ փաշան, դոկտոր Նազիմը և դոկտոր Շաքիրը, սրանք բոլորը, դիակների գարշահոտությամբ թաթախված, բարձրացան գերմանական մի նավ (իսկ ուժեղ երևակայությամբ օժտված մարդիկ հաստա-

<sup>31</sup> Միսի – Ավստրո-Հունգարական պետության վերջին կայսրուի Էլիզաբեթի անվան փաղաքական ծեր, որով նա հայտնի էր ամբողջ Եվրոպայում (Ծնթ. թարգմ.):

տում էին, թե նրանք մտան մի սուզանավի մեջ՝ գնալու համար Օդեսա՝ Սև ծովի ափին: Այնուհետև նրանք ցրվեցին Եվրոպայում: Միություն և Առաջադիմություն Կոմիտեի Թուրքիան ապրել-ավարտել էր իր ժամանակը: Կոստանդնուպոլիսը, շփոթված և հաշտված իր ճակատագրի հետ, նայում էր դաշնակիցների՝ Բոսֆորի ջրերում խարսխված հետախուզական եռակայմ ռազմանավերին, Էսկադրային ականակիրներին, հածանավերին և զրահանավերին՝ անգլիացիների Սըփօր-ին, իտալացիների Լեռնարդո դա Վինչի-ին, ֆրանսիացիների Դեմոկրասի-ին և Դիդրո-ին, որոնք կանգնած էին ուղիղ կայսերական պալատի դիմաց: Պերայի փողոցներում ոստիկանական խառն պահակագնդեր չափչփում էին սալահատակը: Ֆես կրող բուրքերը անփութորեն ճենում էին փողոցներում եռամկյուն գլխարկներ կրող իտալացիների և կեափի կրող ֆրանսիացիների ուղեկցությամբ: Ամեն ինչ գրված էր: Յաշիվ պահանջելու ժամը հասած էր: Օսմանյան կայսրությունն օժտվեց մի նոր կառավարությամբ, և այդ նոր կառավարությունը հաստատեց զինվորական մի ատյան՝ դա-

տելու համար նախկին կառավարությանը՝ փախստականների կառավարությանը, որոնք աղեսի մեջ էին քաշել Թուրքիան՝ այն հասցելով ստորին աստիճանի: Փաշաները և նրանց մերձավոր խորհրդականները դատվեցին ի բացակայության, քանի որ բոլորն էլ փախուստ էին տվել՝ իրենց հետևում թողնելով ավերակ և քայլայում: «Էական կետը, որը բխում է հարցաքննությունից, այն է, որ հայերի տեղահանության շրջանում տարբեր վայրերում և ժամանակներում գործված ոճիրները առանձին և տեղական բնույթ ունեցող փաստեր չեն: Բայց կազմակերպված կենտրոնական մի ուժ, բաղկացած վերոհիշյալ անձերից, դրանք կանխամտածել և գործադրել է կամ գաղտնի իրամաններով, կամ բանավոր կարգադրություններով»: Այդպես է, որ Թալաար փաշան՝ նախկին Ներքին գործերի նախարարն ու Մեծ Վեզիրը, Ենվեր փաշան՝ նախկին Պատերազմական նախարարն ու գլխավոր զորահրամանատարը, Զեմալ փաշան՝ նախկին Ռազմա-ծովային նախարարը, դոկտոր Նազիմը՝ Հանրային կրթության նախկին նախարարը, դոկտոր Բեհաէդին Շաքիրը՝ լու-

ծարված Միություն և Առաջադիմություն Կոմիտեի և Հատուկ կազմակերպության անդամը, իրենց ոճիրների և հանցագործությունների համար հեռակա կարգով դատապարտվեցին մահվան, համաձայն օսմանյան քրեական օրենսգրքի 45-րդ և 170-րդ հոդվածների՝ վերահաստատված նույն օրենսգրքի 181-րդ հոդվածում: Այս մահապատիժը, ստիպողաբար, մնաց մեռյալ տառ:

Արդ, քանի որ այս գործակից ընկերները ազատ էին և քաջառողջ, նրանք փառավորապես հաստատվեցին Բեռլինում, որովհետև մեծ հարստություն և գանձեր էին կուտակել իրենց նախարարության շրջանում: Այնուհետև բաժանվեցին իրարից՝ սկսելու համար մի նոր կյանք յուրաքանչյուրն իր համար, իսկ Նախախնամությունը բոլորի համար: Նրանք չէին տաճզվում ո՛չ խղճահարությամբ, ո՛չ վշտով կամ իրենց վհատեցնող ուրիշ որևէ զգացումով և չէին իրաժարվում մի օր մեռելներից հարություն տալու իրենց զառանցական անցյալին: Զեմալը բռնեց Աֆղանստանի խորհութորդ և քարքարոտ ճանապարհը՝ իր կարողությունները ի սպաս դնելու էմիր Անանուլլահին, որի

խորհրդականը դարձավ ռազմական գծով: Զի՞ս աչ ու ձախ շրջելով Դիմալայան լեռների լանջերին՝ Ձեմալ փաշան երևակայում էր, որ շուտով կալխավորի Փեճաքը՝ իհնգ գետերից ոռոգված այն երկիրը, որի վրա իջավ Օսիրիսի<sup>32</sup> շնորհը հազարամյակներ առաջ, այն երկիրը, որին ի զուր տենչացին Բաբելոնի թագուհի ասորեստանցի Շամիրամն ու մակեդոնացի Ալեքսանդր Մեծը, այն երկիրը, որի հոգին չկարողացան խորապես նվաճել ոչ սկյութացիները, ոչ պարսիկները, ոչ թաթարները և ոչ իսկ անգլիացիները: Յնդկաստանի հողերը եռում փոթորկվում էին այն օրից, երբ բրիդադային-գեներալ Ռեժինալդ Ռայերի հրացանակիրները Ամրիցարի՝ երից սուրբ այդ քաղաքի պարտեզներում դավաճանաբար կրակեցին ընչազուրկ բազմության վրա, այն օրից, երբ աֆղան Ամանուլլահը արհաբար դիմադրել էր Քիբեր լեռնանցքում բրիտանական զորագնդերին, այն օրից, երբ Մուհամմադ և Շավ-

<sup>32</sup> Օսիրիս – եգիպտական դիցաբանության մեջ մեռնող և վերակենդանացող բնության աստվածը, որը միաժամանակ եղել է ննջեցյալների դատավորն ու հովանավորը (Ծնթ. թարգմ.):

կաթ Ալի եղբայրները տարածել էին խալիֆաթի սրբազն խոսքը ռաջփուլտների և ջատերի մեջ:

Եվ մինչ Ձեմալը Յնդկաստան էր երազում, Ենվերը փայփայում էր կովկասյան քասից դուրս եկող մի նոր կայսրության գաղափարը: Զգիտես ինչ ուղիներով նրա ճակատագիրը խաչաձևկեց Կարլ Ռադեկի ճակատագրի հետ՝ ծխամործ ծխող ակնոցավոր այն փոքրակազմ մարդու, որը ցրտից դողում էր Բեռլինի թանտերից մեկում որպես Լեմինի կողմից Մոսկվայում հոչակված Կոմինտերնի՝ միջազգային պրոլետարիատի պրոպագանդիստ: Այս Ռադեկը աննշան մի քաղաքագետ էր, բոլշևիզմի երկրորդական մի դեմք՝ ծևավորված լեհական և լիտվական սոցիալ-դեմոկրատական գաղափարներով, չեկիստ Ֆելիքս Զերժինսկու ընկերներից մեկը, բազում լեզուներ իմացող օգտակար մի անձ, որին հանձնարարություն էր տրվել հետևել ընդհատակում գտնվող գերմանական կոմունիստական կուսակցության անկայուն զարգացմանը: Բայց լինելով ոչ ճարպիկ մարդ՝ նա ձերբակալվեց տեղի ոստիկանության կողմից: Իր բանտախցում նա գրում

Եր պարսավագրեր, հետևում օրվա նորություններին և կապեր պահպանում դրսի աշխարհի հետ: «Ինձ հաջողվեց,— հայտնում էր նա առանց հավելյալ բացատրություններ տալու, — հարաբերության մեջ մտնել միաժամանակ Թալաք փաշայի, Ենվեր փաշայի և գերմանական քաղաքական աշխարհի արևելյան քաղաքականության ներկայացուցիչների հետ»: Ռադեկը արմատական քաղաքական մի գործիք էր, որ իր քի ծայրից այն կողմ չէր տեսնում: Նա աջից ու ձախից անիմաստ զաղափարներ էր հավաքում՝ ամեն անգամ կարծելով, թե մի լավ խաղ է խաղում իմպերիալիզմի դեմ: Բրիտանացի մի դիվանագետ, որի հետ նա առիթ էր ունեցել շփվելու, նրա մեջ տեսնում էր դասախոսի և պավակի ապշեցուցիչ քիմիական մի խառնուրդ: Թերևս դա էր պատճառը, որ նա մտադրվեց իր ուղեբեռի հետ Ենվեր փաշային բերել Սովետական Միություն, որպեսզի անհրաժեշտության դեպքում օգտագործի նրան: Սակայն այդ բանը հնարավոր չեղավ կատարել անմիջապես և առանց դժվարության: Գերմանական բանակի բարձրաստիճան մի սպա փաշային կեղծ անձնագրով պի-

տի բարձրացներ Յունկեր մակնիշի մի օդանավ, որը Մոսկվա էր տանելու մի քանի գործարար մարդկանց: «Ես օդանավ եմ նստելու դոկտոր Նազիմի ուղեկցությանք, — գրում էր Ենվերը Ձենալ փաշային, որը կորել էր Արևելքի մի անկյունում:— Այստեղ մեր բոլշևիկ բարեկանները հանձն են առնում մեզ օգնել այն գաղափարների շրջանակում, որ մենք փոխանակեցինք մեր գրույցների ընթացքում»: Բայց Լիտվայում պարտադիր մի վայրէջքի ժամանակ փաշան կասկած առաջացրեց որպես լրտես և բանտարկվեց մի քանի օր: Երկրորդ փորձի ժամանակ նա ծերբակալվեց Ռիգայում: Երրորդ փորձը հաջող անցավ, և Մոսկվան վերջապես գրկաբաց ընդունեց նրան:

Ուստական արխիվները հավանաբար կպարզեն նրա հարաբերությունների և գործունեության մանրամասնություններն այն մարդկանց, ովքեր կիետաքրքրվեն դրանցով: Ստույգն այն է, որ նրա մի հայտարարությունն ընթերցվել է Բաքվում Արևելյան ժողովուրդների համագումարի բեմից, որին նախագահում էին Զինովևն ու Ռադեկը, և որին ներկա էր Եղել Զոն Ռիդը: Քաղաքի բատրոնում մեծ բազմությամբ հա-

Վաքվել էին պարսիկներ, որոզներ, կումիկներ, թաջիկներ, ուզբեկներ, դազախներ, լեզգիներ, չեչեններ, ինգուշներ, վրացիներ, թուրքմեններ, թուրքեր և հայեր, որոնք կարմիր էին ներքուստ, ինչպես օղում ծածանվող դրոշակները: Նրանք ծափահարում էին, իրենց ոտքերը դնում բազկաբռների վրա, ուռաներ էին կանչում, վեր էին կենում և գոչում. «Կեցցե՛ ընկեր Զինովկը՝ մեր ղեկավարն ու համաշխարհային կոմունիզմի ղեկավարը»: «Կեցցե՛ ընկեր Ռադեկը՝ միջազգային պրոլետարիատի առաջնորդներից մեկը»: Նրանք ողբում էին Շահումյանին և Զափարիձեին, որոնք եղայրաբար գոհվել էին պայքարում և օրինակ հանդիսացել: Արդ, մի հրապարակի անկյունադարձին, որտեղով անցնում էր մի թափոր, իր ձիու վրա բարձր նստած Ենվեր փաշան ողջունվեց իր հերթին ցնծության աղաղակներով: Ենվերի ներկայությունը Բաքվում դուր չէր գալիս բոլորին, ոչ Զինովկին, որն ուզում էր «կեցցեները» պահել իր համար, ոչ հայ պատգամավորներին, ոչ իսկ թուրքական ցեղերին և, մանավանդ, կանաց, որոնք եկել էին պաշտպանելու իրենց սեփական դատը:

«Ես ոտքի պիտի կանգնեցնեմ իսլամական հեղափոխականների կազմակերպությունը», հաշվարկում էր Ենվերը, երբ ժամանակավորապես բնակվում էր Սովետական Միությունում և ծեռք երկարում կոմունիստներին, որոնք առատորեն նրան բաշխում էին անգլիական բանկնուները: Փաշան սկսում էր մարդկանց կոչել «ընկերներ». այդպիսով նա հավաքեց իինգ հարյուր հազար գերմանական մարկ: Ապա ճանապարհորդեց իտալիայում, Ծելցարիայում և Գերմանիայում՝ շարունակելով կյանքի կոչել իր ծրագրերը:

h

Սակայն, բոլշևիկներից բացի, ուրիշներ էլ էին հետաքրքրություն երիտրութերի վարչակազմի անկյալ հրեշտակներով։ Բռուտոնում, ժննում, Թիֆլիսում ցրված մի բուռ դաշնակցական հայեր երդեւել էին գործադրել օսմանյան դատական բարձրագույն ատյանի մահավճիռը։ Նրանք իրենց գործունեությունն սկսեցին Նեմեսիս նշանաբանով, որը վրեժինդրության աստվածուիին է հունական դիցաբանության մեջ։ 1921թ. մարտի 15-ին, առավոտյան ժամը 11-ին մոտ, Շառլոտենբուրգի շրջանում գտնվող Յարդենբերգշտրասե փողոցի թիվ 17 շենքի մոտ Սովորոնն Թեկիերյան անունով երբեմնի այն երկչու և վատառողջ պատանին, որ մեծացել էր Երզնկայում, Արևելքի բարձունքների վրա, ատրճանակի մեկ հարվածով սպանեց Թալաաթ փաշային, որը

անգործ ման էր գալիս կենդանաբանական այգու մոտերքում՝ «հագին ձմեռային մի հաստ վերարկու»։ Միայն մի փանփուշտ բավական եղավ ներքին գործերի նախարարին ուղարկելու կյանքից դեպի մահ։ Նրա ծոքրակին արձակված 9 միլիմետր տրամաչափի գնդակը դուրս էր եկել ձախ աչքի վերևի մասից՝ բաց անելով մեկ մատի լայնությամբ մի մեծ անցք։ Գերմանական մակնիշի ատրճանակը պատրաստվել էր 1915 թվականին։ Կրակող երիտասարդը, որին հետապնդելով շուտով բռնեցին և սկսեցին անխղճորեն ծեծել, գոռում էր տարօրինակ մի առոգանությամբ։ «Ես հայ, նա թուրք, դա չի վերաբերում Գերմանիային» (կամ՝ «Ես հայ, նա թուրք, վճառ չկա Գերմանիայի համար»), որովհետև վկաները ճշգրիտ կերպով չէին հիշում այն, ինչ լսել էին։ Տկարակազմ երիտասարդը, որ ամբաստանվում էր մարդասպանության մեջ, տարվեց ոստիկանատուն, ապա դատվեց Բեռլինում տեղի ունեցած մի դատավարության ժամանակ և անպարտ արձակվեց, որովհետև պարզվեց, որ նրա զոհը, որը թեև զարդարված էր փաշայի տիտղոսով, ստորին կարգի մի տականք էր,

անթիվ-անհամար ոճիրներով բեռնավորված գուեհիկ մի մարդասպան, մահվան դատապարտված և փախուստի մեջ գտնվող մի արարած, որ արժանի էր իր ճակատագրին։ Այս եզրակացության հանգեցին Բեռլինում գումարված դատական ատյանի երդվալ ատենակալները, և Սոլդոնն Թեհլերյանը, ազատ արձակվելով, մեկնեց Գերմանիայից։

Թալաար փաշայի ընկերներն ափսոսանք զգացին և այդ օրվանից ապրեցին սրտնեղության մեջ։ Նույն տարվա դեկտեմբեր ամսի սկզբին նախկին Մեծ վեզիր Սահիդ Շալիմ փաշան սպանվեց Հռոմում իր սեփական առանձնատան առջև Արշավիր Շիրաքյանի՝ Gold Browning<sup>33</sup>-ից արձակված գնդակի մի հարվածով, այն երիտասարդի, որը մեծացել էր Կոստանդնուպոլսում իր մոր հետ և Պերայի իրենց թաղամասում տեսել, թե ինչպես մինչև ատամները զինված ավազակները, իրենց աղոթքից հետո, «մահ» գոռալով զանգվածաբար հարձակում էին գործում և իրենց թերը աջ ու ձախ շարժելով՝ հարվածում գյավուրներին (անհա-

<sup>33</sup> Gold Browning – Ատրճանակի տեսակ։

վատներին), մինչև որ նրանք արյուն միզեին և անշնչանային: Սահի Յալիմը իր ահարեկված աչքերը փակելուց առաջ արտասանեց «Երեն...»<sup>34</sup> բառը, ապա նրա գլուխը ճաքեց: Նրա հետևից դոկտոր Բեհաէդին Շաքիրն սպանվեց իր կրծքին ստացած գնդակի մի հարվածով 1922թ. ապրիլի 17-ին, Զատկին հաջորդող երկուշաբթի օրը, կեսգիշերին մոտ: Դա, ըստ այնտեղ գտնվող մարդկանց աղոտ հիշողության, տեղի էր ունեցել ոչ հեռու մի կինոթատրոնից, որտեղ ցուցադրվում էր Ֆրից Լանգի<sup>35</sup> Dr. Mabuse կինոժապավենը (իրականում թվում է, որ այդ ֆիլմը էկրան էր բարձրացել այս դեպքից միայն տասը օր հետո, բայց Մեծ ոճագործի մասին գրված վեպը՝ «Մի պատկեր մեր ժամանակաշրջանից», արդեն լույս էր տեսել Berliner Illustrirte Zeitung<sup>36</sup> թերթում շարունակելի դրվագներով):

<sup>34</sup> Երեն – թուրքերն՝ գետինը մտիր:

<sup>35</sup> Ֆրից Լանգ – Ավստրիական ժագում ունեցող ամերիկացի հայտնի կինոթեմադրիչ (Ծն.թ. թարգմ.):

<sup>36</sup> Berliner Illustrirte Zeitung – Բեռլինում 20-րդ դարի առաջին տասնամյակներում հրատարակվող նկարագրող թերթ (Ծն.թ. թարգմ.):

Զենալ փաշան ներկա եղավ դոկտոր Շաքիրի հուղարկավորությանը, իետո նորից անհետացավ Արևելքում: Ստեփան Շաղիկյանը, որի մասին ոչինչ չգիտեին, հասկացավ, որ Զենալը տեղափոխվել է Բարում, երբ ստացավ հետևյալ ծածկագիր հեռագիրը. «Առաքեցեք ծանրոցը»: Ստեփան Շաղիկյանը, Արտաշես Գևորգյանը և Պետրոս Տեր-Պողոսյանը դարձանակալ հետևեցին փաշային՝ մշտապես աչքի տակ պահելով նրան, մինչև որ նա, բազում փամփուշտներով ծակոտված, անշունչ տապալվեց գետին Թիֆլիսում, Զեկայի շենքի առջև 1922 թվականի հուլիսի 25-ի հետմիջօրեին:

Այն ժամանակ էնվերը մենակ զգաց իրեն: Մահը մոտենում էր նրան: Նա իսկույն մեկնեց Բուլսարա՝ մարգարիտների մեջ գեղեցկագույնը համարվող այն քաղաքը, որտեղ Բասմաջիները<sup>37</sup> հակադրվում էին այլակրոններին և

<sup>37</sup> Բասմաջի – թուրքերն բասմար = հարձակվել բարից: Բասմաջի = հարձակվող, 1917թ. Ռուսաստանում տեղի ունեցած հեղափոխությունից հետո Սիջին Ասիայում առաջացած հակահեղափոխական շարժման գինված հրոսակախմբեր, որոնք կոչում էին բոլշևիկների դեմ (Ծն.թ. թարգմ.):

անաստվածներին, որոնք չեն վախենում Մարգարեից, նրա օրենքներից ու սովորություններից: Ենվերն իր գլխին փառաբեց Յավատացյալների հրամանատարի սպիտակ չալման և զարդարվեց «Խալիֆի փեսա» տիտղոսով որպես Բուլսարայի, Խիվայի և Թուրքեստանի բանակների գերագույն ղեկավար, որպես Մեծ Թուրանի խոլամական ուժերի գորահրամանատար: Նստած Դերվիշ անունով իր սոկեսմբակ երիվարի վրա՝ նա ձիավարում էր անջրդի տափաստաններում, խորը կիրճերում և ծործորներում, բարձրաբերձ լեռների վրա: Հենց այդտեղ էլ նրան բռնեց մահը՝ գերեզմաններ կառուցող այդ անողոք Կործանիքը: Կարմիր հեծելազորի ջոկատներից մեկը նրան դուրս քաշեց իր որջից 1922 թվականի օգոստոսի 4-ին: Ասում են, որ Ենվեր փաշան ծակոտվեց յոթ փամփուշտներով, որ նրա գլուխը վզից անջատվեց սայրասուր մի սուսերով, որ նրա գլխատված մարմնի վրա գտան մի Ռուրան: Ասում են, որ նա հագել էր անգլիական կոստյում, գերմանական երկարածիտ կոշիկներ և իր գրպանում ուներ Յնդկաստանում հրատարակվող բրիտանական թերթեր և

Բեռլինից ստացված նամակներ: Ոմանք պնդում են, որ Աղաբեկով անունով մի հայ լրտես նրան հանձնել է բոլշևիկների ծեռքը: Եվ դեռ ուրիշներ հաստատում են, որ դա այդպես չի եղել, այլ նրա հաշիվը մաքրել են հայկական մի գումարտակի պատկանող ծիավորները: Ինչպես որ էլ դա եղած լինի, ստույգն այն է, որ այս երրորդ փաշան մեռավ և մեկընդմիշտ մեռավ: Դոկտոր Նազիմը՝ Յատուկ կազմակերպության ղեկավարը, Վերադարձավ Թուրքիա ամեն մտահոգությունից ազատ և անվճա: Նա կարող էր հանգիստ մահանալ իր անկողնում, եթե չարաբաստիկ գաղափարն ունեցած չլիներ դավելու նոր ղեկավարի՝ Մուսթաֆա Քեմալի դեմ, ում բացարձակապես դուր չեն գալիս այդ կարգի քմահած ձեռնարկումները: Ահա թե ինչու Նազիմը նորից դատապարտվեց զինվորական ատյանի կողմից և այս անգամ բարձրացավ կախաղան: Նա կախվեց 1926 թվականին իր ընկերոց՝ Միություն և Առաջադիմություն Կոմիտեի պարագլուխներից ելամտագետ Զավիդի հետ: Այսպես եղավ ամեն բան:

۱۰

Այստեղ, կարող ենք ասել, ավարտվում է ամոթալի ժամանակագրությունը սուլթան Աբդուլ Համիդի և այն երեք փաշաների, որոնք, նրա հետևից, մինարեթների երկիրը գլորեցին խավարի անհատակ անդունդը: Մարդկանց աչքերը երբեք չեն մոռացել այն, ինչ տեսել են, և ականջները՝ այն, ինչ լսել են: Բայց Պատմությունը բարոյապես շատ շռայլ չէ: Այն ժամանակ, երբ Եվրոպան և ամբողջ աշխարհը բոցավառվում էին երկրորդ անգամ լինելով, գերմանական ռայխի արիացի կանցեր Ադոլֆ Շիտլերը, թելադրված ազնիվ մի ուշադրությունից, Թալաաթ փաշայի աճյունը նվիրեց թուրքական պետությանը, որը ներքին գործերի նախկին նախարարի պատվին կառուցեց շրեղ մի հուշադամբան Ազատության բլու Վրա: Կարծես դա բավական չլիներ այդքան երևելի

մի անձնավորության համար, Անկարայի ծառուղիներից մեկը մկրտվեց նրա անունով, որպեսզի ներկա և ապագա սերունդների օրինությունը իշխի նրա վրա: Յուրաքանչյուրն ստացավ իր բաժինը: Երբ տասնամյակները հաջորդեցին տասնամյակների, տարիները՝ տարիների և սերունդները՝ սերունդների, ենքեր փաշայի նարմինը հետխորհրդային շրջանում հայրենադարձվեց Թաջիկիստանից, որպեսզի մեծ պատիվներով քաղվի հարգանքով ու հիացմունքով համակված մի ամբողջ ժողովրդի առջև՝ գլխավորությամբ Հանրապետության նախագահի, նրա նախարարների և գեներալների: Ձեմալ փաշան՝ միշտ հետին գծի վրա գտնվող այդ նորութավորը, մեծարանքի արժանացավ եղարումում: Նա արդեն ութսուն տարուց ի վեր մահացել էր, երբ աղմուկ-աղաղակով, խելահեղ բացականչություններով և հիացական զեղումներով հարրած ժողովրդի մի մեծ բազմություն ժամադրվեց նրա գերեզմանի առջև՝ գովարանելու համար նրան:

Ինացության եզրին մնացած միամիտ և դատարկ հոգիները անգիտանում և արհանարիում են անցյալի իմաստունների տարեգրու-

թյուններն ու հին ժողովուրդների մատյանները, ուր, իմիջիայլոց, ասված է.

«Արդ, այսպես է, որ վաղ թե ուշ, իսկ հաճախ ավելի վաղ, քան թե ուշ, ճակատագիրը կուրացնում է չար մարդկանց հիշողությունը, խլում նրանցից ամեն պայծառամտություն և վերացնում նրանց տեսողությունն ու լսողությունը: Այնժամ, մնալով կույր, խուլ և համր, նրանք այլևս չեն կարողանա ետ իրենց տեղը դառնալ»:

Ի դժբախտություն բոլորի և ի հուսահատություն վերապրողների, պարզվում է, որ Լեռան ծերունու ոգին դեռևս իշխում է Թուրքիայում:

Իր շարադրանքի այս պահին նա տեսավ, որ բացվում է առավոտը՝ վարդամատն արշալույսը, և, լինելով գաղտնապահ, լռեց:

ЦЕНА  
8(56)  
3/-56t

h<sub>2</sub>